

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

<b>ՓՈՒՆԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ</b>	
ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Մենք Յորենի՛ Պետք Ունինք եւ Ո՛չ Որովի.....	485
<b>ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ</b>	
<b>ԹԱՄԱՐ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ — Հայ Սուրբեր</b>	
Մինչեւ ԺԵ. Ղար (վաւերագիրներ).....	488
ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Աղքատ Ղազարոսին Առակը .....	502
<b>ԱՍՏՈՒԾԱԲԱՆԱԿԱՆ</b>	
<b>ԶԱՐԵՅ ԱՐՔ. ԱԶՆԱԲՈՐԵԱՆ — Հայ Եկեղեցւոյ Հաւատքը</b>	
(Մեկնութիւն Հաւատամքի).....	506
<b>ՊԱՏՄԱ-ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ</b>	
ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՔՍԷԶԵԱՆ — Եկեղեցւոյ Պատմութիւն (թրգմ.) .....	520
<b>ԱՐԽԻՄԱՅԻՆ ՆԻԹԵՐ</b>	
ԽԱԶԻԿ ԲՅՆՅ. ԳՈՌՈՋԵԱՆ — Զրիստոնէութիւնը Իբրեւ Կրօնք .....	524
<b>ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ</b>	
ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ԶԻՖԹՃԵԱՆ — Զրիստոսի Եկեղեցին	
Ղարձեա՛լ Հալածական .....	528
ՄԱԿԱՐ ԱՐԴ. ԱՇԳԱՐԵԱՆ — Ճանապարհորդութեան Հացը (թրգմ.) .....	531
<b>ԳՐԱԽՕՍԱԿԱՆ</b>	
ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃԵԱՆ — «Յօդուածներ եւ Ուսումնասիրութիւններ» .....	533
ԼԵԻՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ — «Անտիոքի Մերձակայ Ռուճի Հովիտի Հայրերը» .....	535
<b>ՁԵՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ</b> .....	541
<b>ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ</b> .....	549
<b>ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ</b> .....	556
<b>ՄԻԶ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ</b> .....	559
<b>ՀԱՐՅԱԶՐՈՅՑ</b> .....	561
<b>ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐՎԱԿՈՒԹԻՒՆ</b> .....	566
<b>ՆՈՐ ՀՐԱՏԱՐՎԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ</b> .....	567
<b>ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ</b> .....	570
<b>ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ</b> .....	571
<b>ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ</b> .....	575

**ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ**

## **ՄԵՆՔ ՅՈՐԵՆԻ՝ ՊԷՏՔ ՈՒՆԻՆՔ ԵՒ Ո՛Չ ՈՐՈՄԻ**

Մայիս ամսուան ընթացքին Անթիլիասի Մայրավանքին մէջ յաջորդաբար տեղի ունեցած ձեռնադրութիւններուն առիթով, Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին կողմէ տրուած պատգամներուն մէջ արտայայտուած մտածումներէն քաղուածք մըն է ներկայ գրութիւնը, զոր կը հրատարակենք Փոխան Խմբագրականի:

Քրիստոնէութիւնը կեանքի որակ է եւ ո՛չ վարդապետութիւն կամ գաղափարաբանութիւն: Հերեւաբար, քրիստոնէայ ըլլալ կը նշանակէ մեր կեանքը ապրիլ, դիպել, քննել ու արժեւորել աւերարանական ճշմարտութիւններու, արժէքներու եւ սկզբունքներու յարաբերաբար: Աստուծոյ Որդին իր կեանքին օրինակով եւ իր կապարած ուսուցումներուն ու պարմած առակներուն ճամբով ցոյց տուաւ կեանքի այն որակը, զոր "Աստուծոյ պապկեր"ին համաձայն սպեղծուած մարդը պարտաւոր է ապրելու, կեանքի այն ճամբան ուրկէ մարդ կոչուած է քալելու, եւ կեանքի այն նպատակը, որուն համար մարդ հրաւիրուած է իր կեանքը կենսագործելու:

Որպէս քրիստոնէաներ, մեր կեանքի արագատյր ընթացքին մէջ անհրաժեշտ է որ երբեմն կանգ առնենք՝ ինքնաքննական ոգիով փեսնելու թէ ո՛ր ենք եւ որքանո՞վ հաւաքարիմ՝ մեր քրիստոնէական հաւաքքին ու ազգային պատկանելիութեան, եւ անոնց հրամայականներուն ու մարտահրաւերներուն:

Արդ, եկէք մեր անհատական թէ հաւաքական կեանքը դիպենք Աւերարանի հերեւեալ երկու առակներու լոյսին փակ:

Առաջին առակը՝ որթապտուկին առակն է (Յհ 15.5-6), ուր Քրիստոս կը թելադրէ որթապտուկին չորցած ճիւղը կտրել, իսկ այն ճիւղը որ պտուղ կու տայ յօտել, որպէսզի դառնայ աւելի պտղաբեր: Երկրորդ առակը՝ ցորենի ու որոմի պարկերն է (Մտ 13.25-40), ուր Քրիստոս կը շեշտէ ցորենը որոմէն բաժնելու հրամայական անհրաժեշտութիւնը:

Մարդկային կեանքի առօրեայէն առնուած այս երկու պարկերները խօսուին են ու թելադրական նաեւ այսօր ու միշտ: Անոնք լուրջ յիշեցումներ ունին կարարելիք մեզմէ իւրաքանչիւրին, եթէ մենք պարտաստ ենք ինքնաճանաչողութեան ու ինքնարժեւորումի ճիգով դիպելու մեր կեանքը:

\* \* \*

Իւրաքանչիւր անհար, կառոյց կամ համայնք որթապտուկ մըն է մեր ազգի մեծ այգիին մէջ, իսկ հոգեւոր եւ աշխարհական պարասխանապտուներ պարփոգականներն են այս այգիին: Անոնց պարտաւորութիւնն է հսկել, ջրփոք կարարել, յօտել եւ ի հարկին կտրել չորցած ճիւղերը եւ աշխարհիւ որ այգիին բերքը ըլլայ առար:

Արդարեւ, ազգին այգիին մէջ կան առար պտուղ տուող որթեր, որոնց նկարմամբ անհրաժեշտ է ցուցաբերել գնահատանք ու հոգածութիւն: Հոն գոյութիւն ունին նաեւ նուազ պտուղ տուող որթեր, որոնք կարիքը ունին յօտելու, որպէսզի իրենց կոչումը առաւելագոյն չափով կարարեն: Ազգի այգիին մէջ կան նաեւ այնպիսի որթեր, որոնք լեցուն են չորցած ճիւղերով: Մեր պարփոգականները իմաստութիւնը ու քաջութիւնը պէտք է ունենան կտրելու այդ չորցած ճիւղերը. այլապէս անոնց ներկայութիւնը պիտի վնասէ պտղապտու ճիւղերուն եւ իրենց շրջապարին:

Թզենիին առակին մէջ (Ղկ 13.6-9), ակնարկելով անպտուղ թզենիին, Քրիստոս նոյն մտածութենէն մեկնած դարձեալ կը յիշեցնէ, թէ պէտք է կտրել զայն:

Այգի մը այգի է ո՛չ թէ իր որթերու քանակով, այլ՝ որակով. ո՛չ թէ իր գեղեցիկ արտաքինով, այլ՝ իր բերքով: Հոն է այգիին արժէքը:

Մենք պտղապտու որթերու պէտք ունինք եւ ո՛չ թէ չորցած ճիւղերու, որքան ալ հմայիչ ըլլան իրենց արտաքինով, ապականիչ ու վնասաբեր են:

Արդ, պէտք է միշտ հոգեմտաւոր ջրփոք կարարել, որպէսզի մեր ազգի այգին միշտ մնայ դալար: Պէտք է նոր ու նուիրեալ պարփոգականներով օժտել մեր այգին, որպէսզի ան միշտ ըլլայ արգասաբեր:

\* \* \*

Յորենի ու որոմի առակը նոյնքան թելադրական է մեր եկեղեցւոյ, մեր կառոյցներուն ու ընդհանրապէս մեր ազգին համար:

Քրիստոս յարակօրէն թելադրեց որոմը հեռացնել ցորենէն, թափել ու փճացնել զայն: Յորենը կեանքի աղբիւր է, իսկ որոմը՝ չարի:

Փոխան ցորենի յաճախ որոմ կը տեսնենք մեր կեանքէն ներս, մեր անմիջական շրջապարին մէջ: Որոմներ, որոնք ո՛չ միայն ցորենը կը հեռացնեն,

այլ նաև իրենց որոմային մտայնությամբ նոր որոմներ կը ցանեն մեր կեանքէն ներս, Հայաստանի թէ Մփիւռքի մէջ: Որոմներ, որոնք կը խեղդեն ցորենը եւ թոյլ չեն տար որ ան աճի եւ բարիք բաշխէ:

Մենք ցորենի՛ պէտք ունինք եւ ո՛չ որոմի:

Եկեղեցին, ազգը ու հայրենիքը հաւաքը ու փեսիլը ունեցող ընտանեակներով ու "անձինք նուիրեալք"ով կը հզօրանան ու կը յաւերժանան: Անոնք մեր կեանքի անդաստանին ցորեններն են: Դժբախտաբար, սակայն, այս փիպի մարդոց բացակայութենէն սկսած ենք փագնապիլ ամէն փեղ: Արդարեւ, հոս ու հոն երեսան եկող փրածութիւնը, բարոյական արժէքներու նահանջը, համագային խնդիրներու նկատմամբ ցուցաբերուած անտարբերութիւնը, հաւաքական շահերուն միակողմանի մօտեցումները, շահադիպական նկատումներով հանգամանք ձեռք ձգելու կերպերը փաստօրէն որոմային մտածելակերպի ու գործելակերպի արտայայտութիւններն են: Նման երեւոյթներ կը խախտեն հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու կշիռը եւ կը շրջեն արժեքափերու համակարգը ու մեր կեանքը կը վերածեն որոմներով լեցուն՝ ոգիէ, որակէ, հաւաքէ, փեսիլէ դափարկ կեանքի:

Քրիստոս միշտ կը թելադրէ մեզի գոյշ ըլլալ ու հեռու մնալ որոմէն. այլ խօսքով՝ գնալունէն, կեղծէն ու չարէն եւ կառչիլ ճշմարիտին, կեանքին, յաւերժականին:

Դարձեալ, իմաստութիւնը ու քաջութիւնը ունի՞նք՝

մեր կեանքէն հեռացնելու որոմը ու փեղ փալու ցորենին.

մեր կեանքի անդաստանը ոսկի ցորենով հարստացնելու եւ ո՛չ թէ որոմով աղքատացնելու:

Այսպէ՛ս պէտք է մտածէ ու գործէ Քրիստոսի հետեւող իւրաքանչիւր անհար, կառոյց կամ հաւաքականութիւն:

Այս հաւաքքով, յանձնառութեամբ ու փեսիլքով պէտք է գործեն Քրիստոսը իրենց "կեանքը, ճշմարտութիւնը եւ ճանապարհը" դարձուցած մեր եկեղեցւոյ սպասաւորները, մեր ազգին ու հայրենիքին բոլոր նուիրեալները:

\* \* \*

Մենք ալ ունեցանք որոմներ. սակայն այդ որոմները քաջօրէն հեռացուցինք մեր կեանքէն ու առաքելութենէն: Մենք ալ ունեցանք չորցած ճիւղեր. սակայն կտրեցինք այդ ճիւղերը: Պիտի շարունակենք մեր կեանքին ու առաքելութեան ընթացքը նոյն հաւաքքով, նոյն վճռակամութեամբ ու նոյն փեսիլքով:

Խորապէս կը հաւաքանք, որ այս մօտեցումով ու յանձնառութեամբ միայն կարելի է հայրենիքը հզօրացնել, եկեղեցին պայծառացնել ու ազգը յաւերժացնել:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

**ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ**

**ՀԱՅ ՍՈՒՐԲԵՐ**

**Մինչև Ժե Դար (Վաւերագիրներ)\***

**1.2 Մ. ԱԻԳԵՐԵԱՆ, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց  
որք կան ի հին տօնացուցի եկեղեցւոյ Հայաստանեայց,  
Հ. 10, Վենետիկ 1814, էջ 145-157:**

**ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ  
Արգարու թագաւորի**

Հ. դեկտ. 31: եւ եւս Հ. եւ Յ. օգոստ. 16: Եւսեքիոս. ա. 13: Խորենացի.  
եւ այլ պատմագիրք հայոց եւ յունաց եւ ասորոց առ հասարակ:

Առաջին՝ի հաւատացեալ թագաւորս աշխարհի՝ աստուածասէր եւ մեծահաւատ արքայն մեր արգար՝ էր արշակունի պարթեւ՝ որդի արշամայ որդւոյ տիգրանայ, թագաւոր ամենայն հայոց աշխարհի՝ մեծի եւ փոքու. որ վասն նորոգելոյ գեղեսիա քաղաք՝ որ եւ ուռհայ, եւ անդ դնելոյ գարքունիս իւր, կոչեցաւ եւ արքայ միջագետաց, եւ անխտիր՝ թագաւոր հայոց եւ ասորոց. որպէս եւ թագաւոր եղեսացւոց, եւ իշխան աշխարհի, կամի ըստ յունաց դօբարքա, այս ինքն իշխան տեղոյ. եւս եւ տինասդիս, այս ինքն հզօր կամ հարուստ իշխան՝ ոռհենայ կամ ոստրոյենայ, որով իմանան գուռհայ կամ զխորձէն գաւառ սահմանակից. կոչեն եւ արքայ աղիարենաց, կամ հաղիարայ միջագետաց՝ սահմանակից ասորեստանեայց. զի ցայն վայրս տարածեալ էր թագաւո-

րութիւն հայոց յաւուրցն տիգրանայ միջնոյ մինչեւ ցթոռն նորա ցարգար: Սա վասն առաւել հեզութեան եւ իմաստութեան, միանգամայն եւ պարթեւական տիոցն, կոչիւր Աւագ այր. զոր ոչ կարելով ուղղախօսել յունաց եւ ասորոց, կոչեցին՝ Աւագար կամ ապկար, աւկարիոս կամ ապկարէս եւ ապակարոս. ուստի եղեւ սովորական անուն նմա Արգար կամ արգարիոս: Յերկրորդ ամի թագաւորութեան սորա՝ ծնաւ փրկիչն մեր յիսուս քրիստոս որդին աստուծոյ՝ թագաւորն թագաւորաց եւ տէրն տէրանց. որ եւ ըստ մարմնոյ ժառանգ աթոռոյն դաւթի. վասն որոյ մեծ էր արդարեւ լինել արգարու ժամանակակից եւ թագաւորակից քրիստոսի. այլ մեծ եւս եղեւ այն, զի արժանի գտաւ յերկարել՝ի թագաւորութեան իւրում մինչեւ ՚ի չափ հասակի կատարմանն քրիստոսի, եւ ըստ նմին առնուլ ըզլուր քարոզութեան նորա, եւ

\* Շար. նախորդ թիւէն:

հաւատալ՝ի նա: Ապա թողեալ զբազմապատիկ զարտաքին գործս արգարու՝ որովք արգոյ գտաւ առաջի հռովմայեցւոց եւ պարսից եւ ամենայն ազգաց, ՚ի կարգ աստուածպաշտութեան նորա փութասցուք:

Դէպ եղեւ արգարու ՚ի պէտս գործոց տէրութեան առաքել դեսպանս ՚ի սահմանս պաղեստինոյ առ մառինոս գործակալն հռովմայեցւոց գերկուս ՚ի գլխաւորաց իւրոց զմարիճար բղեշխն աղճնեաց, եւ զչամշագրամ նահապետ ապահունեաց տոհմին, եւ զանանէ հաւատարիմ սուրհանդակն իւր: Եւ նոցա կատարեալ զգործ պատգամաւորութեան իւրեանց՝ ՚ի դառնալն անտի ելին յերուսաղէմ տեսանել զփրկիչն մեր յիսուս քրիստոս՝ վասն լրոյ համբաւոց սքանչելագործութեանցն. որում ականատես եղեալ՝ եկին պատմեցին արգարու:

Ընդ որ զարմացեալ մեծախորհուրդ արքային, եւ լուսաւորեալ ՚ի վերուստ՝ հաւատաց ճշմարտապէս իր յարդարեւ որդի աստուծոյ. եւ ասէ. այն զօրութիւնք ո՛չ մարդոյ են, այլ՝ աստուծոյ. զի չի՞ք ոք ՚ի մարդկանէ, որ կարէ զմեռեալս յարուցանել, բայց միայն աստուած: Եւ քանզի ապականեալ էր մարմինն իւր ՚ի չարաչար ցաւոց՝ իբր բորոտութեան, որ պատահեցին նմա ՚ի պարսից աշխարհին յառաջ քան զեօթն ամ, եւ ՚ի մարդկանէ ո՛չ եղեւ նմա հնար բժշկութեան, ետ տանել առ փրկիչն աշխարհի թողլթ աղաչանաց՝ զալ բժրչկել զնա ՚ի ցաւոց անտի, օրինակ զայս.

«Արգար արչամայ՝ իշխան աշխարհի, առ Յիսուս փրկիչ եւ բարերար, որ երեւեցար յաշխարհի երուսաղէմացւոց, ողջոյն: Լո՛ւեալ է իմ վասն քո, եւ վասն բժշկութեանդ՝ որ լինին ՚ի ձեռս քո առանց դեղոց եւ արմատոց. զի որպէս ասի, տաս դու կուրաց տեսանել եւ կաղաց զնալ, եւ զբորոտս սրբես, եւ զայսս պիղծս եւ զդեւս հանես. եւ որ միանգամ չարչարեալ են երկար հիւանդութեամ-

բըք, բժշկես. դու եւ զմեռեալս յարուցանես: Եւ իբրեւ լուայ վասն քո զայս ամենայն, եղի ՚ի մտի իմում մի յերկուց աստի. կա՛մ եթէ դու աստուած իցես իջեալ յերկնից, եւ գործես զայդ. կամ թէ որդի աստուծոյ, եւ զայդ առնես: Արդ, վասն այնորիկ գրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս եւ եկեսցես առ իս, եւ բժշկեսցես զհիւանդութիւնս՝ զոր ունիմ ես: Նաեւ լուայ, զի հրէայք տրտնջեն զքէն, եւ կամին չարչարել զքեզ: Բայց քաղաք մի փոքրիկ է իմ, եւ բաւական է մեզ երկուցունցս»:

Պատուէր ետ արգար հրեշտակաց իւրոց. զի թէ ոչ կամեսցի զալ յիսուս, գոնէ բերցեն զկենդանագիր պատկեր փրկչին. եւ առ այս յղեաց ասն ոմանք պատկերահան մի յովհաննէս անուն, որ ըստ այլոց է նա ինքն անանէ սուրհանդակ՝ զոր ասորիք հաննէ կոչէին:

Արդ տարեալ հրեշտակաց զթուղթն արգարու առ յիսուս՝ պատահեցին նմա յերուսաղէմ յաւուր արմաւենեաց: Զայս վկայէ (ասէ խորենացին) աւետարանական բանն, եթէ էին ոմանք ՚ի հեթանոսաց ելելոց յերուսաղէմ. եւ ոչ համարձակեալ անձամբ մատչիլ եւ ասել զպատգամն առ յիսուս, մատեան առ փիլիպպոս, եւ ասեն. տէր կամիմք զյիսուս տեսանել. եւ փիլիպպոս ասէ ցանդրէաս. եւ անդրէաս եւ փիլիպպոս ասեն ցյիսուս: Եւ յիսուս ասէ. եհաս ժամ, զի փառաւորեսցի որդի մարդոյ. որպէս թէ՛ հասեալ է ժամանակ իմ ելանել ՚ի խաչ, որ է ինձ փառք, եւ այնուհետեւ քարոզիլ անուան իմոյ եւ ՚ի հեթանոսս փարօք: Նմին իրի իսկ յայնմ ժամանակի՝ յորում կոչէր զնա արգար, ո՛չ էառ յանձն երթալ տէրն. բայց թղթոյ արժանի արար զնա. որ չէր փոքր պատիւ ծառային իւրոյ արգարու: Եւ այս էր պատասխանի թղթոյն արգարու, զոր գրեաց թումաս առաքեալն հրամանաւ փրկչին ՚ի դիմաց նորա եւ ՚ի բերանոյ:

«Երանի՛ իցէ այնմ, որ հաւատայ

յիս, իբրեւ ոչ իցէ նորա տեսեալ գիս- գի գրեալ է վասն իմ այսպէս- գի որք տեսանեն գիս՝ ո՛չ հաւատասցեն յիս- եւ որ ոչն տեսանեն, նոքա հաւատասցեն եւ կեցցեն: Իսկ վասն այնր, գի գրեցեր դու առ իս՝ գալ ինձ առ քեզ, արժան է ինձ կատարել աստ գամենայն ինչ՝ վասն որոյ առաքեցայ ես: Եւ իբրեւ կատարեցից գայս, ապա համբարձայց առ այն՝ որ առաքեացն գիս- եւ յորժամ համբարձայց, առաքեցից գմի յաշակերտաց իմոց աստի, գի գցաւս քո բժշկեսցէ- եւ կեանս քեզ, եւ որ ընդ քեզ են, շնորհեսցէ»:

Ապա ՚ի գուն գործել հրեշտակաց արգարու գէթ գպատկեր փրկչին առնուլ ՚ի ձեռն պատկերահանի, իբրեւ ՚ի դերեւ ելին ՚ի խորհրդոց իւրեանց, գի ոչ կարէր նկարիչն առնուլ իւրի գծչգրիտ նմանութիւն տեսուն, գթացաւ ՚ի նոսա յիսուս ծածկագէտն ամենայնի, եւ առեալ դաստառակ մի սուրբ՝ եղ ՚ի վերայ աստուածային երեսաց իւրոց- եւ տպաւորեալ ՚ի նմին գկենդանագիր իւր երկրրպագելի՝ ետ նոցա ըստ փափաքանաց արգարու հանդերձ թղթովն:

Ձայս թուղթ երբ (ասէ խորենացին) անան սուրհանդակ արգարու- ըստ որում եւ ըզկենդանագրութիւն փրկչական պատկերին, որ եւ կոչի սուրբ դաստառակ, կամ անձեռագործ պատկեր: Ձորս ընկալեալ արգարու, եւ հաւատով երկրպագեալ՝ մնայր լրման խոստմանց փրկչին աներկբայ յուսով- մինչ գի թէպէտեւ լուաւ գհամբաւ խաչելութեան նորա, ոչինչ թերեհաւատեաց- եւ ՚ի լսել գյարութիւն նորա եւ գհամբարձումն՝ եւս քան գեւս հաստատեցաւ ՚ի վերայ բանից փրկչին գրելոց ՚ի թղթի անդ նորա:

Ապա յետ համբառնարոյ փրկչին մերոյ, եւ իջանելոյ հոգւոյն սրբոյ ՚ի վերնատունն, թովմաս առաքեալ մի յերկոտասանից ՚ի կատարել գբան տեսուն իւրոյ եւ վարդապետի, առաքեաց գմի յեթանասնից՝ որ եւ եղբայր նորա երկուորեակ՝ թաղէոս անուն, ՚ի քաղաքն

եղեսիա, բժշկել գարգար, եւ աւետարանել ըստ բանին տեսուն: Եւ սուրբն թաղէոս եկեալ նախ իջեւանեցաւ ՚ի տուն տուրիայ իշխանին բագրատունեաց, որք էին յազգէ հրէից- եւ յետ ձգելոյ գնա ՚ի հաւատս քրիստոսի՝ հանդերձ երեւելի նշանօք եւ գօրութեամբ, ճանապարհ երաց քարոզութեան աւետարանին- քանզի ել համբաւ նորա ընդ ամենայն քաղաքն, եւ եհաս յունկն արքայի:

Լուեալ արգարու՝ ասէ- նա՛ է՛ վասն որոյ գրեացն յիսուս- եւ իսկոյն կոչեաց գնա- եւ եղեւ ՚ի մտանելն թաղէի՝ տեսիլ մեծ երեւեցաւ արգարու յերեսն թաղէի- եւ յարուցեալ ՚ի գահոյիցն՝ անկաւ ՚ի վերայ երեսաց իւրոց, եւ երկիրեպագ նմա- եւ գարմացան ամենայն իշխանքն՝ որ շուրջն կային- գի ո՛չ գիտացին գտեսիլն: Ասէ ցնա արգար- եթէ դո՞ւ իցես արդարեւ աշակերտ օրհնելոյն յիսուսի, գոր ասաց առաքել ինձ այսր- եւ կարօ՞ղ իցես բժշկել գցաւս իմ: Պատասխանի ետ թաղէ- եթէ հաւատասցես ՚ի քրիստոս յիսուս յորդի աստուծոյ, տացին խնդրուածք սրտի քոյ: Ասէ ցնա արգար- ես հաւատացի ՚ի նա, եւ ՚ի հայրն նորա- վասն որոյ կամեցայ առնուլ գգօրս իմ, եւ գալ կոտորել գհրէայսն՝ որ խաչեցին գնա, եթէ ոչ էի արգելեալ վասն թագաւորութեանն հրուովմայեցոց: Եւ յայսմ բանէ սկիզբն արարեալ թաղէի՝ աւետարանեաց նմա եւ քաղաքի նորա- եւ եղեալ ձեռն ՚ի վերայ՝ բժշկեաց գնա առ ժամայն- նոյնպէս եւ գարդիու պատագրոս, այս է ոտնացաւ եւ անդամալոյծ՝ իշխան քաղաքին եւ պատուական յամենայն տանն արքունի, նաեւ գամենայն՝ որ էին ՚ի քաղաքին հիւանդք եւ ախտաժէտք, բժրչկեաց:

Եւ հաւատացին ամենեքեան, եւ մկրտեցաւ ինքն արգար եւ ամենայն քաղաքն- եւ գդուրս տաճարաց կուոցն փակեցին- եւ որ ՚ի բագինն եւ ՚ի սեանն կային պատկերքն, ծածկեալ պատեցին եղեգամբք- եւ ոչ գոք ածէր բունու-

Թեամբ 'ի հաւատս՝ ոչ թաղէոս առաքեալն, եւ ո՛չ արգար թագաւորն. բայց օրըստօրէ յաւելեալ 'ի հաւատացեալսն՝ բազմանային քրիստոնեայք: Իսկ առաքելոյն ձեռնադրեալ այնուհետեւ 'ի վերայ եղեսացւոց եպիսկոպոս փոխանակ իւր զխոյրարարն արգարու՝ աղղէ անուն, թողու զնա առ արքայի. եւ իւր առեալ հրովարտակ յարգարէ վասն աշխարհի հայոց մեծաց, զի ամենքեան լուիցեն աւետարանին, զայ առ սանատրուկ քեռորդի նորին, զոր կարգեալ էր 'ի վերայ աշխարհին եւ զօրացն:

Բայց երանելի թագաւորն արգար վառեալ օր քան զօր 'ի սէրն քրիստոսի՝ ոչ բաւական համարեցաւ զղարձ աշխարհին իւրոյ, այլ փափաքէր քարոզ լինել ճշմարտութեան առ ամենայն ազգրս, առաւելապէս առ հռովմայեցիս բարեկամս իւր եւ առ պարսիկս եւ առ ասորեստանեայս. եւ զի յառաջագոյն իսկ ընտանութիւն մեծ ունէր ընդ օգոստոս կայսեր, եւ ընդ յաջորդի նորա տիրերեայ, յօժարեցաւ զրել թողլոթ առ տիրեր կայսր. որ ունի օրինակ գայս:

«Արգար արքայ հայոց՝ տեառն իմուժ տիրերի կայսեր հռովմայեցւոց՝ խնդալ: Գիտելով իմ, թէ ոչինչ ծածկի 'ի քումմէ թագաւորութենէդ, այլ իբրեւ զմտերիմ ոք աւելի եւս իմացուցանեմ 'ի ձեռն զրոյ: Զի հրէայք՝ որ բնակեալ են 'ի գաւառս պաղեստինացւոց, ժողովեալ խաչեցին զքրիստոս առանց իրիք յանցանաց՝ 'ի վերայ մեծամեծ երախտեացն, զոր արար առ նոսա՝ նշանս եւ սքանչելիս, մինչեւ զմեռեալս անգամ յարուցանել. եւ գիտեա՛, զի զօրութիւնքս այս ո՛չ են սոսկ մարդոյ, այլ՝ աստուծոյ: Զի եւ 'ի ժամանակին՝ յորում խաչեցինն զնա, արեգակն խաւարեցաւ, եւ երկիր շարժեալ տատանեցաւ. եւ ինքն յետ երից աւուրց յարուցեալ 'ի մեռելոց՝ եւ երեւեցաւ բազմաց: Եւ այժմ յամենայն տեղիս անուն նորա՝ 'ի ձեռն աշակերտաց նորա սքանչելիս մեծամեծս կատարէ. որ եւ առ իս ինքն եցոյց յայտնապէս: Եւ

արդ այսուհետեւ տէրութիւնդ քո գիտէ, որ ինչ արժան է հրամայել 'ի վերայ ժողովրդեանն հրէից, որք գայն գործեցին, եւ զրել ընդ ամենայն տիրեգերս, զի երկրպագեցեն քրիստոսի իբրեւ ճշմարիտ աստուծոյ: Ո՛ղջ լեր»:

Առ այսպիսի պանծալի նամակ աստուածասէր արքային արգարու, որ յայտնապէս քարոզ լինէր ճշմարիտ աստուածութեանն քրիստոսի, ոչինչ ընդդէմ կարացեալ ասել կայսեր՝ որ գիտակն էր տիրեգերահռչակ անցիցն անցելոց, հեթանոսական մտօք յանձն առնոյր ճանաչել զյիսուս իբրեւ զմի 'ի սուտ աստուածոց իւրոց. բայց տակաւին ոչ իշխէր առնել եւ գայն առանց հաւանութեան ծերակուտին. վասն որոյ արար պատասխանի ծաղրական առ արգար ըստ օրինակիս ըստ այսմիկ:

«Տիրերիոս կայսր հռովմայեցւոց՝ արգարու հայոց թագաւորի խնդալ: Զթողլոթ մտերմութեան քո ընթերցան առաջի իմ. վասն որոյ շնորհակալութիւն 'ի մէնջ քեզ հասցէ. թէպէտեւ 'ի բազմաց մեր լուեալ յառաջագոյն, եցոյց եւ պիղատոս ստուգապէս վասն նշանաց նորա, եթէ յետ յարութեանն 'ի մեռելոց հաւատարիմ եղեւ բազմաց՝ թէ աստուած է. վասն որոյ եւ ես կամեցայ առնել զայդ՝ զոր եւ դու խորհեցար: Այլ քանզի սովորութիւն է հռովմայեցւոց՝ աստուած 'ի հրամանէ թագաւորի միայնոյ ոչ նստուցանել, մինչեւ ոչ փորձեալ քննեսցի նա 'ի սինկղիտոսէ. վասն որոյ եւ իմ յայտնեալ զբանս գայս սինկղիտոսին՝ արհամարհեաց սինկղիտոսն. զի ոչ քննեցաւ նա յառաջագոյն 'ի նմանէ: Այլ մեք տուաք հրաման ամենայն ումեք, որո՛ւմ եւ հաճոյ թուեսցի յիսուս, ընկայցին զնա ընդ աստուածս. եւ մահ այնոցիկ սպառնացեալ՝ որ չարախօս կայցեն զքրիստոնէից: Եւ վասն ժողովրդեանն հրէից՝ որ յանդգնեցան 'ի խաչ հանել զնա, զորմէ լսեմ՝ թէ ո՛չ արժանի խաչի էր նա, այլ պատուի եւ երկրպագութեան, յորժամ առից պարապումն՝ 'ի պատերազմէս



սպանիացւոց ապրստամբողաց յինէն, քննեալ հատուցից նոցա զարմանն»:

Ընթերցեալ արգարու գայս զիր կայսեր՝ վառեցաւ ՚ի նախանձ փառացն քրիստոսի ընդդէմ անմիտ խորհրդոց ծերակուտին, միանգամայն եւ ընդդէմ չարեացապարտին պիղատոսի՝ որ արդարացուցեալ էր զանձն առաջի կայսեր վասն որոյ յաւել գրել միւս եւս նամակ ճարտար՝ օրինակ գայս:

Աբգար արքայ հայոց՝ տեառն ի մոլմ տիրերի կայսեր հռովմայեցւոց խնդալ: Ձթուղթ գրեալ ըստ արժանի քոյոյ տէրութեանդ տեսի. եւ ընդ հրաման մտածութեանդ քոյ ուրախացայ: Եւ եթէ ոչ ցասնուցուս ինձ, գործ սինկղիստոսիդ յոյժ այպանելի է. քանզի առ դոսա ՚ի քննութենէ մարդկան տուեալ լինի աստուածութիւնն. եւ արդ այսուհետեւ եթէ ոչ լինիցի հաճոյ աստուածն՝ մարդոյն, աստուած լինել նա ո՛չ կարէ. եւ իբրեւ յայսմանէ՝ մարդոյն արժան է քաւել զաստուածն. (այս է դէմ ընդդէմ իսկութեան աստուածութեան. զի աստուած է քաւիչ կամ սրբիչ մարդոյ. եւ ո՛չ է մարթ զհակառակն խորհել): Բայց քեզ տեառն իմոյ հաճոյ թուեցի առաքել գայլ ոք յերուսաղէմ փոխանակ պիղատոսի. զի լուծցի նա անարգանօք յիշխանութենէն՝ յոր կարգեցեր զնա. վասն զի արար զկամս հրէիցն, եւ խաչեաց ըզքրիստոս ՚ի տարապարտուց առանց քոյոյ հրամանի: Ողջ լինել քեզ ըղձամ»:

Ձայս գրեալ արգարու՝ զհաւասար թղթոյն եզ եւ ՚ի դիւանի իւրում ՚ի յիշատակ ճշմարտութեան առ յապայս, որպէս եւ զայլսն: Եւ յաւուրսն յայնոսիկ առիթ առեալ եւ ՚ի բանից ներսէհի մանկահասակ արքայի ասորեստանեաց որդւոյ արտաշիսի պարսից արքայի՝ գրեաց եւ առ նա ՚ի բարերուն գայս ինչ:

«Աբգար արքայ հայոց՝ որդւոյ իմոյ ներսէհի խնդալ: Ձգիր ողջունի քոյոյ տեսի, եւ զպերոզ լուծի ՚ի կապանաց, եւ զվնաս նորա թողի. եւ եթէ կա՛մ իցէ քեզ, կարգեսցես զնա ՚ի վերակացութիւն

Նինուէի, որպէս եւ կամիս: Այլ վասն այնր՝ զի գրեցեր առ իս, թէ տուր ածել զայրդ բժիշկ, որ զնշանող առնէ, եւ քարոզէ այլ աստուած՝ որ ՚ի վեր է քան զհուր եւ զջուր, զի տեսից եւ լուայց դմա. նա ո՛չ էր բժիշկ ըստ արուեստի մարդկան, այլ՝ աշակերտ էր որդւոյն աստուծոյ՝ արարչի հրոյ եւ ջրոյ. եւ վիճակ հասեալ ՚ի կողմանս հայոց առաքեցաւ: Բայց յրնկերաց նորա գլխաւորաց՝ սիմովն անուն (այն է կանանացի), նա ՚ի կողմանս պարսից առաքեալ է խնդիր արարեալ՝ լուիցես նմա, յորժամ եւ հայրն քո արտաշէս. եւ նա բժշկեսցէ զամենայն հիւանդութիւնս. եւ ճանապարհ կենաց ցուցցէ»:

Յաւել գրել աստուածասէր թագաւորն եւ առ արտաշէս արքայ պարսից զիր յորդորական վասն բանիցս այսոցիկ՝ օրինակ գայս.

«Աբգար արքայ հայոց՝ արտաշիսի եղբօր իմում պարսից արքայի խնդալ: Գիտեմ, զի ա՛րդ լուեալ է քո վասն յիսուսի քրիստոսի որդւոյն աստուծոյ, զոր խաչեցին հրէայքն. որ յարեաւ ՚ի մեռելոց, եւ առաքեաց զաշակերտսն իւր ընդ ամենայն տիեզերս՝ ուսուցանել ընդհանուր: Եւ մի յաշակերտաց նորա գլխաւորաց՝ որ սիմովն անուանի, է ՚ի կողմանս քոյոյ տէրութեանդ. արդ խնդիր արարեալ գտցես զնա. եւ նա բժշկեսցէ զամենայն ախտս հիւանդութեան՝ որ ՚ի ձեզ. եւ ճանապարհ կենաց ցուցանէ. եւ հաւատացես բանի նորա դու եւ եղբարք քո, եւ ամենքեան՝ որ հնազանդին քեզ կամաւոր: Ձի ախորժելի է ինձ զձեզ ըստ մարմնոյ ազգականս (յարշակունի տանէ պարթեւաց)՝ լինել ինձ մտերիմս հարազատս եւ ըստ հոգւոյ»:

Եւ մինչդեռ պատասխանի այսց թղթոց ոչ էր ընկալեալ՝ վախճանի քրիստոսասէր եւ բարեպաշտ արքայն արգար, եւ փոխի յերկնից թագաւորութիւնն, յամի տեառն՝ ՚ի ծննդենէ անտի փրկչին 37, կամ ըստ հասարակ հաշուի, 33. այն ամերորդ էր քրիստոնէութեան նորա, եւ

երեսներորդ ութերորդ՝ թագաւորութեան իւրոյ: Զոր բարձեալ արքունի փառօք՝ հանդերձ սաղմոսիւք եւ օրհնութեամբ թաղեցին հաւատացեալք ՚ի քաղաքի անդ նորա յեղեսիա՝ առաջնորդութեամբ սուրբ հայրապետին աղղէի-իսկ թէ զի՛նչ եղեւ յաւուրս յաջորդաց նորա, ունիս տեսանել ՚ի վարս սրբոյն աղղէի, եւ սուրբ առաքելոյն թաղէի:

Այլ արժան է ՚ի սմին վայրի յիշատակել եւ զբարեպաշտուհին հեղինէ գլխին արգարու՝ որ էր տիկնաց տիկին՝ ՚ի թագաւորութեան հայոց, եւ հաւատացեալ եւ մկրտեալ ընդ արգարու առն իւրում՝ փայլեաց առ նովալ եւ յետ նորա ամենայն կարգօք աստուածապաշտութեան ՚ի քրիստոս: Իսկ յորժամ սանատրուկ արքայ մաշեաց զամենայն արու գաւակ տանն արգարու, եւ զաղկուհուսն հանեալ յեղեսիոյ՝ յղեաց բնակել ՚ի կողմանս հաշտենից, առաքեաց եւ զթագուհին հեղինէ յառանձին կալուած իւր ՚ի քաղաքն խառան՝ ՚ի վերայ թողլով նմա գտիկնութիւնն ամենայն միջագետաց, փոխանակ բարեացն՝ զոր գտեալ էր ՚ի ձեռն նորա յարգարէ: Այս հեղինէ (ասէ խորենացին) զարդարեալ հաւատովք՝ որպէս եւ զայլ իւր զարգար, ո՛չ հանդուրժեաց բնակել ՚ի մէջ կռապաշ-

տիցն: այլ չոգաւ յերուսաղէմ յաւուրս կղողեայ ՚ի սովին՝ զոր մարգարէացաւն ազարոս: եւ տուեալ զամենայն զգանձս իւր յեգիպտոս՝ զնեաց ցորեան բագում յոյժ, եւ բաշխեաց ամենայն կարօտելոց որում վկայէ եւ յովսեպոս: որոյ եւ շիրիմ նշանաւոր կայ առաջի դրանն յերուսաղէմ մինչեւ ցայսօր ժամանակի:

՚ի դնիլ այսմ, ուր խնդիրք լինին առ իմաստունս վասն գիւտի սուրբ խաչին առ հեղինէ զշխոյիւ մարբն կոստանդիանոսի, եւ ոմանք պնդեն յառաջագոյն լինել զայն գիւտ, կարի ՚ի դէպ զայր մերոյն հեղինեայ թագուհուս այն զործ պանծալի: բայց մեք ոչ կամեցաք ընդ կարծեօք արկանել զհասարակաց կարծիս: զորմէ չէ՛ տեղույս ասել: Կարճեմք եւ զայլ բանս պէսպէս յաղագս արգարու: զորս լիով գտցես ՚ի պատմութեան հայոց եւ ՚ի ծանօթութիւնս նորա: Շա՛տ է մեզ՝ ցայս վայր ասացեալս ընդ խորենացուոյն յաղագս վարուց երանելի թագաւորիս մերոյ: այն է ըստ բանից տէր խորայէլի, «Բարեաց արմատն, եւ առաջին հաւատացեալն ՚ի քրիստոս յագգէ հեթանոսաց: անդրանիկն ամենայն բարեպաշտ թագաւորաց, ցանկալին երկնաւորաց եւ երկրաւորաց, արգարիոս արքայն հայոց մեծաց»:

### 1.3 G. BAYAN, Le syntaxaire arménien de Ter Israël, *Patrologia Orientalis*, 18,1, էջ [830-833]

(Այս յայսմատորքը պատրաստուած է Կիրակոս Արեւելցիի կողմէ, 1269 թ.ին, տեսնել նշանաւոր պոլլանտիսք Հ. Իւկօ ՉԱՆԵԹԹԻԻՆ յօդուածը,

U. ZANETTI, *Apophtegmes et histoires édifiantes dans le syntaxaire arménien*, *Analecta Bollandiana* 105 (1987), էջ 167-199):

Քաղոցի ԻԳ եւ Դեկտեմբերի ԼԱ: Տօն է Արգարու թագաւորին Հայոց եւ Ասորոց:

Անդրանիկն ամենայն հաւատացելոց թագաւորաց, բարեպաշտօն Արգարիոս, ըստ մարմնոյ թագաւորակից է Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: զի յառաջին ամին թագաւորութեանն Ար-

գարու ծնաւ Քրիստոս ի Մարիամայ ի Բեղղէհէմ Հրէաստանի: Եւ է սա թագաւոր Հայոց եւ Ասորոց, եւ էր այր իմաստուն եւ հանճարեղ, ազգաւ Արշակունի:

Դէպ եղեւ սմա երթալ յերկիրն Պարսից եւ խաղացուցանել զԱրտաշէս արքայն Պարսից եւ գեղբայր նորա, զի ժխորեալ էին ընդ միմեանս վասն թագաւորութեանն, եւ ապա պատահեաց նմա ցաւս գոր ոչ կարացին օգնել նմա բժիշկքն:

Իսկ յայնմ ժամանակի Քրիստոս ի Հրէաստանի բժշկութիւն կատարէր առանց դեղոց եւ արմատոց: Եւ լուեալ Աբգարու առաքէ զԱնանիա սուրհանդակ իւր, եւ այլ արս փառաւորս ընդ նմա, եւ գրեաց առ Յիսուս այսպէս. Աբգար Արշամայ, իշխան աշխարհաց, առ Յիսուս փրկիչ եւ բարերար, որ երեւեցար յաշխարհիդ Երուսաղեմացոց ողջոյն: Լուեալ իմ վասն քո եւ վասն նշանացդ զոր առնես, զի որպէս ասեն, զկոյրս բանաս դու, զբորոտս սրբես, խլից լսել տաս, զդեւս պիղծս հալածես, զկաղս գնացուցանես, եւ գայլ ախտս անբժշկելիս ողջացուցանես, նա եւ ըզմեռեալս յարուցանես դու: Եւ իմ գմտաւ ածեալ մի յերկուց. կամ աստուած ես դու իջեալ յերկնից գործես զայդ, եւ կամ որդի ես դու Աստուծոյ որ կատարես զայդ: Նա եւ լուայ եթէ Հրէայք տրտընջեն գքէն, քաղաք մի փոքրիկ եւ գեղեցիկ է իմ, եւ բաւական է երկոցունցս. աղաչեմ գքեզ գալ եւ լինել ընդ մեզ:

Եւ իբրեւ գնացին հրեշտակքն Աբգարու, պատահեցան յայնմ ժամու՝ յորժամ գայր Յիսուս յաւանակաւ յԵրուսաղէմ, եւ մանկունքն աղաղակէին. Ով սաննա, օրհնեալ որ գաս յանուն Տեառն: Եւ իբրեւ հանդարտեցին ամբոխն՝ ծառայքն Աբգարու մատեան առ Փիլիպպոս առաքեալն եւ ասեն. Տէր կամիմք զՅիսուս տեսանել: Եւ Փիլիպպոս ասաց Անդրէի եւ երկոքինն ետուն զթուղթն Աբգարու եւ զընծայսն ցՅիսուս, եւ պատմուծան առանց կարանի:

Եւ Յիսուս ասաց. Եհաս ժամ զի փառաւորեսցի որդի մարդոյ: Եւ հրամայեաց Թումայի գրել այսպէս. Երանի այնմ որ ոչ իցէ տեսեալ զիս եւ հա-

ւատասցէ յիս. զի գրեալ է վասն իմ այսպէս. Որք տեսանեն զիս՝ ոչ հաւատան յիս, եւ որք ոչն տեսանեն նոքա հաւատասցեն եւ կեցցեն: Փոքր ինչ ժամանակ վասն մատակարարութեան իրիք առաքեցայ աստ, ապա վերացայց առայն որ առաքեացն զիս, եւ յայնժամ զմի յաշակերտաց իմոց առաքեցից առ քեզ կեանս տալ քեզ եւ որոց ընդ քեզ են: Եւ առաքեաց ընդ թղթոյն զանձեռագործ պատկերն իւր ի սուրբ դաստառակին:

Եւ յետ յարութեանն Քրիստոսի Թաղէոս առաքեալն հրամանաւ Հոգւոյն սրբոյ, եկն յՈւռհայ եւ եմուտ ի տուն Տուբիայ հրէի, եւ բժշկեալ գնա ի չար ցաւոց: Եւ լուեալ Աբգարու իմացաւ թէ նա է զոր խոստացաւ նմա Յիսուս, եւ իսկոյն կոչեաց զառաքեալն: Եւ ընդ մտանելն նորա՝ տեսիլ սքանչելի երեւեցաւ յերեսս առաքելոյն: Եւ անկեալ թագաւորին ի գահոյցն երկիր եպագ առաքելոյն, եւ եղեալ Թաղէոսի զձեռն ի վերայ գըլխոյն Աբգարու՝ բժշկեաց գնա անուամբն Քրիստոսի, բժշկեաց եւ զամենայն հիւանդս քաղաքին, եւ մկրտեաց զթագաւորն եւ զբազմութիւնս քաղաքին, եւ շինեաց նոցա եկեղեցիս. եւ ձեռնադրեաց զԱղղէ զաշակերտն իւր եպիսկոպոս քաղաքին, եւ փոխանակ իւր եթող անդ, եւ գրեաց կանոնս եւ ետ ի ձեռն Աղղէի:

Եւ իւր առեալ հրովարտակ յարքայէ զի ամենեքեան լուիցեն աւետարանի նորա, գայ ի Հայս առ Սանատրուկ քուերորդի Աբգարու, զոր կացուցեալ էր ի վերայ աշխարհին եւ զօրաց:

Իսկ թագաւորն Աբգար եղեւ այր առաքելական, եւ ստացաւ շնորհս բժշկութեան, քարոզէր ամենեցուն զՔրիստոս, խորտակէր զկուռս, փակէր զգրուես մեհենաց: Գրեաց առ Տիրերիոս կայսր Հռոմայ ամբաստանութիւն զՊիղատոսէ որ ունկնդիր եղեւ Հրէիցն եւ ետ խաչել զՔրիստոս. վասն որոյ սպան կայսրն զՊիղատոս, եւ ետ իշխանութիւն որք կամին պաշտել զՔրիստոս՝ պաշտեսցեն համարձակ:

Գրեաց առ Արտաշէս պարսից արքայն, եւ առ Ներսէճ մանուկ արքայ Բաբելոնի եւ յանձն արար նմա զառաքեալն Սիմոն, զի մի՛ ոք կացցէ հակառակ նորա

քարոզութեանն: Եւ այսպէս փոյթ էր ի հաւատս, եւ կացեալ բարեպաշտութեամբ՝ հանգեալ ի Քրիստոս Դեկտեմբերի ԼԱ, թագաւորեալ ամս քառասուն:

**1.4 Գիրք որ կոչի Այսմաւորք, որ պարունակէ յինքեան զճառս սրբոց եւ զնահատակութիւնս երանելի մարտիրոսացն եւ վկայիցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ**

(Գրիգոր Խլաթեցիի խմբագրութիւնն է, 15-րդ դար),

**հրատ. Յ. Մարգուանեցի, Կոստանդնուպոլիս 1730, էջ 281-282:**

Քաղոցի ԻՊ, եւ Դեկտեմբերի ԼԱ.: Տօն է Արգարու Թագաւորին Հայոց:

Աստուածասէր եւ մեծահաւատ արքայն հայոց արգարիտս՝ ըստ մարմնոյ թագաւորակից էր քրիստոսի աստուծոյ մերոյ: Քանզի յառաջին ամին թագաւորութեանն արգարու ծնաւ քրիստոս ՚ի սուրբ կուսէն մարիամու եւ յետ Լ ամաց մկրտեցաւ քրիստոս ՚ի յորդանան գետ ՚ի յովաննու եւ ապա սկսաւ առնել նշանս եւ արուեստս սքանչելեօք: Ձոր լուեալ արգար հաւատաց ՚ի նա վաղվաղակի թողեալ զկռապաշտութիւնն: Եւ զի ունէր զնա ցաւ ուրկութեան եւ ո՛չ զոյր հնար բժշկութեան. վասն որոյ առաքեաց արգար զանանէ փառաւոր նախարարն իւր զտէրն ապահունեաց՝ այլ եւս ժ պատուական արամբք մեծագին ընծայիւք եւ նուիրօք: Գրեաց առ յիսուս եւ թողիթ հաւատոյ՝ եւ աղաչեաց զալ բժշկել զնա ՚ի չարաչար ցաւոցն եւ լինել առ նմա: Յղեաց եւ ընդ անանիեայ պատկերահան մի յոհաննէս անուն: Ձի թէ ո՛չ կամիցի յիսուս զգալն իւր առ արքայն, նկարեցեն զպատկերն նորա եւ բերցեն նմա: Եւ ՚ի գալն անանեայ եւ ՚ի հասանիլն յերուսաղէմ. յաւուր զալստեան ծաղկազարդին՝ որ էջ իշովն գառ ՚ի վայր լերինն ձիթենեաց ՚ի գեղսամանի: Եւ անտի ել յաւանակաւ ՚ի քաղաքն երուսաղէմ. եւ զնացեալ եմուտ ի տաճարն սողովմոնի.

եւ ելեալ ՚ի տաճարէն զնաց ՚ի տունն զամաղիէլի օրէնսուսոյց վարդապետի. որ էր եղբայր նիկողիմոսի զաղտ աշակերտին յիսուսի. զի նա՛ մեծարեաց զՅիսուս եւ տարաւ ՚ի տուն իւր ՚ի տաճարէն: Իսկ անանէ առաքեաց ՚ի պատուաւորաց իւրոց առ աշակերտսն յիսուսի, հարցանել ցնոսա թէ զիա՞րդ տեսանեմք զքրիստոս: Ըստ յոհաննու որ ասէ, էին անդ եւ հեթանոսք ոմանք յեկելոց անտի. որք մատեան առ փիլիպպոս եւ ասեն. տէր՝ կամիմք զՅիսուս տեսանել. եւ փիլիպպոս ասէ ցանդրէաս: Անդրէաս եւ փիլիպպոս ասեն ցյիսուս. եւ մոռծին զնոսա առ յիսուս. եւ անդ ետես անանէ եւ իւրքն՝ ընդ նմա ցյիսուս ՚ի տան զամաղիէլի: Եւ յիսուս ընկալաւ զնոսա ուրախութեամբ եւ ասաց: Եհաս ժամանակ՝ զի փառաւորեսցի որդի մարդոյ եւ յարուցեալ կանգնեցաւ անանէ. եւ ետ զթողիթն՝ երկրպագեաց եւ ասաց զողջոյնն արքայի առաջի յիսուսի. եւ յիսուս օրհնեաց զնա եւ զթագաւորութիւնն նորա: Եւ հրամայեաց թումայի գրել նմա պատասխանի՝ եւ երանեաց զարգար վասն հաւատոյ նորա եւ ասաց, թէ փոքր ինչ ժամանակ եմ յաշխարհի. ապա վերանամ յերկինս առ հայրն իմ: Յայնժամ առաքեմ առ քեզ զմի ոմն յաշակերտաց

իմոց՝ տալ քեզ կեանս՝ եւ որոց ընդ քեզ են: Առաքեաց ընդ թղթոյն՝ եւ գանձեռագործ պատկերն իւր՝ նկարեալ ՚ի սուրբ դաստառակին: Ձոր էարկ տէրն մեր յիսուս քրիստոս գաստուածային երեսօքն իւր ՚ի տան գամաղիէլին: Եւ բերեալ զայն ետուն արգարու փոխանակ տեառն. գոր ետես բարեպաշտ արքայն՝ եւ յոժ բերկրեցաւ՝ եւ արկեալ գերեսօքն՝ համբուրէր Ջերմեռանդ սիրով եւ հաստատուն հաւատով. որով առողջացաւ կէս մարմնոյն ՚ի ցաւոց անտի: Եւ այնպէս համարեցաւ արգար՝ եթէ գքրիստոս ետես մարմնով: Եւ յետ համբարձմանն քրիստոսի եւ իջման հոգւոյն սրբոյ ՚ի դասս առաքելոցն, զինու գեղարդեանն եւ աստուծոյ հոգւոյն՝ եկն առաքեալն թաղէոս ՚ի տունն տուրիայի առն հրէի եւ բժշկեաց, զի պատգարոս էր: Եւ լուեալ արգարու ասաց թէ՛ սա՛ նա՛ է գոր խոստացաւ առաքել ինձ քրիստոս: Եւ յղեալ կոչեաց առ ինքն զսուրբ առաքեալն: Եւ յորժամ եմուտ թաղէոս առ արգար. յարուցեալ արքայն ՚ի գահոյից իւրոց երկիրեպագ թաղէոսի եւ օրհնեցաւ ՚ի նմանէ՛ զի նշան սքանչելի ետես յերեսս նորա եւ թագ ոսկի իրբեւ զթագաւորի ՚ի գլուխն թաղէոսի: Եւ ձեռն եղեալ թաղէոս ի գլուխն թագաւորին փարատեաց ՚ի նմանէ անուամբն քրիստոսի զցաւն գողի: Եւ ապա մկրտեալ զթագաւորն՝ բորորովին բժշկեաց զնա ՚ի չար ցաւոցն: Նոյնպէս՝ եւ քաղաքացիքն ամենայն՝ հաւատացին ՚ի քրիստոս եւ մկրտեցան: Ծինեաց եկեղեցիս եւ ձեռնադրեաց քահանայս եւ պաշտօնեայս: Ձեռնադրեաց եւ զաղղէ կերպասագործն որ էր մի հնիցն ընդ իւր եպիսկոպոս: Եւ եթող փոխանակ իւր՝ առաջնորդ քաղաքին: Եւ ինքն առեալ հրովարտակս յարքայէն արգարէ՛ զի ամենայն ոք հնազանդեսցի աւետարանին քրիստոսի քարոզութեամբն թաղէոսի: Եւ զիմեալ ել ՚ի վերին հալք առ սանատրուկ արքային որ էր քեւորդի արգարու: Եւ աստուածասէր թագաւորն արգար՝ եղեւ պատմօղ բա-

նին կենաց առաքելաբար եւ առնէր նշանըս եւ արուեստս բժշկութեան: Գրեաց թուղթ առ տիրեր կայսրն հռոմայ՝ զի հրաման տացէ յամենայն գաւառս տէրութեան իւրոյ պաշտել աստուած գլխուս քրիստոս՝ զծնեալն ՚ի բեթլէհէմ ՚ի սուրբ կուսէն մարիամայ: Ձանարգեալն ՚ի պիղատոսէ եւ գիսաչեալն ՚ի հրէից: Գրեաց եւ առ արչաւիր արքայն պարսից որ էր ազգական իւր՝ զնոյն բանսն՝ եւ յանձն արար նմա զսիմոն կանանացին. այս է զշմաւոն նախանձայոյցն՝ զորդին յովսեփայ՝ զեղբայրն յակոբայ՝ տեառն եղբօրն: Ձնա յանձնեաց թագաւորն յարչաւիր արքայն լսել զքարոզութիւն նորա: Նոյնպէս եւ առ ներսեհ մանուկ արքայ բարեկացւոց գրեաց արգար հնազանդ լինիլ քարոզութեան աւետարանին՝ եւ պաշտել գքրիստոս աստուած: Եւ այնպէս փոյթ յօժարութեան ունէր բարեպաշտն արգար յամենայն տեղիս քարոզել զարքայութիւնն քրիստոսի: Ձի մի ընդդիմութիւն կրեսցէ աւետարանին քրիստոսի ՚ի քարոզութեանն իւրում: Վասն որոյ եւ վաղվաղակի թռեաւ յամենայն ծագս տիեզերաց աւետարանն քրիստոսի. եւ ընկալան ամենայն ազգք եւ լեզուք՝ եւ ուսան զօրէնս գաստուածգիտութեան: Եւ յետ այսպէս կարգաւորելոյն գկեանս իւր եւ զաշխարհս բարեպաշտն եւ առաջին հաւատացեալն ՚ի քրիստոս յազգաց հեթանոսաց՝ անդրանիկն ամենայն թագաւորաց քրիստոսնէից՝ ցանկալին հրեշտակաց եւ մարդկան՝ թագաւորն արգար: Բարի վարուք կեցեալ եւ ալեւորեալ հանգեաւ ՚ի քրիստոս եւ փոխեցաւ յանանց թագաւորութիւնն ՚ի քաղոցի ԻԳ: Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. եւ աղօթիւք նորա քրիստոս աստուած, ողորմեա՛ ապուշեիցի մահտեսի յարութիւնին եւ ծնողացն մահտեսի մարտիրոսին եւ մօրն մահտեսի մարգարտին. եւ ամենայն զարմիցն ասացէք Աստուած ողորմի՛ որ եղեւ պատճառ եւ ձեռննտու վասն տպեցման սուրբ մատենիս. եւս առաւել ստացողի զրոյս:

### 1.5 «Տէր-Իսրայէլի» յայտնաւորքը, PO 5, 3, էջ [46-49]:

Նաւասարդի Զ եւ Օգոստոսի ԺԶ: Տօն է փոխման ամենօրինեալ աստուածածնի,  
եւ յայսմ աւուր Քրիստոսի Աստուծոյ մերոյ սուրբ  
եւ պատուական դաստառակին որ առ Արգար:

Թագաւորն Հայոց եւ Ասորոց Աբ-  
գար լուաւ ի հաւատարմաց իւրոց եթէ  
Քրիստոս յերկրին Հրէաստանի բազում  
բժշկուլթիւնս առնէ առանց դեղոց եւ  
արմատոց. զկուրաց աչս բանայ, զկազս  
զնացուցանէ, զբորոտս սրբէ, զդեւս  
հանէ, զմեռեալս յարուցանէ, եղ ի մտի  
իւրում եթէ Աստուած է որ գայս գործէ:  
Գրեաց առ նա զիր աղաչանաց զի եկեալ  
բժշկեսցէ զնա, զի ախտացեալ էր մարմ-  
նով: Եւ առաքեաց զԱնանէ զհաւատա-  
րիմ իւր ընդ նմին եւ զՅոհաննէս նկարիչ  
եւ պատկերահան զի թէ ոչ գայցէ բեր-  
ցեն նմա զպատկեր նորա:

Եւ երթեալ արանցն յԵրուսաղէմ  
հանդիպեցան այն աւուր որ Փրկիչն  
յաւանակաւ եմուտ յԵրուսաղէմ. եւ  
ծերքն եւ տղայքն յառաջ ելեալ ասէին.  
Ովսաննա օրհնեալ որ գասդ յանուն  
Տեառն:

Եւ ելեալ ի տաճարէն զնաց ի տուն  
Գամաղիելի ի ճաչ: Եւ դեսպանքն Աբ-  
գարու մատեան առ Փիլիպպոս եւ ասեն.  
Տէր, կամիմք զՅիսուս տեսանել: Եւ  
նորա առեալ զԱնդրէաս ընդ իւր, ետուն  
զթուղթն Աբգարու: Եւ Յիսուս ասէ.  
Եհաս ժամ զի փառաւորեսցի որդի  
մարդոյ: Եւ հրամայեաց Թումայի գրել  
թուղթ պատասխանի Աբգարու թէ.  
Փոքր ժամանակ աստ կատարեմ զկամս  
հօր իմոյ եւ ապա վերացայց առ նա, եւ  
զմի յաշակերտաց իմոց առաքեցից բժըշ-  
կել զքեզ:

Իբրեւ ետես նկարիչն Յոհաննէս

եթէ ոչ առ յանձն Յիսուս երթալ ընդ  
նոսա, սկսաւ նկարել զպատկեր նորա զի  
տարցէ Աբգարու ըստ հրամանին, գերի-  
տասարդական պատկերն հասակի յո-  
րում էր Փրկիչն: Եւ դարձեալ հայեցեալ  
ի նա, տեսանէ զնա այր ծեր փառատես:  
Եւ թողեալ զառաջինն լի գարմացմամբ  
սկսաւ զծերունականն նկարել: Եւ  
դարձեալ հայեցեալ ի նա ետես պատանի  
զեղեցիկ. ապա զիտաց եթէ անհնարին է  
նմա առնուլ զհանգամանս պատկերի  
նորա:

Եւ Յիսուս զիտացեալ զխորհուրդս  
նորա կոչեաց զնա առ ինքն եւ զի լուաց-  
եալ էր գտուրբ եւ զամենալոյս երեսս իւր  
ջրովն եւ կամէր դաստարակաւ մաքրել:  
Յորժամ արկ զկտան ոսկէթել զե-  
րեսօքն, նոյնժամայն տպաւորեցաւ ի  
նմա պատկերն տերունական, առանց  
դեղոց եւ արուեստից մարդկան, եւ  
ծալեալ գայն՝ ետ յԱննայէ եւ յընկերս  
նորա տանել թագաւորին Աբգարու: Եւ  
նոցա առեալ խնդուլթեամբ եկին յՈւռհա  
եւ մինչ կամէին մտանել ի քաղաքն,  
թշնամիք ասպատակեցին ի դուռն  
քաղաքին: Եւ նոցա եղեալ գտուրբ  
դաստառակն ի մէջ երկուց աղիւսաց  
թրծելոց եւ պնդեալ ուժգին ընդ  
միմեանս՝ ընկեցին ի ջրհորն առ դուրս  
քաղաքին, եւ ինքեանք մտին ի քաղաքն,  
եւ փակեցաւ դուռն:

Եւ մտեալ առաջի թագաւորին  
ետուն զթուղթն Յիսուսի եւ պատմեցին  
զամենայն եղեալսն: Եւ ուրախացեալ

Աբգարու ի վաղիւն հրամայեաց ամենայն քաղաքին Եղեսիա ելանել ընդ նմա սպիտակ զգեստիւք եւ մոմեղինօք վառելովք եւ անուշահոտ խնկովք: Եւ երթեալ ի ջրհորն հանին զսուրբ կտան անտի: Եւ զմի յաղիւսոցն թողին անդէն ի ջրհորին՝ որ բազում բժշկութիւնս առնէ մինչեւ ցայսօր:

Եւ դարձաւ թագաւորն ցնծութեամբ ի քաղաքն եւ ուրախութեամբ եւ երգովք նուագարանօք, եւ եղ թագաւորն ի վերայ երեսաց զսուրբ դաստա-

ռակն եւ բժշկեցաւ կէս մարմնոյ նորա եւ բուսաւ մազ աչացն եւ յօնացն, եւ ձայն նորա զօրացաւ: Եւ անկեալ յերկիր երկիր եպագ սուրբ դաստառակին եւ պատկերին Քրիստոսի եւ իբրեւ յԱստուած հաւատաց ի նա:

Եւ տօն մեծ կարգեաց զօրն զայն զվեցն Նաւասարդին եւ մեծարեաց զԱնանէ եւ զընկերս նորա յոյժ մեծութեամբ: Եւ կատարի տօնս այս ընդ տօնի վերափոխման սուրբ տիրամօրն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւիտեան:

**1.6 Յայտնաւորք Հրատ. Մարգուանեցի, էջ 15-18:**

Նաւասարդի Զ, եւ Օգոստոսի ԺԶ: Եւ Աւի ԻԸ. Վերստին Տօն է Փոխման Ամէնօրինեալ Սուրբ Աստուածածնին: Եւ յիշատակ Պատկերին Քրիստոսի ՚ի Սուրբ Դաստառակին:

Աբգար արքայն հայոց՝ եւ ասորոց միջագետաց, որ էր ՚ի քաղաքն ուռհայ: Լըւաւ զսքանչելի գործն յիսուսի՝ զոր առնէր ՚ի հրէաստանի: Եւ առաքեաց առ նա՝ զանանէ գհաւատարիմ նախարարն իւր, զտէրն ապահուեաց՝ Ժ արամբք. եւ պատկերահան մի՝ յովհաննէս անուն. եւ ընծայս պատուականս, եւ պատմուծան մի առանց կարանի: Եւ գրեաց թողութ առ Յիսուս՝ օրինակ գայս:

Աբգար որդի արշամայ, եւ իշխան աշխարհաց հայոց՝ եւ ասորոց միջագետաց: Առ Յիսուս բարերար՝ որ երեւեցարդ ՚ի հրէաստանի՝ ողջոյն: Լըւեալ իմ վասն քո՝ եւ վասն նշանացդ զոր առնես: Կամ աստուած ես դու որ գայդ առնես, եւ կամ որդի աստուծոյ իջեալ յերկնից: Քաղաք մի ունիմ փոքրիկ պարսպաւոր եւ գեղեցիկ. պտղաւէտ արդիւնաւոր՝ եւ ցանկալի. որ բաւական է երկոցունցս ՚ի սպաս պաշտմանց: Այլեւ լսեցաք թէ հրէայք եւս տրտնջեն զքէն: Արդ՝ աղաչեմք զքեզ՝ զի եկեալ բժշկեսցես զիս ՚ի

շար ցաւոցս աստի որ ունի զանձն իմ: Եւ առեալ անանէ զթողութն եւ զընծայս, եւ յուղի անկեալ զնաց եւ եհաս յերուսաղէմ: Եւ հանդիպեցաւ յայնմ աւուր՝ յորում գայր յաւանակաւ յերուսաղէմ. եւ ովսաննա երգէին նմա՝ ծերք եւ տղայքն երբայցեցոց: Եւ յայնմ աւուր պատահել նմա ո՛չ կարացին վասն ամբոխին: Այլ յորժամ ել տէրն ՚ի տաճարէն, մեծարեաց զնա զամաղիէլ վարդապետն իսրայէլի եւ տարաւ ՚ի տուն իւրոյ: Եւ մտին դեսպանքն արգարու եւ կացին յարտաքին սրահն. եւ անդ աղաչեցին զփիլիպպոս՝ թէ կամիմք զյիսուս տեսանել: Եւ փիլիպպոս առնու ընդ իւր զանդրէաս. եւ անդրէաս եւ փիլիպպոս ասեն ցյիսուս, եւ մոծանեն զնոսա առ նա: Եւ մտեալ անանէ երկրպագեաց յիսուսի՝ եւ ետ ՚ի նա զթողութն արգարու. եղին առաջի նորա եւ զընծայսն: Եւ յիսուս ընկալաւ զնոսա ողջունիւ եւ ասաց, եհաս ժամ զի փառաւորեսցի որդի մարդոյ: Եւ հրամայ-

եաց թովմայի գրել պատասխանի թղթոյն արգարու օրինակ գայս:

Ի Յիսուսէ նագօրացւոյ՝ առ արգար հայոց արքայդ արքայից՝ ՚ի տէր խնդալ:

Երանի այնմ որ ո՛չ իցէ տեսեալ զիս եւ հաւատաց յիս: Զի գրեալ է վասն իմ, թէ որք տեսանեն զիս՝ ո՛չ հաւատան յիս. եւ որք ո՛չ տեսանեն, նոքա հաւատան եւ կեցցեն: Սակաւ ինչ ժամանակ աստ եմ, եւ վերանամ առ այն որ առաքեացն զիս:

Եւ յետ համբառնայոյն իմոյ՝ զմի ոմն յաշակերտաց իմոց առաքեցից առ քեզ որ եկեալ բժշկեսցէ զքեզ, եւ տացէ քեզ կեանս՝ եւ որոյ ընդ քեզ իցեն:

Իբրեւ տեսին թէ ո՛չ էառ յանձն յիսուս գալ առ Աբգար: Ապա ըսկսաւ նկարիչն նկարել զպատկերն յիսուսի, որպէս եւ առեալ էին պատուէր յարգարէ, նկարել զպատկերն սուրբ՝ թէ ո՛չ գայցէ առ նա: Իբրեւ սկսաւ ծրագրել զերիտասարդական հասակն՝ որպէս եւ էրն, եւ իբրեւ դարձեալ հայեցաւ ՚ի նա՝ եւ ետես զնա ծեր. եւ ջրնջեալ զառաջինն:

Եւ ըսկսաւ գայն ձեւացուցանել: Եւ յորժամ դարձեալ հայեցաւ՝ ետես զնա պատանի ժԲ ամեայ: Եւ յայնժամ զարհուրեալ՝ եթող զնրկարերն: Եւ յիսուս դիտացեալ զխորհուրդս նոցա՝ զովեաց ըզհաւատս նոցա: Եւ առեալ դաստառակ մի սպիտակ վուշ՝ իբրեւ գրկաչափ մի՝ եզերքն ոսկեթել: Էարկ զաստուածային երեսօքն. եւ իսկո՛յն նրկարեցաւ ՚ի նմա պատկերն տէրունական: Աչքն եւ յունքըն. քիթն եւ բերանն. գոյն եւ կերպն. դիրք երեսացն եւ մօրուսն ամենեւին անպակաս: Եւ ինքն յիսուս ծալեալ գայն եւ զթուղթն, ետ ՚ի յանանէ. եւ նորա երկրպագեալ համբուրեաց զձեռն յիսուսի եւ հառ գայն ՚ի ձեռաց նորա: Եւ դարձեալ՝ երկիրպագին յիսուսի եւ ելին ՚ի ճանապարհ: Եւ հասեալ ՚ի քաղաք մի՝ կամեցան իջեւանս առնել ՚ի նմա: Եւ գայն ո՛չ իշխեցին տանիլ ի ներքս, զի մի՛ գիտացցեն եւ առցեն ՚ի նոցանէ: Վասն որոյ եղին ՚ի մէջ Բ աղիւսաց. եւ պնդեալ

կապեցին զնոսա եւ եղին ՚ի պատուհան մի նետաձգութեան պարսպին՝ եւ ինքեանք մտին ՚ի քաղաքն: Եւ ՚ի մէջ զիշերին տեսանէին պահապանքն պարուպաց՝ լոյս կամարածեւ ի վերայ պարուպաց պատուհանին. բայց ո՛չ կարէին հաւատեալ կալ ի վերայ. զի բազում էր միջոցն: Եւ անանէ յարուցեալ ՚ի վաղիւն իբր չիք մեղս եղեալ, եւ էառ գայն եւ զնաց զճանապարհս իւր ուրախութեամբ. եւ յաւուրս երկոտասան հասին ՚ի քաղաքն ուռհա: Եւ մինչ դեռ չէին մտեալ ՚ի քաղաքն, յանկարծակի ձայն ասպատկի թշնամեաց անկաւ զնոքօք: Յորմէ երկուցեալ ընկեցին զսուրբ դաստառակն ՚ի ջրհորն՝ որ մօտ առ նոսա կայր, պնդեալ ՚ի մէջ Բ կղմինդրաց. եւ ինքեանք փութանակի մտին ՚ի քաղաքն եւ փակեցան դրուներն: Եւ լրեալ արքայն՝ ուրախացաւ յոյժ: Եւ հրամայեաց կոչել զնոսա առաջի իւր: Եւ իբրեւ եկին՝ յոյժ մեծարեաց զնոսա եւ պատուով ընկալաւ:

Եւ նոքա զոր լրան ՚ի տեսունէ յիսուսէ՝ պատմեցին նմա ետուն եւ զթուղթն յիսուսի:

Յայնժամ յոտն կացեալ արքային՝ եւ մեծամեծաց նորա, առեալ համբուրեաց ըզթուղթն զնելով ՚ի վերայ երեսացն եւ աչացն: Եւ հրամայեաց ատենադպրին ընթեռնուլ զգիրն: Եւ ամենեքեան բացազուխ կացին ի վերայ ոտից իւրեանց եւ երկիրպագին, եւ ապա նստեալ բազմեցան: Եւ անանէ պատմեաց արքային վասն նկարեալ պատկերի փրկչին որ ՚ի դաստառակին: Ընդ որ յո՛յժ ուրախացեալ թագաւորն՝ մեծարեաց զանանէ եւ զորս ընդ նմա. եւ ետ նոցա պարգեւս բազումս: Եւ հրամայեաց զարդարեալ զքաղաքն եւ ամենեցուն պայծառանալ նոր հանդերձիւ ՚ի մեծամեծաց մինչեւ ցաղքատսն: Պատրաստեաց ՚ի յարքունիսն երկոտասան բիւր մոմեղէնս ՚ի յերից գունաց. եւ եղ զայնոսիկ ՚ի ձեռս մեծամեծացն. եւ այլ ձԻՌ մոմեղէնս



ետունն 'ի ձեռս ժողովրդեանն ծերոց եւ տղայոց: Եւ այնպիսի պատրաստութեամբ, ելին 'ի վաղիւն ամենայն բնակչօք քաղաքին եւ գնացեալ հանին 'ի ջրհորոյ անտի գլխաշկինակն եւ գմին աղիւսակ կղմինդրին. եւ 'ի կամացն աստուծոյ՝ մնաց միւս կղմինդրն 'ի ջրհորն, առ 'ի պատճառս յապայս նշանաց. 'ի կատարել գրժշկութիւնն ախտաժետաց, գողեաց եւ բորոտաց: Եւ բացեալ անանէ գծալ դաստառակին՝ եւ առժամայն բուրեաց անուշահոտութիւն եւ ծագեաց լոյս սաստիկ, մինչ զի արգել գճառագայթս արեգականն: Յայնժամ առեալ արքայն՝ էարկ գերեսօք գաստուածատիպ պատկերն՝ որ նկարեալ էր 'ի դաստառակին: Եւ երգեաց մարգարէական հոգւովն գաղմոսն:

Յերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն. եւ աչք իմ տեսցեն գառողջութիւն անձին իմոյ 'ի ցաւոց մարմնոյս. եւ լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս: Եւ առժամայն բուսան յօնքն եւ արտեւանունքն. եւ հաստատեցան ոտքն եւ ձեռքն. եւ արձակեցաւ ձայնն որ խօսիլ անգամ ո՛չ կարէր: Նոյնժամայն քաղցրաբարբառ ձայնիւ օրհնէր գաստուած, եւ ասորժալուր բարբառովն սաղմոսէ՛ր խորհրդաբար եւ գոհանայր գաստուծոյ: Բայց մնաց նշմարանք ինչ ուրկութեան արքային, զի շնորհք աւագանին երեւեսցին 'ի գալն թաղէոսի առաքելոյն գոր քրիստոս խոստացաւ յուղարկել:

Այլեւ գայս գիտել արժան է. զի յաւուր աւագ շաբաթին ելին 'ի ճանապարհ՝ անանէ եւ ընկերք նորա. եւ սրագնաց երիվարօք յաւուրս ժԲ եկեալ հասին յուռհայ՝ յուրբաթ օրին որ է՛ մերձ յովհաննու գլխատման տօնին: Եւ որպէս յաւագ ուրբաթին 'ի ժ ժամուն էջ քրիստոս ի գերեզման մահու. նոյնպէս եւ 'ի միւս ուրբաթուն՝ անկաւ պատկերն քրիստոսի 'ի ջրհորն: Եւ որպէս յաւուր շաբաթու ճրագալուցին երեւին լոյս յարութեան քրիստոսի 'ի

գերեզմանին: Այսպէս եւ 'ի յաւուր միւսում շաբաթի՝ հանաւ դաստառակն 'ի ջրհորոյն. յորմէ ծագեաց լոյս առողջութեան արգարու: Եւ որպէս 'ի կիրակէի գատկին է ճշմարիտ յարութիւնն քրիստոսի: Նոյնպէս եւ նոր կիրակին կոչի կրկնագատիկ, եւ պատկեր նորոգման ազգի մարդկան 'ի հասարակաց յարութեանն: Եւ այնպէս մեծաւ պատուով եւ փառօք տարեալ ըզսուրբ դաստառակն 'ի քաղաքն ուռհայ, եւ եղեալ յարքունիսն՝ պաշտէին իբր գնոյն ինքն զքրիստոս: Եւ առողջացան ամենայն ախտաժետք եւ ցաւագարք քաղաքին 'ի փառս պատկերին քրիստոսի. որ է օրհնեալ յաւիտեան: Եւ յետ ժամանակաց՝ յաւուրս կոստանդեայ. որդւոյ լեւոնի կայսեր, տարան գսուրբ դաստառակն 'ի կոստանդնուպօլիս. 'ի թվականիս հայոց՝ ԳՃՂԴ ամին:

Եւ անդ բագում գորութիւնս արար 'ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ:

Իսկ 'ի գՃԼԵ ամի թվականիս մերոյ, երեւեցաւ նոր իմն սքանչելիս եւ աստուածահարաչ տեսիլ 'ի քաղաքն ուռհայ: Յանկարծակի 'ի մէջ գիշերին երեւեցաւ լոյս մեծ եւ ահագին 'ի սմին աւուր 'ի վերայ ջրհորին յորում եղեալ էր դաստառակ պատկերին քրիստոսի. եւ գիշերապահքն բերդին եւ քաղաքին այլագգիքն տեսին զլոյսն եւ զաղաղակ բարձին. եւ անդէն հասեալ 'ի տեղին՝ տեսին ըզլոյսն գայն որպէս Գ մոմեղէնս բոցափայլս 'ի մէջ ջրոյն: Եւ էր երբեմն՝ զի գայր լոյսն 'ի միաւրութիւն բոլորածե՛ւ՝ որպէս գարեգակն. եւ որպէս թէ երբեմն ծածկեալ 'ի ջրոյն: Եւ երեւիւր խիտ առ խիտ՝ նման աստեղաց, եւ կամ կայծակնուտ կրակարանաց. եւ 'ի վերայ ջրոյն բոց սաստիկ որպէս ձիթայիր ճրագաց երեւիւր ամենայն ումեք: Եւ յայս հանդէս տեսութեան գային ամենայն ազգն տաճկաց. եւ իջուցին գոմն այլագգի 'ի հորն տեսանել եւ ձեռօք իմանալ զլոյսն: Ուր իջեալ եկաց ժամս

Բ, եւ ապա ի վեր քարչեցին զայրն զայն որպէս մեռեալ: Եւ յետ օգուտ ժամու ապա 'ի խելս եկն, եւ բացեալ զաչսն՝ աղաղակեաց մեծաձայն՝ օրհնելով զաստուածածինն՝ եւ զիւր միածինն. եւ ասէր թէ եւ ես քրիստոնեայ եմ, եւ զքրիստոս աստուած հաւատամ: Եւ ժողովեցան ի վերայ նորա բազմութիւնք մարդկան իբրեւ ԵՌ եւ հարցանէին ցնա թէ զի՞նչ տեսեր:

Եւ նա՛ ասաց թէ տեսի 'ի հորն կին մի ծիրանագգեաց նստեալ յաթոռ լուսեղէն. եւ մանուկ մի լուսատեսիլ 'ի գիրկ նորա: Եւ ի վերայ ծնկաց մանկանն դաստառակ մի. եւ ի վերայ դաստառակին գիրք մը խաչաձեւ: Եւ այր մի ծեր սքանչելատեսիլ՝ նստեալ մօտ առ սոսա եւ Բ արք թեւաւորք առաջի նորա.

վասն որոյ եւ ես 'ի քրիստոս աստուած հաւատամ: Եւ զնաց առ քահանայս հայոց՝ եւ մկրտեցաւ: Եւ գային 'ի տեսութիւն հրաշիցն ժողովք մարդկան յամենայն կողմանց: Եւ բազումք հաւատացին 'ի քրիստոս՝ շնորհօք աստուածատիպ պատկերին: Հայք՝ դաստառակ ասեն: Յոյնք՝ մանտիլ: Ասորիք՝ թաշկինակ: Եւ հրէայք՝ վարչամակ: Յոր նկարեցաւ պատկերն յիսուսի քրիստոսի աստուծոյ մերոյ:

Աքանջելագործ քրիստոս աստուծոյ, բարեխօսութեամբ մօր քոյ եւ կուսի, ողորմեայ ստացողի գրոյս:

(Շար. 2)

ԹՒԱՄԱՐ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ



### ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻՆ ԱՌԱԿԸ\*

«Եւ կը յուսար իր փորը լեցնել մեծահարուստի սեղանին աւելցուցնելով» (Ղկ 16.21):

«Կը յուսար» բառերը կը պարզեն որ Ղազարոս եւ կեանքի բոլոր Ղազարոսները, այլ խօսքով, բոլոր դժբախտները, բոլոր նեղեալները, բոլոր աղքատները, յոյսով կ'ապրին, ահնկալութեամբ կ'ապրին, բայց անոնց մեծ բաժինը յուսախար կ'ըլլան, ճիշդ ինչպէս Ղազարոս յուսախար եղաւ:

Դժբախտութիւն է երբ գուժի կարօտ մարդը գուժ կը փնտռէ եւ չի գտներ, եւ ստիպուած կ'ըլլայ ըսելու. «Գթացող մը փնտռեցի, բայց չկար: Միտքաբախ մը փնտռեցի, բայց չգտայ» (Մղ 69.20):

«Կը յուսար իր փորը լեցնել»: Ղազարոսին ուզածը հարստանալ էր, այլ պարզապէս իր փորը լեցնելը, բայց այդքանին ալ չտիրացաւ: Եւ հետաքրքրականը այն է, որ Ղազարոս չուզէր իր փորը լեցնել սեղանէն, այլ՝ սեղանին աւելցուցնելէն: Ան չպահանջեց մեծահարուստին սեղանակից դառնալ, այլ պարզապէս ուզեց անոր «սեղանին աւելցուցնելով» կերակրուիլ եւ անոնցմով գոհանալ:

Յանկալ սեղանին աւելցուցնել եւ սակայն չհասնիլ անոր, ցոյց կու տայ թէ աշխարհ կը գլանայ նուազագոյն չափով իսկ օգնել Աստուծոյ գաւազներուն: «Սեղանին աւելցուցնելը» բացատրութիւնը յստակօրէն կը պարզէ որ աշխարհ բնաւ երբեք չի փորձեր եւ չ'ուզեր

օգնել անօգնականին, տէր կենալ անտէրին, տուն տալ տնագուրկին, կերակուր տալ անօթիին:

Մէկը որ չի մտածեր Աստուծոյ մասին՝ չի կրնար մտածել նաեւ դժբախտ ու չարչարուող մարդոց մասին: Այդպիսին էր հարուստ մարդը: Ան ո՛չ Աստուծոյ մասին հարցուցած ունէր եւ ո՛չ ալ աղքատ Ղազարոսին մասին: Մէկը որուն փորը միշտ կուշտ է, որուն սիրան ու հոգին միշտ լեցուն են աշխարհով՝ չի կրնար տեղ տալ Աստուծոյ եւ իր նմանին իր սրտին մէջ, այլ ամբողջութեամբ կը մոռնայ գանոնք:

Մովսէս մարգարէն կ'ըսէ. «Իսրայէլ գիրնալով աբացեց (գիրցար, հաստցար, իւղ կապեցիր.) ու իր Արարիչ Աստուծոյ թողուց եւ իր փրկութեան Վեմը արհամարհեց» (Բ.Օր 32.15): Յովհան Ոսկերեան կը հաստատէ որ հոս գործածուած «աբացեց» բառը կը պարզէ Իսրայէլի գոռոզութիւնը եւ անգուսպ դարձած ըլլալը:

Գոռոզութիւնը յաճախ ծնունդ կ'առնէ մարդուն մէջ երբ մարդը հարստանայ եւ ինքնաբաւ դառնայ: Եւ ինքնաբաւութիւնը յաճախ մոռցնել կու տայ մեզի մեր Փրկիչ Աստուծոյ: Մովսէս կ'ըսէ. «Երբ ուտես ու կշտանաս, երբ գեղեցիկ տուներ շինես եւ անոնց մէջ բնակիս, երբ արջառներդ եւ հօտերդ շատնան, երբ արծաթդ ու ոսկիդ եւ ամբողջ ունեցուածքդ շատնայ, թող սիրտդ չհրպարտանայ եւ բու Տէր Աստուծոյ չմոռնաս» (Բ.Օր 8.12-13):

Ոսկերեան Հայրապետը խորհրդածելով Մովսէս մարգարէին այս խօսքին մասին՝ կ'ըսէ. «Կշտանալը կ'առաջնորդէ

\* Շար. նախորդ թիւէն:

մոռացումի, ուստի սիրելիներ, երբ սեղանին շուրջ բոլորուի՛ք չմոռնա՛ք աղօթել: Ձափաւորութեամբ լեցուր փորդ, որպէսզի չծանրանայ մարմինդ եւ Աստուծոյ դիմաց ծնրադրելու կարողութիւնդ չկորսընցնես...:

Ընթրի՛ք անմիջապէս յետոյ անկողին մի՛ երթա՛ք, այլ՝ աղօթի՛ք, որպէսզի անբան անասուններէն աւելի անմիտ չըլլա՛նք:

Մենք չենք ծնած եւ չենք ապրիր որպէսզի ուտենք եւ խմենք, այլ կ'ուտենք որպէսզի ապրինք: Սկիզբէն կեանքը կերակուրի համար չէր, այլ կերակուրը կեանքի համար, իսկ մենք այնպէս մը կ'ապրինք, կարծէ՛ք աշխարհ եկած ըլլանք միայն ուտելու»:

**Քիչ մը վերեւ մատնանշեցինք որ մեկնիչ հայրերէն ոմանք Ղազարոսը խորհրդանիշ կը նկատեն հեթանոս աշխարհին: Կեսարիոս Եպիսկոպոսը կ'ըսէ. «Ղազարոս բառը կը նշանակէ՝ "օգնութիւն գտած" . Հետեւաբար, հոս Յիսուս կը խօսի հեթանոսներուն մասին որոնք Աստուծմէ օգնութիւն գտան...: Հեթանոսները (կամ Ղազարոսը) կը ցանկային սեղանէն ինկած աւելցումներուն, այլ բացատրութեամբ մը, անոնք կը փափաքէին փանջնալ հոգեւոր օրէնքները իբրեւ երկնային հաճոյքներ: Սեղանէն ինկած աւելցումները՝ Աստուծոյ Օրէնքին խօսքն են որոնք գետին ինկան Հրեայ ժողովուրդին հպարտութեան եւ գոռոզութեան պատճառով, իսկ Ղազարոսին մարմինը լեցնող վերքերը՝ խոստովանութիւնն է այն մեղքերուն, որ ներսէն դէպի դուրս ժայթքեցաւ իբրեւ գարշահոտ արիւն»:** **Շատ հետաքրքրական է այս պատկերացումը կամ նմանութիւնը: Կեսարիոս Եպիսկոպոսին ըսել ուզածը այն է՝ որ ինչպէս վերքը մարմինին վրայ կ'երեւի, մարմինէն դուրս է կարծէք, այնպէս ալ, խոստովանութիւնը՝ մեղքը մեզմէ դուրս կը բերէ, մեզմէ կը հեռացնէ:**

«Ղազարոս վերքերով ծածկուած էր, եւ շունք կու գային իր վերքերը կը լը-

գէին» (ՂԿ 16.21):

**Այստեղ Յիսուս կու տայ «չուն»ի մը օրինակը, ցոյց տալու համար մեզի որ աղքատին ու թշուառին հանդէպ անկարելից, անողորմ եւ անտարբեր եղող մարդիկ՝ չունէն տարբեր չեն, անբան անասունէն տարբեր չեն:**

**Անբան կենդանին անգամ, այս պարագայիս շունը, գլխովին կը ցուցաբերէ Ղազարոսին նկատմամբ եւ կը ջանայ իր լգելովը անոր վերքերը՝ մեղմել անոր ցաւերը: Կարծէք Յիսուս ըսել կ'ուզէ, ո՛վ մարդ, շո՞ւնը պէտք էր քու նմանիդ վերքերուն ցաւերը մեղմէր թէ դուն: Շո՞ւնը եղբօրդ վերքերը պէտք էր լգէր, թէ դո՞ւն գանոնք պէտք էր փաթաթէիր եւ անոնց վրայ բայասան դնէիր:**

**Մեծն Կիւրեղ խօսելով այս «ազնիւ շուներուն մասին» կ'ըսէ. «Շունները կը լգէին Ղազարոսի վերքերը. անոնք վնաս չէին հասցնել անոր, ընդհակառակը, կը կարեկցէին եւ կը գթային անոր. իրենց լեզուներով կը թեթեւցնէին անոր յոգնութիւնը եւ կը վերցնէին անոր ցաւերը: Բայց հարուստը գազաններէն աւելի բիրտ եւ անգութ էր, որովհետեւ բնաւ չկարեկցեցաւ Ղազարոսին»:**

**«Ղազարոս վերքերով ծածկուած էր», իսկ մեծահարուստը՝ փարթամ հագուստներով: Ղազարոս «դրան առջեւ կը նստէր», գետնի վրայ, իսկ մեծահարուստը՝ բարձր գահերու եւ հանգստաւէտ բազմոցներու վրայ: Ղազարոսը ցնցոտիներ կը հագնէր, իսկ մեծահարուստը՝ «բեհեզ եւ ծիրանի հագուստներ»:** **Մեծահարուստը ամէն օր առատօրէն կ'ուտէր, բայց չէր յիշեր իր անօթի դրացին՝ իր դրան առջեւ նստած:**

«Աղքատը մեռաւ եւ հրեշտակները զինք տարին Աբրահամի մօտ: Մեծահարուստն ալ մեռաւ եւ թաղուեցաւ» (ՂԿ 16.22): **Հոս ուշադրութեան արժանի են քանի մը կէտեր.-**

1.- **Երբ Ղազարոսը մեռաւ՝ հրեշտակները եկան իր դիմաւորութեան, «Հրեշտակները զինք տարին Աբրահամի**

մօտ»։ Այս հաստատումը մէկ կողմէն մեզի կը սորվեցնէ թէ հաւատացեալ մարդիկ երբ իրենց հոգին աւանդեն՝ կը դիմաւորուին Աստուծոյ հրեշտակներուն կողմէ, իսկ միւս կողմէն, կը յուշէ մեզի կարեւոր ճշմարտութիւն մը, այն՝ որ հաւատացեալ մարդուն հոգին ինքնիրմէ չի կրնար դրախտ երթալ, մէկը պէտք է գինք հոն առաջնորդէ։

2.- Պօղոս առաքեալ կը հաստատէ «որ հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն» (Եբր 1:14)։ Հրեշտակներուն ծառայութիւնը հաւատացեալներուն չի դադրիր երբ անոնց երկրաւոր կեանքը իր աւարտին կը հասնի։ Հրեշտակները կը շարունակեն ծառայել հաւատացեալներուն նաեւ եւ յատկապէս մահուան վայրկեանին։ Իրենք է որ իրենց ձեռքերուն մէջ կ'առնեն անոնց հոգիները, նախ որպէսզի պաշտպանեն գանոնք երկիրքի մթնոլորտը լեցնող չար ոգիներու յարձակումներուն դէմ, որոնք կ'ուզեն հաւատացեալներու հոգիները անգամ բռնել եւ դժոխք տանիլ, երկրորդ, որպէսզի երկրէն երկիրք իրենց գնացքին մէջ ճանապարհորդակից ըլլան անոնց։

3.- Մեծահարուստին համար չ'ըսուիր թէ որոնց կողմէ դիմաւորուեցաւ, բայց բոլորս ալ գիտենք որ անհաւատ կամ մեղաւոր մարդուն հոգին կը տարուի դժոխք։

4.- Հետաքրքրական է որ մեծահարուստ մարդուն համար կը գործածուի «Թաղուեցաւ» բառը, «Յունարէն՝ εταφη (էթաֆի)», իսկ Ղազարոսին համար նման բառ չի գործածուիր։ Հոս «Թաղուիր» մեղքերուն եւ անհաւատութեան մէջ թաղուած ըլլալ կը նշանակէ։ Նո՛յն իմաստը ունի Յիսուսի ուրիշ մէկ խօսքը. «Ձգէ՛ որ մեռելները թաղեն իրենց մեռելները, իսկ դուն գնա՛ եւ Աստուծոյ

թագաւորութիւնը քարոզէ» (ՂԿ 9:60)։ Խօսքը հոգեպէս մեռած մարդոց մասին է։ Յիսուսի ըսել ուզածը այն է՝ որ Աստուծոյ թագաւորութեան քարոզութեան կանչուած մարդը՝ իր կապը պէտք է խզէ մեռելոտի գործերու հետ, աշխարհի մեղքին հետ։ Հարուստ մարդը իր կապը չէր խզած մեղքին հետ, եւ ճիշդ անոր համար ալ, իր մահէն ետք, իր հոգին «Թաղուեցաւ» դժոխքին խորունկ վիհերուն մէջ։ «Թաղուեցաւ» բացատրութեամբ կարելի է հասկնալ նաեւ «կորսուեցաւ»։ Մէկը որ կորսուած է իր մեղքերուն մէջ, մահէն ետք, իր մեղքերն են որ գինք պիտի կորսնցնեն։

5.- Հրեշտակներուն կողմէ դիմաւորուելը, մեր հոգիները պաշտպանելու եւ դէպի երկիրք առաջնորդելու նպատակներուն կողքին, երրորդ կարեւոր նպատակ մըն ալ կը հետապնդէ, որ է՝ հաւատացեալ մարդուն հոգին պատուել։ Արդարեւ, մարդու մը համար պատիւ չէ՞ դիմաւորուել, պաշտպանուել եւ առաջնորդուել երկնային եւ հրեղէն մարմինի մը կողմէ։ Հաւատացեալներուն հոգիները (մանաւանդ տառապած հոգիները) արժանի են ամէն պատիւի, յարգանքի եւ փառքի։ Ուշագրաւ է որ մէկ հրեշտակ չէ որ կու գայ Ղազարոսի դիմաւորութեան, այլ քանի մը հրեշտակներ, եւ ասիկա պիտի նշանակէր գինք աւելի՛՛վ պատուել։

6.- Հրեշտակները պատահական տեղ մը չէ որ տարին Ղազարոսին հոգին, այլ «գիմֆ տարին Աբրահամի մօտ»։ Ոմանք հիմնուելով այս բառերուն վրայ, եւ նկատի ունենալով որ հրեաներ իրենք զիրենք Աբրահամի գաւակները կը սեպեն, ենթադրած են որ Ղազարոսը հրեայ անձ մըն էր եւ կամ հրեաները կը ներկայացնէ։ Առակը սակայն նման մտածում չ'արտայայտեր։

7.- Կարգ մը աղանդաւորական հոսանքներ կը հաստատեն որ հոգին բաժ-

նրւելէ ետք մարմինէն՝ քնածուլթեան եւ թմրուլթեան կը մատնուի, այլ խօսքով՝ կը քնանայ, տակաւին, որոշ հերետիկոսական մտածողութիւններ կը հաստատեն թէ հոգին ամբողջութեամբ կը փճանայ ու կը բնաջնջուի մարմինէն բաժնուելէ ետք: Բայց «աղբատը մեռաւ եւ հրեշտակները զինք տարին Արրահամի մօտ» խօսքը, կը հերքէ աղանդաւորական ու հերետիկոսական այս մտածողութիւնները: Ղազարոսի հոգին ո՛չ քունի կը մտնէ, ո՛չ կը թմրի եւ ո՛չ ալ կը բնաջնջուի, այլ կը տարուի Արրահամին մօտ, կը տարուի կատարեալ գիտակցութեան մէջ:

8.- «Զինք տարին Արրահամի մօտ»: Հին թարգմանութիւնը կ'ըսէ. «Զինք տարին Արրահամի գոգը»: Գոգ, պարգապէս կը նշանակէ՝ գիրկ, ծոց: Յունարէն բնագիրին մէջ ալ գործածուած է «գիրկ» կամ «գիրկը» բառը «ΚΟΛΠΟΝ (քոլբոն)»: Հետաքրքրական ճշմարտութիւն մը կը բացայայտուի մեր դիմաց, այն՝ որ Աստուած եւ իր զաւակներն ու իր հրեշտակները գրկաբաց կ'ընդունին այս աշխարհէն բաժնուող տառապած Ղազարոսեան հոգիները: Աստուած իր գրկին մէջ կ'առնէ իր գրկին ջերմութեան ցանկացողները:

9.- Ինչո՞ւ «Արրահամի մօտ» կը

տարուի Ղազարոս եւ ո՛չ թէ ուրիշին մօտ: Հրեաները Արրահամը կ'ընդունին իրրեւ հաւատքի հայր, ճիշդ ինչպէս մենք Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը կ'ընդունինք իրրեւ մեր հաւատքի հայրը: Աստուածաշունչին մէջ Արրահամ հայրը կը կոչուի հաւատացեալներուն (Հռ 4.11-12), ուստի, Ղազարոսին անոր քով տարուիլը, ցոյց կու տայ «Ղազարոսին հաւատացեալ ըլլալը», այլ բացատրութեամբ, Յիսուս մեզի կը սորվեցնէ որ միայն հաւատացեալները պիտի կարենան ժառանգել յաւիտենական կեանքը:

Ղազարոս Արրահամի մօտ չտարուեցաւ պարգապէս որովհետեւ աղքատ ու տառապած մէկն էր, այլ որովհետեւ հաւատքի տէր մարդ էր: Արքայութիւնը աղքատ ու տառապած մարդոց տեղը չէ անպայման, այլ՝ հաւատացեալ ու հաւատարիմ մարդոց տեղը: Մէկը կրնայ աղքատ բայց անհաւատ ըլլալ: Ուրիշ մը կրնայ տառապած բայց տրտնջացող եւ ամէն բանի համար դժգոհող մարդ ըլլալ: Արքայութիւնը պիտի ժառանգեն Աստուծոյ անունին ու փառքին համար տառապողները:

ՎԱՂԻՆԱԿ ՎՐԻ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 2)



**Ա.ԱՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ**

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱԻԱՏՔԸ  
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ «ՀԱԻԱՏԱՄՔ»Ի\***

«ՈՐ ՅԱՂԱԳՍ ՄԵՐ ՄԱՐԴԿԱՆ ԵՒ ՎԱՍՆ ՄԵՐՈՑ  
ՓՐԿՈՒԹԵԱՆ ԻԶԵԱԼ ՅԵՐԿՆԻՑ»

Մարդուն պատմութիւնը աշխարհի պատմութիւնն է եւ փոխադարձաբար: Երբ մենք կ'ըսենք աշխարհ, առանց մարդուն աշխարհը չենք կրնար պատկերացնել եւ հետեւաբար աշխարհին պատմութիւնը մեզի համար պատմութիւնն է մարդ արարածին: Արդ, հաւատքի այս երեսին վրայ երբ կը խօսինք միածին Որդիին եւ անոր աշխարհ գալուստի մասին, հիմա պիտի խօսուի անցեալ պատմութեան այն երեսին մասին, որ կը վերաբերի մարդուն, եւ անոր անկումին, եւ որ ինքնաբերաբար պահանջը կը դնէ մեր դիմաց փրկագործութեան:

Գիտէք որ մարդը Աստուծոյ կողմէ ստեղծուեցաւ իբրեւ պսակը արարչութեան, զարդարելու համար գայն: Աստուծոյ կատարած ստեղծագործութիւնը տեսնք երկու տարբեր բառերով, առաջին հերթին՝ ձեւաւորեց, կարգաւորեց. երկրորդ հերթին՝ լեցուց, կեանքով գայն յատկանշեց: Այդ կեանքի երեսին վրայ ըսինք նաեւ որ ոչ միայն բուսական կեանքը կար, ոչ միայն կենդանականը, այլ Աստուած մասնաւորաբար ուզեց այնտեղ կեանքի յատուկ տեսակ

մը ունենալ, որ իր պատկերը եւ նմանութիւնը ըլլար:

«Եւ Աստուած մարդը ստեղծեց», կ'ըսէ Ծննդոց գիրքին առաջին գլուխը, իր 26-րդ համարով, ստեղծեց իր պատկերով եւ իր նմանութեամբ: Այլ խօսքով, բանականութեամբ օժտուած, աստուածային հոգիին կամ նկարագրին յատկանիշներով ստեղծուած, իր սրբութեամբ, արդարութեամբ, Աստուծոյ կամքին կատարեալ գիտութեամբ, այնքանով որ Աստուած կը յայտնէր եւ մարդուն կը տրուէր այդ գիտութիւնը: Միաժամանակ այն իշխանութեամբ՝ որ Աստուծոյ կը պատկանէր, տիրութիւնը ամբողջ տիեզերքին, բայց զոր Տէրը ինք, տուաւ մարդուն, որպէսզի մարդը գինք ներկայացնէ, իր տնտեսը ըլլայ, գինք փոխարինողը ըլլայ աշխարհի մէջ՝ ամէն բանի պատասխանատուն: Այս առաւելութիւնները անոր համար, որ այդ արարչութիւնը ծառայեցնէ Աստուծոյ նպատակին, մատակարարէ այնպէս, խնամէ եւ պահպանէ այնպէս, որ այդ արարչութիւնը ծառայէ մարդուն բարեքին, Աստուծոյ փառքին՝ Աստուծոյ վերջնական նպատակին:

Մարդը ինք սակայն, երկար ժամանակ իրեն տրուած այս բարձր պատիւին կամ փառքին մէջ չմնաց: Շու-

\* Շար. նախորդ թիւէն:

տով, թէ ո՞րքան շուտով, ժամանակը ճշգրտած չէ մեզի (Աստուածաշունչը, ոչ օրեր, ոչ ամիսներ, ոչ տարիներ կը թուէ), բայց մէկ անգամէն ստեղծումէն ետքը կը նշէ, որ մարդը շուտով գոհ գնաց իր մէջ եղող ցանկութիւններուն եւ հիմնական այն ցանկութեան, որ գիտութեան ցանկութիւնն էր, ճանաչողութեան ցանկութիւնն էր, մարդուն մէջ Աստուծոյ իսկ կողմէ դրուած ծարաւը, որ գինք պէտք էր առաջնորդէր գիտնալու իր Տիրոջ, իր Արարիչին, Աստուծոյ կամքը, այդ կամքին համաձայն ղեկավարելու իր կեանքը: Սակայն որուն սահման չդրաւ մարդը, եւ առիթէն օգտուեցաւ բանասրկուն, որ նոյն այդ գիտութիւնը ներկայացուց իբրեւ աստուածացում, եւ մարդը մոլորեցուց ըսելով, որ Աստուած ճշմարիտ գիտութիւնը քեզմէ պահեց. եթէ կ'ուզես՝ դուն այդ ճշմարիտ գիտութեան կրնաս տիրանալ, եւ Աստուծոյ նման ըլլալ: Եւ մարդը այդ գիտութեան մարմնացնելու բռնուած, փորձուեցաւ ճաշակել այն ծառէն, որ որոշակի կերպով ծառ մը չէր, խորհրդանիշ մըն էր սակայն: Աստուած մարդը կոչած էր մնալուն կերպով հնազանդելու իր կամքին, եւ այդ կամքին բարիքները ճաշակելու: Ահաւասիկ մարդը այդ հնազանդութեան մէջ չմնաց. եւ այն օրը որ այդ հնազանդութենէն դուրս եկաւ, Աստուծոյ կամքէն դուրս եկաւ, Աստուծոյ գիտութենէն դուրս ուրիշ գիտութիւն մը փնտռելու, ուրիշ գիտութեան մը տիրանալու, եւ Աստուծոյ հաւասարութեան հասնելու, ատով իսկ Աստուծոյ կամքէն ինքնաբերաբար դուրս ինկաւ: Եւ այդ անհնազանդութեան մեղքն է որ «ծառէն ճաշակելու», գիտութեան «բարիի ու չարի ծառ»էն ճաշակելու, իբրեւ պատկերացում տրուած է Աստուածաշունչ Մատեանին մէջ:

Եւ այն պահուն, երբ անհնազանդութիւնը գործեց, կ'ըսէ Աստուածաշունչը, ինքնաբերաբար նաեւ Աստուծոյ

կողմէ իրեն տրուած պարգեւները մարդը կորսնցուց: Բոլորը մէկ անգամէն, ամբողջականօրէն չկորսնցուց, շատ մը բաներ մնացին իրեն, բայց անոնք ալ ժամանակի ընթացքին աստիճանաբար նուաղեցան, կամ աղօտացան իր մէջ, խաւարեցան. այն գիտութիւնը որ իրեն տրուած էր, այն արդարութիւնը եւ սրբութիւնը որ իր մէջ կային, աստիճանաբար նահանջ արձանագրեցին, մինչեւ որ մարդը առաջնորդուեցաւ մէկ մեղքէն միւսը, մէկ անհնազանդութենէն միւսը կատարեալ կերպով մեղքի տիղմին մէջ թաղուելով:

Արդ, այս բոլորին մէջ կար նաեւ հիմնական մէկ տուեալը, որ մարդուն, իբրեւ մեծագոյն պարգեւ տրուած էր. ազատութիւնը, որ բանականութեան լրացուցիչն է, որովհետեւ բանականութիւն մը առանց ազատութեան, իմաստ չունի, եւ ազատութիւն մը որ բանականութիւն չունի, կամ չի ճանչնար, բանականութիւնը իրեն առաջնորդ չունի, ազատութիւն չէ: Կենդանին ազատ է, բայց ի՞նչ ազատութիւն ունի, եթէ գիտակցուած ազատութիւնը չէ այդ մէկը, կը նշանակէ թէ բանականութեամբ առաջնորդուող ազատութիւն չէ: Մարդուն տրուած այդ ազատութիւնը եւս կորսուեցաւ այս պատկերին մէջ: Ազատութիւնը ի՞նչպէս կորսուեցաւ, չէ՞ որ իր ազատութեամբ է որ մարդը ընտրեց անհնազանդութիւնը, բայց այն պահէն որ ինքը իր ազատ կամքով անհնազանդութիւնը ընտրեց, ինկաւ մեղքին տիրապետութեան տակ. եւ մեղքը ինք աստիճանաբար տիրապետեց մարդուն վրայ, այնպէս որ մարդը իր ազատութիւնը կորսնցուց այլեւս:

Այստեղ փոքր փակագիծ մը բանալով կրնանք իբրեւ խորհրդածութիւն այժմէն ըսել, թէ այսօր մարդ արարածը որքանո՞վ ազատ է, եւ որքանո՞վ ազատ կերպով կը կատարէ իր ընտրութիւնները: Բանականութիւնը դարձեալ ու-



նիք, (թէպէտ այդ բանականութիւնը արդէն մենք կ'ընդունինք որ սահմանափակ բանականութիւն), եւ մասնաւորաբար ազատութիւնը: Մենք երբ որ կատարեալ գիտութիւնը չունինք, հարկաւ հարկադրաբար կը կատարենք ընտրութիւններ, եւ երբ որ տակաւին սահմանափակ վիճակի մէջ ենք եւ մեր միտքը ինքը այդ մեղքի տիրապետութեան տակ է, ո՞րքանով իսկապէս ազատ ընտրութիւն կը կատարենք: Կարդացէք Հռոմայեցիներու նամակին 7-րդ գլուխը, հոն ուր Պողոս առաքեալ կը խօսի քրիստոնեայ մարդուն վարուելակերպին մասին, թէ ինքը ինչպէս ինքզինքը, իր միտքը, իր մտածողութիւնը կ'ենթարկէ Աստուծոյ կամքին, եւ կը փորձէ բարին գործել, եւ սակայն չեն յաջողիր, գոնէ ամբողջականօրէն չենք յաջողիր գործել, հարկաւ ծայրագոյն սահմանին պէտք չէ երթալ, կամ ծայրայեղութեան պէտք չէ երթալ, ըսելու համար որ բացարձակ ազատութիւնը չունինք, բայց նաեւ այդ ազատութիւնը ինքը իսկական ազատութիւն է արդեօք, ո՞րքանով մենք մեր բոլոր որոշածները կը յաջողինք գործադրել, ո՞րքանով մեր կամքին ոյժը եւ գորութիւնը կը յաջողինք պահել, այսօր առած մեր որոշումը վաղը գործադրելու համար: Յաճախ որ այս գիշեր կը պառկինք, վաղը արդէն մեր որոշումը փոխուած կ'ըլլայ: Ինչն է որ կը փոխէ այդ որոշումը, մենք չէ՞ որ ազատ կամքով է որ ըրինք այդ ընտրութիւնը, բայց ցոյց կու տայ որ մեր մէջ կայ այսպէս կոչուած մեղքին տրամաբանութիւնը: այնպէս մը ներթափանցած է անիկա մեր մտածողութեան մէջ, եւ այնպէս մը իր ազդեցութիւնը, ներգործութիւնը ունի մեր մտածողութեան մէջ եւ մեր կեանքին մէջ, որ կամայ թէ ակամայ մեզ կը հեռացնէ այդ սկզբնական ազատութենէն եւ հետեւաբար նաեւ թոյլ չի տար որ մեր ընտրութիւնները ըլլան ճշմարիտ ընտրութիւն, Աստուծոյ կամքին համար կատարուած:

Մարդ արարածը կրնա՞յ ինքզինք փրկել թէ ոչ: Աստուածաշունչը կը հաստատէ մէկ բան, որ ոչ մէկ մարդ կրնայ ինքզինքը փրկել, որովհետեւ արդար մարդ չկայ, կ'ըսէ, մէկ հատիկ իսկ չկայ, մեր ամբողջ մտածողութիւնը տիրապետուած է մեղքով եւ մեզ կ'առաջնորդէ անսանձ երիվարներու պէս, աջ ու ձախ կը տանի մեզ, չի ձգեր որ մենք մնանք այն ճշգրիտ ուղղութեան վրայ, որուն կը կանչուինք, բայց նաեւ չենք կրնար հետապնդել: Անցեալին ալ, Աստուած իր օրէնքը տուաւ իր ժողովուրդին, օրէնք մը որ «սուրբ է եւ կատարեալ, եւ սակայն» նոյն Պողոս առաքեալն է մեզի յիշեցնողը, որ «այդ սուրբ եւ կատարեալ օրէնքը մեզ չէր կրնար փրկել»: Ինչո՞ւ համար: Դարձեալ մարդկային բնութեան տկար ըլլալուն համար: Որովհետեւ օրէնքը ամբողջութիւն մըն է, եւ այդ օրէնքի ամբողջութիւնը մեզի կը տրուի իբրեւ առաջնորդ փրկութեան, եւ սակայն մարդը ամբողջ օրէնքը չի կրնար գործադրել, եւ անոր համար ալ միշտ օրէնքը փոխանակ իրեն դառնալու փրկութեան միջոց, կը դառնայ դատապարտութեան առիթ, կը դառնայ ձեռով մը յիշեցում իր ամէնօրեայ թերացումներուն, իր ամէնօրեայ սխալներուն, ամէնօրեայ մեղանչումներուն, եւ հետեւաբար իր փրկարար դերը չի կրնար կատարել: Միւս կողմէ սակայն կը կատարէ կարեւոր դեր մը, յուշարարի դեր կը կատարէ, դաստիարակի դեր մը կը կատարէ օրէնքը, մեզ բոլորս առաջնորդելու համար փրկութեան:

Մինչ այդ, եթէ ոեւէ մարդ արարած ինքզինք չի կրնար փրկել, Աստուած սակայն ուզեց անպայմանօրէն մարդը փրկել, որովհետեւ մարդը, զարդն էր ստեղծագործութեան, մարդը Աստուծոյ պատկերը եւ նմանութիւնն էր, եւ Աստուած ինչ որ ստեղծեց, կ'ուզէ որ մնայ: Նոյնպէս նաեւ յատուկ կերպով մարդ արարածը ստեղծեց, որպէսզի մարդը

մնայ եւ յաւիտենապէս մնայ Իրեն Հետ, Իր ընտանիքին մէջ:

Արդ, մարդը երբ ինկաւ, ենթարկուեցաւ մեղքի եւ նաեւ մահուան դատապարտութեան, մարդուն Հետ միասին նաեւ աշխարհը ինկաւ նոյն այդ դատապարտութեան տակ: Եւ դարձեալ նոյն Պօղոս առաքեալն է, Հռոմայեցիներու նամակին մէջ որ մեզի կը յիշեցնէ թէ ինչպէս ամբողջ ստեղծագործութիւնը եւ մարդ արարածը, բաղձանքը ունին փրկութեան, այն ազատութեան որուն կանչուած է ոչ միայն մարդը, այլ մարդուն Հետ նաեւ փճացումի կամ ապականութեան ենթարկուած աշխարհը՝ երկուքը միշտ միասնաբար:

Մարդուն փրկութիւնը Աստուծոյ համար բացարձակ անհրաժեշտութիւն է եւ Հաւատամքին երկրորդ տողը մեզի կը յիշեցնէ որ այդ մարդեղութիւնը պիտի ըլլար մեր փրկութեան համար: Որովհետեւ Աստուած գիտէր որ մարդը ինք անկարելի է որ յաջողի ինքզինք փրկել: Նոյն այն վայրկեանին որ մարդը մեղանչեց, տակաւին դրախտային իր վիճակին մէջ, Աստուած իր դատապարտութիւնը պիտի տար անոր, դատապարտութեան կողքին տուաւ նաեւ փրկութեան խոստում: Այն խոստումը որ առաջին օձին կամ բանասրկուին ուղղուած խօսքերուն մէջ մենք կը կարդանք, ուր կ'ըսէ, Չարը, միշտ պիտի փորձէ քու գարշապարդ խայթել: Կրունկը խայթել կը նշանակէ իրականին մէջ մոլորեցնել, խաբել, դարձեալ մեղքի եւ մոլորութեան մէջ ձգել: Բայց միւս կողմէ, կնոջ սերունդը քու գլուխը պիտի ջախջախէ, կ'ըսէ: «Կնոջ սերունդը» բացատրութիւնը ակնարկութիւն է երկու տարբեր իրականութիւններու՝ կնոջ սերունդը առաջին հերթին մարդ արարածն է, ընդհանուր իր իմաստով, հետեւաբար մարդը կոչուած է նաեւ չարին վրայ յաղթող հանդիսանալու, այնպէս ինչպէս յետոյ Կայէն Աբելի դրուագին մէջ, Աստուած վերստին կը

յիշեցնէ, եւ մինչեւ Նոր Կտակարանը մնայուն կերպով մեզի կը յիշեցնեն, որ մենք կոչուած ենք չարին գլուխը ջախջախելու: Ատիկա ցոյց կու տայ մարդուն կարելիութիւն մը, ամբողջութեամբ չենթարկուելու չարին, այլ գէթ նոյնիսկ անկումէն ետքը կանգնելու եւ չարին վրայ յաղթող հանդիսանալու՝ միշտ հարկաւ Աստուծոյ օգնութեամբ:

Այդ փրկութեան խոստումը յատուկ կերպով կը վերաբերէր կնոջ սերունդին, եւ այս անգամ ինչպէս Պօղոս առաքեալ մեզի կը յիշեցնէ, ոչ թէ ամէն մէկ մարդ անհատի, այլ յատուկ կերպով անոր որ պիտի ըլլար կնոջ սերունդը: Ակնարկութիւնը Քրիստոսի է, որ ինչպէս Գադատացիներու նամակը (4.4) կ'ըսէ, Քրիստոսի որ կնոջմէ մը ծնաւ, եւ օրէնքին տակ մտաւ, որպէսզի մեզ բոլորս, որ օրէնքին տակ կը գտնուէինք, այդ գերութենէն դուրս բերէ, ազատագրէ: Հետեւաբար յատուկ կերպով կնոջմէ մը ծնած այդ անձը, Քրիստոս ինք պիտի բերէր խոստացուած փրկութիւնը մարդկութեան:

Այդ խոստումին տարբեր-տարբեր արտայայտութիւնները, տարբեր դրսեւորումները, կամ ուրուանկարները, երբեմն խորհրդաւոր կերպով պատկերուած ձեւերը, կը գտնենք Հին Կտակարանին տարբեր էջերուն, տարբեր գիրքերուն մէջ:

Այս փրկագործական նպատակը կարելի է քանի մը երեսներով ամփոփել այսպէս՝

1.- Առաջին հերթին, Աստուծոյ փրկագործական նպատակն էր մարդկութիւնը նորովի արարչագործել: Հիմա նոր արարչութիւն մըն է, որուն դիմաց կը գտնենք մենք մեզ՝ Քրիստոս եկաւ, կարծէք արարիչը ինքը իրեն նման ստեղծած իր արարածին պատկերը պիտի առնէր, մարդեղութեամբ, եւ պիտի գար վերստեղծելու ամէն ինչ, բայց առաջին հերթին այս անգամ վերջէն սկսելով՝ եթէ նախապէս ստեղծեց նիւ-

Թական տիեզերքը եւ յետոյ անոր գա-  
գաթը՝ մարդ արարածը, հիմա փրկա-  
գործութիւնը պիտի սկսի մարդ արա-  
րածէն, յետոյ տարածուելու համար  
ամբողջ աշխարհի վրայ: Ձեռով մը հա-  
կառակ, հակադարձ շարժում մըն է, որ  
պիտի սկսի այս նոր փրկագործու-  
թեամբ: Եւ այստեղ մեզի Նոր Կտա-  
կարանը կը ներկայացնէ պատկերը,  
օրինակ երբ կը կարդաք Ա. Կորնթա-  
ցիներու նամակին 15-րդ գլուխը, ինչ-  
պէս նաեւ Հռոմայեցիներու նամակին  
5-րդ գլուխը, գոյգ բացատրութիւններ  
կը գտնէք, որոնք ցոյց կու տան հին  
արարչութեան եւ նոր արարչութեան  
բաղդատականը կամ կապը:

Հին արարչութեան մէջ կար մեզի  
ծանօթ Ադամ մը, Պօղոս առաքեալ գայն  
կը կոչէ հին Ադամը, անոր դիմաց  
դնելու համար այս անգամ նոր Ադամը,  
նոր մարդը. եւ նոր մարդ կոչելով, առա-  
ջին հերթին իր մտքին մէջ ունի Քրիս-  
տոսի պատկերը, որուն նմանութեամբ,  
մեզմէ իւրաքանչիւրը պէտք է ըլլայ  
նորոգուած արարած մը, իր արարիչին  
պատկերին համաձայն, կատարեալ ար-  
դարութեամբ եւ սրբութեամբ եւ Աս-  
տուծոյ գիտութեամբ: Նոյն այն բաները  
որ առաջին մարդը ունէր եւ կորսնցուց,  
Յիսուս պիտի գար իր մարդեղութեամբ  
վերստին պարգեւելու մեզի, որպէսզի  
մենք վերստին նորոգուինք, նոր արա-  
րած ըլլանք, դարձեալ մեր Արարիչին՝  
Յիսուս Քրիստոսի պատկերին եւ նմա-  
նութեան համաձայն: Եւ այստեղ Պօղոս  
առաքեալ Ա. Կորնթացիներու նամակին  
մէջ հետեւեալ բաղդատականն ալ կ'ընէ,  
(15.45-49), «Սուրբ գիրքին մէջ այսպէս  
գրուած է. “Առաջին մարդը՝ Ադամ,  
ստեղծուեցաւ իբրեւ շնչաւոր էակ”,  
մինչ երկրորդ Ադամը՝ կենդանարար  
հոգի է: Արդ, շնչաւոր մարմինը նուազ  
կարեւոր է, քան հոգեւորը. ատոր  
համար ալ նախ շնչաւորը կու գայ եւ  
յետոյ հոգեւորը: Առաջին մարդը երկրէն  
էր եւ հոգեղէն, մինչ երկրորդ մարդը՝

մեր Տէրը, երկինքէն է: Ինչպէս որ էր  
հոգեղէնը, նոյնպէս ենք բոլոր հոգե-  
ղէններս. եւ ինչպէս որ է երկնաւորը՝  
նոյնպէս պիտի ըլլան բոլոր երկնաւոր-  
ները: Այսինքն, ինչպէս որ կը կրենք  
հոգեղէն Ադամին պատկերը, այնպէս  
պիտի կրենք նաեւ երկնաւոր Ադամին  
պատկերը»: Կը տեսնէք որ ամբողջու-  
թեամբ նոր ստեղծագործութեան մը  
պատկերացումն է փրկագործութեան  
առաջին նպատակը:

2.- Երկրորդ նպատակը, մարդիկը  
լուսաւորել է եւ Աստուծոյ ճշմարիտ  
ճանաչողութիւնը կամ ծանօթութիւնը  
վերստին տալ անոր, այն գիտութիւնը  
կամ ծանօթութիւնը որ մարդը ունէր եւ  
կորսնցուց, աղօտացաւ իր մտքին մէջ եւ  
ժամանակի ընթացքին ամբողջութեամբ  
կորսնցուց, նոյնը ուրեմն Քրիստոս  
եկաւ մեզի պարգեւելու: Եւ երկու բան  
կը յիշեցնեմ, նախ այն ինչ որ Ա. Տի-  
մոթէոսի նամակին մէջ առաքեալը մեզի  
կ'ընէ, թէ Աստուծոյ կամքը ի՞նչ է,  
Աստուած կ'ուզէ որ բոլոր մարդիկ  
փրկուին եւ հասնին ճշմարտութեան  
ճանաչումին: Եւ ճշմարտութեան ճա-  
նաչում ըսելով կը հասկնանք հետեւ-  
եալը, Աստուծոյ եւ մարդոց միջեւ միակ  
միջնորդ մը, Յիսուս Քրիստոս մարդը,  
որ ինքզինքը իբրեւ փրկագին տուաւ  
բոլոր մարդոց փրկութեան համար:  
Արդ, այս ճշմարիտ ճանաչողութեան,  
նաեւ Հին Կտակարանը կ'ընէ, Եսայի,  
Երեմիա մարգարէները կ'ականարկեն,  
գալիք այն ժամանակին որ ժամանակ-  
ներու լրումը պիտի ըլլայ, եւ երբ այլեւս  
մարդիկ, կ'ընէ, իրենց ընկերոջ պէտք  
պիտի չունենան սորվեցնելու Աստուծոյ  
մասին, որովհետեւ բոլորն ալ այդ  
գիտութիւնը լիովին, ամբողջականօրէն  
պիտի ունենան: Քրիստոսի մարդեղու-  
թիւնը հետեւաբար կը սկզբնաւորէ այդ  
նոր հանգրուանը:

3.- Երրորդ նպատակը մեզ սրբա-  
գործելն է: Անցեալին Աստուած իր  
ժողովուրդին այդ սրբութիւնը պար-

գեւեց երկու կերպերով, մէկը՝ Օրէնքն էր, սրբութեան օրէնք կոչուած նաեւ, միւսը՝ ծէսն էր, տաճարական կամ վկայութեան խորանին արարողութիւնները կամ գոհերը, որոնք նաեւ քաւութեան իբրեւ միջոց, Աստուծոյ ժողովուրդը պէտք էր սրբէին: Նոր ժամանակին Քրիստոս ինք եկաւ, առաջին հերթին նոր օրէնք մը տալու իր ժողովուրդին. այդ նոր օրէնքը անցեալի հին օրէնքին պէս գրաւոր օրէնք չէր, կամ պատուիրաններու գումար մը չէր: Յաճախ գիտէք որ մեկնիչներ լերան քարոզին համար ըսած են, Աստուծոյ ամբողջ նոր օրէնքը այդ լերան քարոզին մէջ ամփոփուած է, ուր օրէնք կը գրանենք, աւելի ճիշդ սկզբունքներ կը գտնենք, թէ՛ ինչ սկզբունքներով պէտք է ապրի Քրիստոսի հետեւորդը ըլլալու համար արքայութեան ժառանգորդ, արքայութեան գաւակ: Եթէ սկզբունքներ են, կը նշանակէ թէ Քրիստոս շատ աւելի լայն ձեւով մը կը գծէ մեր ճամբան, ոչ թէ նեղ սահման մը: Ծիշդ է որ նաեւ իր ճամբան նեղ կը կոչէ, դժուարին ըլլալուն համար, որովհետեւ այս ազատ կոչուած օրէնքը եւ հոգեւոր օրէնքը գործադրելը աւելի դժուար է քան այն չոր պատուիրանները, որ մենք կրնանք գտնել որեւէ օրինագիրքի մէջ, որովհետեւ կրնանք ըսել՝ այսպէ՛ս կ'ըսէ ինձի օրէնքը ես այսպէ՛ս կը կատարեմ: Միւս պարագային սակայն, երբ հոգեւոր իմաստով կ'առնենք օրէնքը, եւ պիտի գայն ազատ կերպով կիրարկենք, ամէն վայրկեան կը նշանակէ մեր դատումը պիտի կատարենք, մեր քրիստոնէական ամբողջ հոգին եւ արթնութիւնը պէտք է գործի լծենք, գիտնալու համար ինչն է որ ճիշդ կերպով պէտք է կատարենք: Բայց միաժամանակ նոր օրէնքին կողքին Քրիստոս պարգեւեց նաեւ մեզի իր յաւիտենական գոհը, անով մեզ սրբելու, քաւելու համար եւ եկեղեցւոյ վստահելու կամ եկեղեցիին յանձնելու համար, որպէսզի մեր սրբու-

թիւնը նաեւ տեւականանայ, այդ եկեղեցւոյ մարմինին մէջ մենք տեւականորէն սրբուինք, ունենալու համար մեր կեանքի իսկական առաջնորդութիւնը:

4.- Տակաւին ուրիշ նպատակ մը փրկագործութեան՝ աշխարհի բոլոր ժողովուրդներէն մէկ ժողովուրդ ունենայ: Անցեալին Աստուած ունէր կամ ընտրեց իր ժողովուրդը, բայց դիտենք որ Հին Կտակարանը ինքը մեղադրեց այդ ժողովուրդը, որ ինչպէս Շաալի մարգարէն այնքան գեղեցկօրէն կ'ըսէ, որ չկատարեց իր դերը, որով կոչուած էր լոյս դառնալու բոլոր ժողովուրդներուն, Աստուծոյ լոյսը, Աստուծոյ ճշմարտութիւնը եւ գիտութիւնը հասցնելու բոլորին: Քրիստոս ինք եկաւ, ինքզինք եւ իր աշակերտները յայտարարելու աշխարհի լոյս, եւ Քրիստոսի եկեղեցին ինքն է ներկայիս որ դէպի աշխարհ կ'ուղղէ Քրիստոսի պատգամը, աւետիսը, այդ աւետիսով լուսաւորելու եւ բոլորը կանչելու համար երկնաւոր Հօր տունը Քրիստոսի նոյն մարմինին մէջ, իբրեւ մէկ արքայութեան հպատակներ, զանոնք այդ արքայութեան կեանքին մասնակից դարձնելու համար:

Հիմա կու գանք «Երկինքէն իջաւ» բացատրութեան: Քրիստոսի իսկ բերնով յաճախակի կերպով ըսուած, «Ոչ ոք երկինքէն ելաւ, բացի մարդու Որդիէն որ երկինքէն իջաւ, եւ որ երկինքի մէջ է» (ՅՎ 3.13), կամ ուրիշ անգամ ըսուած, «Ես երկինքէն իջայ ո՛չ թէ իմ կամքս կատարելու համար, այլ կամքը անոր՝ որ զիս դրկեց» (ՅՎ 6.38), կամ դարձեալ ուրիշ առիթով մը ըսուած, «Ես եմ կենդանի հացը, կամ կեանքի հացը, որ երկինքէն իջայ», այդ մասին կը վկայեն:

Յստակ է որ բառացի կամ տառացի հասկացողութիւն մը իմաստ չի կրնար ունենայ, մասնաւորաբար եթէ մենք մեր մտքին մէջ ունինք այն ճշմարտութիւնը որ Աստուծոյ կը վերաբերի: Աստուծոյ համար մենք առհասարակ կ'ըսենք թէ ամէնուրեք է, ուր որ ալ իրեն աղօթեն,

ուր որ ալ երկու-երեք հոգիներ իր անու-  
նովը մէկտեղուին, ինք անոնց մէջ ներ-  
կայ է: Եթէ ամէն տեղ է, արդեօք Աստու-  
ծոյ համար տեղ մը, վայր մը պէ՞տք է  
պատկերացնել. ասիկա շատ սահմանա-  
փակ մտածողութիւն եղած չըլլա՞ր, մենք  
երբեք չենք կրնար նոյնիսկ երբ կ'ըսենք  
որ օրինակ «Հայր մեր որ յերկինս ես»,  
բայց երկինք ըսելով արդեօք վա՞յր մը կը  
հասկնանք, տե՞ղ մը կը հասկնանք, թէ կը  
հասկնանք ամբողջ միջոցը, կը հասկնանք  
ամբողջ տիեզերքը, եւ Աստուած ինքը կը  
լեցնէ երկինք եւ երկիր, եթէ հրեշտա-  
կային, Սերովբէներու երգը կ'ըսէ «Լի են  
երկինք եւ երկիր փառօք քո», քու  
փառքովդ, այդ փառքը միայն Աստուծոյ  
փառքին ճառագայթո՞ւմն է, թէ նաեւ իր  
ինքնութիւնն է, Աստուած ինքն է  
լեցնողը, ինչպէս Երեմիա մարգարէին  
բերնով կ'ըսէ, «Միթէ երկինքը եւ երկիրը  
լեցնողը ես չե՞մ»: 23-րդ գլուխին մէջ,  
Աստուած ինք եթէ կը լեցնէ երկինք եւ  
երկիր, ի՞նչպէս մենք կրնանք խօսիլ իջ-  
նելու մասին: Եւ եթէ Աստուածաշունչը  
այս բառը կամ բացատրութիւնը կը գոր-  
ծածէ, “երկինքէն իջաւ”, ի՞նչ պէտք է  
հասկնալ այդ բացատրութեան ետին:  
Եթէ ոչ, պարզապէս այն որ Աստուած  
մնայուն կերպով ներկայ է, բայց երբ որ  
կ'ուզէ իր ներկայութիւնը մեզի տեսա-  
նելի դարձնել, կ'որդեգրէ կերպ մը: Անց-  
եալին բազմաթիւ օրինակներով մենք  
տեսանք թէ ինչպէս Աստուած երբեմն-  
երբեմն տարբեր կերպարանքներով ինք-  
զինքը ցոյց տուաւ իր ժողովուրդին, իր  
ընտրեալներուն: Այս պարագային հար-  
կաւ կերպը տարբեր է, սակայն բացատ-  
րութեան եղանակը չի փոխուիր, այն  
իմաստով որ այս տիեզերքէն հեռու չէ  
Աստուած, եւ ինչ որ կը վերաբերի մար-  
դեղութեան, պարզապէս “երկինքէն ի-  
ջաւ”, կը նշանակէ թէ ինքզինքը կատա-  
րելապէս մարդ դարձուց, տեսանելի  
դարձուց, եւ մեր միջեւ բնակեցաւ, այն-  
պէս ինչպէս Աստուածաշունչը ինքը մեզի  
կ'ըսէ:

Երկու-երեք բացատրութիւններ  
նոյն այդ “երկինքէն իջաւ” արտայայ-  
տութեան կապուած.-

1.- Հաւատամքին մէջ ինչո՞ւ դըր-  
ուած է “երկինքէն իջաւ” բացատրու-  
թիւնը կամ յաւելումը: Ասով կը շեշտուի  
Քրիստոսի ճշմարտապէս աշխարհ եկած  
ըլլալը: Առաջին մտահոգութիւնը որ ու-  
նեցան Նիկիոյ հայրերը, առաջին երկու  
դարերուն այն նշանաւոր աղանդաւո-  
րական շարժումն էր, որ Կոստանիկեան  
կը կոչուէր: Եւ Կոստանիկեան աղանդա-  
ւորներուն մեծագոյն տոկոսը Քրիստո-  
սի աշխարհ գալուստը կը ճանչնային,  
բայց ճշմարիտ մարդեղութիւնը կ'ուրա-  
նային: Քրիստոս աշխարհ եկաւ, կ'ը-  
սէին, իբրեւ երեւոյթ, Աստուծոյ ներկա-  
յութիւնն էր, բայց շուքի մը պէս, երե-  
ւոյթի մը պէս, ոչ իբրեւ ճշմարիտ մարդ,  
ոչ այնպէս ինչպէս Ղուկասու Աւետա-  
րանին մէջ կը կարդանք, եկաւ, կանգնե-  
ցաւ, յարութենէն ետք իսկ առաքեալնե-  
րուն միջեւ: Եկէք, տեսէք, շօշափեցէք,  
ըսաւ, եւ ուրուական չեմ, ճշմարիտ  
մարմին եմ: Արդ, այս աղանդաւորները  
առհասարակ Քրիստոսի աշխարհ գա-  
լուստը, նոյնիսկ մարդեղութիւնը, ծը-  
նունդը, երեւոյթ կը կոչէին, անոր հա-  
մար ալ յաճախ կոչուած է նաեւ երեւու-  
թականներ: Եւ այս երեւութականները  
առաջին երկու դարերով չէր որ վերջա-  
ցան: Օրինակ Հայաստանի մէջ 7-րդ դա-  
րուն եւ 8-րդ դարու սկիզբը կային երե-  
ւութականներ, աղանդաւորներ, որոնք  
դարձեալ Քրիստոսի ճշմարիտ աստուա-  
ծութիւնը կ'ուրանային եւ մեր նշանա-  
ւոր մէկ Հայրապետը՝ Յովհան Օճնեցի  
Կաթողիկոսը, ամբողջ գիրք մը ունի  
կամ ընդարձակ գրութիւն մը ունի, որ  
կը կոչուի “Ընդդէմ Երեւութականաց”:  
Հետեւաբար առաջին հերթին Քրիստոսի  
ճշմարիտ մարդեղութիւնը կը հաստա-  
տէին այս աղանդին կամ նման մտածո-  
ղութեան դիմաց:

2.- Հաւատամքին մէջ դարձեալ առ-  
նուած է ասիկա, ցոյց տալու համար,

հակառակ ձեռով, Քրիստոսի երկնային ծագումը, ըսելու համար որ Քրիստոս ճիշդ է որ ճշմարտապէս մարդ դարձաւ, բայց երբեք չդադրեցաւ Աստուած ըլլալէ: Ըշմարիտ մարդ է, բայց միաժամանակ գերերկրային էակն էր, երկնային ծագում ունէր, աստուածային ինքնութիւն ունէր: Բայց այստեղ հակադիր այդ երկու երեսները միաժամանակ յիշուած են: Եւ գիտէք որ այս կապակցութեամբ կրնանք մէջբերել, Յովհաննէս Աւետարանիչը որ այսպէս կը խորհրդածէ Քրիստոսի մասին. «Ան որ երկինքէն կու գայ, բոլորէն գերիվեր է» (ՅՎ 3:31): Երկինքէն իջած ըլլալը, ցոյց կու տայ Քրիստոսին գերիվեր ըլլալը, մարդոցմէ տարբեր ըլլալը. բուն նպատակը այդ տարբերութիւնը շեշտելն է: Բայց տակաւին այս բացատրութիւնը, կարելի է ըսել Հաւատամքին մէջ առնուած է, ցոյց տալու համար նաեւ Աստուծոյ Որդիին անսահման խոնարհումը մեր փրկութեան համար: Դարձեալ Փիլիպպեցիներու նամակին կը դիմենք, որ ինք բնութեամբ Աստուած էր, հետեւաբար կատարեալ, ճշմարիտ Աստուածն է, ամօթ չհամարեց իր փառքը ամբողջութեամբ մէկ կողմ դնել եւ մեր սիրոյն համար, մեր փրկութեան համար խոնարհիլ, մարդանալ, մեզի նման ըլլալ, մեր կերպարանքը առնել, եւ տակաւին աւելի խոնարհիլ, քան մարդ արարածը, որովհետեւ մարդիկ իրենց խոնարհ վիճակին մէջ կրնան չխոնարհիլ: Աստուած իր բարձրութենէն խոնարհեցաւ, եւ այնքան խոնարհեցաւ, մինչեւ խաչի անարգ մահը, կ'ըսէ, խոնարհումի ծայրագոյն աստիճանը մեզի ցոյց տալու համար, որպէսզի ցոյց տայ այն բացառիկ պատիւը կամ փառքը, որ Աստուած կ'ուզէր վերապահել մարդ արարածին, մարդուն վերստին պարգեւելու համար, եւ որուն դիմաց բնականօրէն մարդուն միակ պատասխանը պէտք է ըլլայ նոյն խոնարհութեամբ, Տիրոջ ընծայած փրկութեան ընդունումը:

Քրիստոսի մարդեղութեան մասին երբ կը խօսինք, այստեղ կարեւոր հարցում մըն ալ ունինք, որուն պէտք է պատասխան տալ.- Արդեօք, ինչպէս յաճախ մեր եկեղեցւոյ հին հայրերն ալ հարցը դրած են, անհրաժեշտ էր Քրիստոսի մարդեղութիւնը, Աստուած եթէ կամենար, ուրիշ կերպով չէ՞ր կրնար փրկել մարդ արարածը: Պատասխանը այնքան բացայայտ է՝ հարկա՛ւ կրնար, Աստուծոյ համար անկարելի բան կա՞յ: Եթէ անկարելի բան չկայ, ինչո՞ւ չորդեգրեց ուրիշ կերպ մը, քան մարդանալ: Կրնանք ամէնէն միամիտ պատասխանով սկսիլ, հարցում մըն է, որուն պատասխանը մենք ճշգրիտ չենք կրնար գիտնալ: Աստուծոյ ծրագրին պատասխանը միայն Աստուած ինքը գիտէ, կրնանք ըսել: Բայց միւս կողմէ, հարկաւ այս պատասխանէն անդին մենք կը փնտռենք որոշ պատասխաններ, գորս մեր տրամաբանութիւնը կը փորձէ հայթայթել մեզի: Արդ, ի՞նչ պատասխաններ կրնանք գտնել այս հարցումին:

Առաջին հերթին, կրնանք ըսել Աստուած մարդացաւ մեզի համար, կամ մարդկութեան ցոյց տալու համար այն գերազանց սէրը որ Աստուած ունէր: Ամբողջ ստեղծագործութիւնը մենք կը հասկնանք իբրեւ արտայայտութիւնը կամ բղիտումը Աստուծոյ սիրոյն: Աստուած ամէն ինչ որ ըրաւ, իր սիրոյն իբրեւ դրսեւորում կամ արտայայտութիւն ըրաւ: Հետեւաբար մարդեղութիւնն ալ, որ մարդը փրկելու համար էր, ուրիշ պատճառ չի կրնար ունենալ եթէ ոչ Աստուծոյ նոյն սէրը: Աստուած միայն արարիչ մը չէ այն իմաստով որ այս աշխարհը ստեղծեց, եւ յետոյ այլեւս այս աշխարհը լքեց, այնպէս ինչպէս Յոյն որոշ մտածողութիւններ կ'ըսէին: Ընդհակառակը, Աստուծոյ սէրը չէր կրնար եւ չի կրնար այդպիսի բան թոյլատրել: Նոր Կտակարանն ալ մեզի կու գայ տարբեր կերպերով ամբողջացնել աշխարհին ու մարդուն նկատմամբ Աստուծոյ սէրը:

տուժոյ Հոգածուլթեան պատկերը: Ատիկա Հովիւի պատկերն է, որ իր ոչխարներուն առաջնորդն է: Քրիստոս նոյն այդ պատկերը ինքզինքին պատշաճեցուց, ըսելով «Ես եմ հովիւն քաջ» (ՅՎ 10.11), եւ միաժամանակ ինքն էր որ տուաւ կորսուած ոչխարին առակը, անառակ որդիին առակը, կորսուած դրամին առակը, այս երեքին մէջ ալ «կորսուած» բացատրութիւնը կայ, եւ որ կը յիշեցնէ մեզի մէկ բան, կորսուածը կրնայ մեզի մարդուն վիճակը միայն ներկայացնել, բայց կորսուածին դիմաց կայ միշտ փնտուողի մը պատկերը, հայրը որ կը սպասէ իր գաւազը, եւ երբ կը տեսնէ որ անիկա կը վերադառնայ, նաեւ ընդառաջ կը վագէ անոր, միւս կողմէ Հովիւը, որ կը ձգէ ինչն ըստ ինն, կ'երթայ փնտուելու մէկ ոչխարը: Միւս առակին մէջ, կ'ինքն որ ամէն գործ ձգած, իր այդ դրամը փնտուելու համար աւելը ձեռք կ'առնէ, ամբողջ տունը տակն ու վրայ կ'ընէ, եւ յետոյ է որ եզրակացութիւնը կը տրուի, եւ երբ որ կը գտնէ անով է որ կ'ուրախանայ, այդ կորսուածին համար շատ աւելի, քան չկորսուածին համար: Հետեւաբար երեքին մէջ ալ մեզի ցոյց կը տրուի Աստուծոյ պատկերը որպէս փնտուող, որպէս իր արարածը, իր ստեղծած մարդը հետապնդող, այսինքն գայն չլքող, այլ ընդհակառակը, մնայուն կերպով անոր կառչած մնացող, մինչեւ որ գայն գտնէ:

Նոյնը կ'ըսէ Յովհաննու Աւետարանին մէջ Քրիստոս ինք, երբ մեզի կը յիշեցնէ թէ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի, այլ յաւիտենական կեանքը ունենայ (Հմմտ ՅՎ 3.16):

Եւ դարձեալ նոյն Աւետարանին մէջ է որ, վերնատան մէջ նստած, Յիսուս իր աշակերտներուն կ'ըսէր, մեծագոյն սէրը այն սէրն է, երբ բարեկամ մը ինքզինքը կու տայ իր բարեկամներուն համար: Ուրեմն ինքնանուէր սէրն է մեծագոյն սէրը, եւ այս պարագային մարդեղու-

թիւնը որ իրեն լրում պիտի ունենար Քրիստոսի կամաւոր գոհագործումը, այն գերագոյն սէրն էր որ եկաւ փնտուելու, եւ որ ինքզինքը տուաւ գտնելու եւ փրկելու համար մարդ արարածը:

2.- Քրիստոսի մարդեղութիւնը, Աստուծոյ մարդեղութիւնը մեզի ցոյց կու տայ անգամ մը եւս, մարդ արարածի գերագանց արժէքը՝ Աստուծոյ աչքին: Արդարեւ, միշտ ալ կը կրկնենք նոյն բացատրութիւնը, այնպէս ինչպէս Սաղմոսերգուն կը զարմանայ եւ հիացումով կ'արտայայտէ, նոյն զարմացումով եւ նոյն հիացումով մենք է որ կ'ըսենք Ցորդ սաղմոսին բառերով, «Ի՞նչ է մարդ արարածը, կ'ըսէ սաղմոսերգուն իր խօսքը Աստուծոյ ուղղելով, որ դուն գայն նկատի կ'առնես» (Հմմտ Սղ 8.4-6), ի՞նչ է մարդ արարածը որ դուն այսքան փառքով, պատիւով գայն զարդարեր ես, քու ամբողջ ստեղծագործութեանդ, քու բոլոր ստեղծածներուդ վրայ տէր եւ իշխան կարգեր ես գայն: Մարդուն ընծայուած այս բացառիկ պատիւը, թէ Աստուած ինչո՞ւ տուած է, ճշգրիտ կերպով մենք կրնանք գիտակցիլ, եւ սակայն մէկ բան գիտենք, անսխալ այն իրողութիւնն է որ Աստուածաշունչ Մատեանը կ'արձանագրէ, եւ որուն համար Աստուած նոյնիսկ իր կեանքը տալը երբեք աւելորդ կամ փոքրութիւն չի համարեր, ատիկա ինքնին մեզի մտածել կու տայ այն կերպը, որով Աստուած մարդուն կը մօտենայ:

Աստուծոյ որդեգրած այս մօտեցումը, մարդուն քով կամ մարդուն մէջ բնականօրէն յառաջ կը բերէ հակազդեցութիւն մը, մտածելու եղանակ մը: Օրինակ, առաջին երեք Աւետարաններուն մէջ մենք կը կարդանք որ Քրիստոս առիթով մը ծովեզերք գացեր էր, այնտեղ հանդիպեցաւ Ղեւի անունով մէկու մը, որ նստած էր, իր մաքսաւորութեան պաշտօնին, եւ գայն կանչեց: Ղեւի ձգեց ամէն ինչ եւ գնաց, հետեւեցաւ իր տիրոջ: Մենք յաճախ, ինչպէս դասարանէն

ներս երբ Աստուածաշունչը կը մեկնենք, կամ եկեղեցւոյ բեմէն կը մեկնենք, որոշ բաղդատութեամբ մը հետեւեալը կը նշենք.- Իր միւս առաջին աշակերտները երբ որ կանչեց Քրիստոս, օրինակի համար Պետրոս եւ Անդրէաս, երկու եղբայրները, կամ Ջեբէղէոսի երկու որդիները՝ Յովհաննէսը եւ Յակոբոսը երբ որ կանչեց, անոնց հետ նախապէս հանդիպումներ ունեցեր էր. ձեռով մը անոնք տեսեր էին, խօսեր էին հետը, ճանչցեր էին մասնակիօրէն զինք, հետեւաբար երբ որ մեր Տէրը ինք ըսաւ «Հետեւեցէք ինձի», ձեռով մը նախապատրաստուած ձգեցին ամէն ինչ, հետեւեցան Տիրոջ:

Ղեկ տարբեր անձ մըն էր, մէկն էր որ վստահաբար Քրիստոսի հետ կապի մէջ չէր եղած, այլ հաւանաբար առաջին անգամն էր, երբ կը լսէր Յիսուսի քարոզութիւնը, բայց երբ լսեց Անոր կոչը, անմիջապէս ձգեց եւ հետեւեցաւ: Ի՞նչ բանը պատճառ եղաւ որ անոնց պէս ինք եւս լքէ իր գործը, իր դիրքը, (եւ մանաւանդ շահու լաւ աղբիւր էր իր գործը), եւ հետեւի Տիրոջ: Այստեղը մենք յաճախ կը տեսնենք հոգեբանական պատճառ մը: Հոգեբանական այն պատճառը, որով մաքսաւորները որոնք լքուած եւ իրենց ժողովուրդին կողմէ արհամարհուած մարդիկ էին, իրենց ժողովարաններէն դուրս դրուած մարդիկ էին, ընկերային շրջանակներու մէջ իսկ չընդունուած մարդիկ էին: Ուրեմն Մատթէոս ինքզինքը իբրեւ այդպիսին գիտէր, այն պահուն, երբ տեսաւ թէ ինչպէս իր ժողովուրդին մէջ մեծ յարգ վայելող, այս նշանաւոր վարդապետը, հրաշագործ վարդապետը, կը մօտենայ իրեն պէս անարժան համարուած, անընդունելի համարուած մէկուն, եւ կոչ կ'ուղղէ՝ հետեւելու Իրեն, այդ պահուն մէկ անգամէն հոգեփոխութիւն մը ապրեցաւ:

Նոյն փրկագործական պատճառն է որ այստեղ կ'ուզենք տեսնել: Մարդ արարածը, մասնաւորաբար իր անկեալ վիճակին մէջ, երբ կը գիտակցի թէ ինչ-

պէս Աստուած կու գայ իրեն, աստուածային փառքէն մերկանալով, եւ կը խոնարհի զինք փրկելու համար, բնական կերպով պէտք է ունենայ իր մէջ զգացում մը, որ անարժանութեան զգացում մին կողքին, ընդհակառակը՝ արժանաւորութեան զգացումն է: Այլ խօսքով, պէտք է մարդը մէկդի դնէ այն մտածողութիւնը որ յատուկ է մարդ արարածին, եւ որդեգրէ այն հայեացքը, որ Աստուծոյ հայեացքն է: Ո՛չ թէ այնպէս ինչպէս մենք կը դիտենք եւ կ'արժեւորենք մենք մեզ, այլ ինչպէս Աստուած կը դիտէ եւ կ'արժեւորէ մենք մեզ: Եւ ասիկա դարձեալ ցոյց կու տայ այն գերագոյն արժէքը որ ունինք Աստուծոյ աչքին:

3.- Երրորդ, միւս կողմէ կ'ըսենք, արդարութեան պահանջը մը կայ, որ կարծէք Քրիստոս եկաւ մարմնաւորապէս հատուցանելու համար: Քրիստոս եկաւ, ինքզինքը փրկանք տալու մեր բոլորին փրկութեան համար: Փրկանք բացատրութիւնը ցոյց կու տայ տեսակ մը փոխարէնը. արդ, այստեղ կայ հասկացողութիւն մը որ մենք կը կոչենք արդարութեան հասկացողութիւնը, մարդ արարածը մահուան դատապարտուած պէտք էր ըլլար իր գործին համար: Այլ խօսքով, իր յանցանքը, իր անօրէնութիւնը իբրեւ բնական հատուցում, պէտք էր ունենար մահը: Բայց Աստուած չուզեր մարդուն մահը եւ չձգեց որ մարդը մահանայ: Անցեալին այդ նոյնիսկ Ֆիլիքապէս մահուան ենթարկուած մարդուն համար սահմանեց ուրիշ կերպեր՝ ծխական գոհեր, որպէսզի անոնցմով յիշեցնէ մարդուն, թէ իրեն համար փրկութիւն մը ունի վերապահած: Աստուած ուզեց ցոյց տալ որ ինք կու գայ իր կեանքը տալու, որպէս փոխարէնը մարդկային մեր մեղանշական կեանքերուն, մեզ գնելու եւ անմահութեան սահմանելու համար:

Դարձեալ, Աստուած մարդացաւ, չարին վրայ յաղթանակ մը տանելու համար: Երբ կ'ըսենք ազատել, ազատագ-



րել, փրկել, յաճախ կայ պատկերացում մը որ ոյժի գործածութիւնն է: Ասիկա աշխարհային հասկացողութիւնն է: Ճիշդ այնպէս ինչպէս անցեալին Երրայեցի ժողովուրդը երբ Հին Կտակարանի էջերուն մէջ կարդաց Աստուծոյ փրկագործութեան մասին, միշտ ալ այդ փրկագործութիւնը պատկերացուց նիւթական եղբրով, քաղաքական հասկացողութեամբ, ընկերային կերպերով, եւ անոր մէջ տեսաւ նոյն ոյժի եւ բռնութեան գործածութիւնը, յաղթական ըլլալու համար ուրիշներուն վրայ:

Հակառակ անոր որ մենք հիմա չարին վրայ յաղթանակի մասին կը խօսինք, բայց դարձեալ Աստուծոյ գործածած ճանապարհը ոյժի ճանապարհը չէ երբեք, խոնարհութեան ճամբան ոյժին ճամբան՝ չարին ճամբան է: Այս երկու տրամաբանութիւնները հիմնովին հակառակ են իրարմէ: Չարը կը մղէ մեզ որ մենք որդեգրենք ոյժի գործութեան տարբերակը, եւ այդպէս ուրիշներու վրայ հաստատենք մեր տիրապետութիւնը: Մինչդեռ Աստուծոյ ճանապարհը ճիշդ հակառակն է: Նայեցէք՝ Աստուած կը խոնարհի մարդը փրկելու համար: Իսկ այդ խոնարհումը անոր համար, որ մարդուն մէջ կտորէ այն ինչ որ չարին ներգործութենէն յառաջ եկածն է՝ հպարտութիւնը: Հպարտութիւնը ոյժի տրամաբանութիւնն է: Մարդուն մէջ առաջին մեղանշումէն սկսեալ, նոյն հպարտութիւնն էր որ բոյն դրած էր, եւ Քրիստոս եկաւ նախ մարդուն մէջէն այդ հպարտութիւնը վերցնելու, եւ ատով մարդը չարին դէմ յաղթող հանդիսացնելու:

5.- Ի վերջոյ հինգերորդ երեսը. Աստուած մարդացաւ, իր մարմնին մէջ մեղքը սպաննելու եւ մեզ ազատութեան հոգիով Իրեն կապելու համար, եւ այստեղ կը տեսնենք վերջին կարեւորագոյն երեսը, որ մենք կրնանք կոչել սկզբնական մեղքին յաղթահարումը: Մենք երբ կը մկրտուինք եկեղեցոյ աւագանէն,

կ'ըսենք որ այդ լուացումով մեզմէ կը թօթափենք աղամական կամ սկզբնական մեղքը: Քրիստոսի պատկերով նորոգուած մարդուն հիմնական տարբերութիւնը, ինչպէս մեզի ցոյց կու տայ Պօղոս առաքեալ, պիտի կայանայ նոր մտածողութեան մը որդեգրումին մէջ, այդ հին մտածողութիւնը ամբողջութեամբ պէտք է նահանջէ մեր մէջէն, եւ նոր մարդը յայտնուի, մտածելու նոր կերպով մը. եւ այդ կերպով է որ միայն մենք մեր մէջ մեղքը պիտի փորձենք սպաննել, այնպէս ինչպէս որ Քրիստոսի համար ինքը կ'ըսէ, օրինակ Հռոմայեցիներու (8.3-4) մէջ. «Արդարեւ, ինչ որ Օրէնքը չէր կրնար ընել, մարդկային բնութեան տկար ըլլալուն պատճառով, Աստուած իրագործեց՝ աշխարհ զրկելով իր Որդին, որ մեղքը յաղթահարելու համար մեր մեղանշական բնութիւնը իր վրայ առաւ եւ իր մարմնին մէջ դատապարտեց մեղքը, որպէսզի մենք, որ հոգեւորապէս կ'ապրինք եւ ո՛չ մարմնաւորապէս, կարենանք լրիւ գործադրել օրէնքին բոլոր պահանջները»: Քրիստոս ատկա իր մարմնին մէջ իրագործեց, եւ մենք Քրիստոսի փրկագործութեան մեր մասնակցութեամբ այդ արդիւնքը կ'առնենք մեր մէջ, ու մենք ալ աստիճանաբար մեր մէջ կը մահացնենք մեղքը, նաեւ կը փոխակերպուինք իր պատկերին համաձայն, մինչեւ որ դառնանք ամբողջապէս Քրիստոսի փրկագործութեան պատկերը:

Ինչո՞ւ համար Քրիստոսի այս մարդեղութիւնը տեղի չունեցաւ աւելի շուտ կամ աւելի ուշ, եւ տեղի ունեցաւ պատմութեան մէջ այսինչ ժամանակին: Թէ ինչո՞ւ համար, քիչ առաջ ըսինք, ամէն բանի տէրը Աստուած Ինքն է, հետեւաբար Աստուած Ինք գիտէ ճիշդ ժամն ու ժամանակը: Բայց դարձեալ մեր մարդկային տրամաբանութիւնը կրնայ որոշ լուծում մը գտնել, եւ մենք Աստուծոյ տնօրինութեան վստահ ըլլալով հանդերձ, կը փնտռենք մարդկայնօրէն մեզի

համար հասկնալի այդ ճշմարտութիւնը:

Առաջին ճշմարտութիւնը որ ամէն մէկ Աստուածաշունչ կարդացող կամ սերտող գիտէ, այն է որ Աստուած ունի գործելու կերպ մը, որ անպայման հրաշագործութիւնը չէ: Մենք յաճախ շատ երեւութականօրէն կը տարուինք, որովհետեւ Աստուածաշունչի մէջ տեղ-տեղ հրաշքներու մասին կը խօսուի, նաեւ կ'որդեգրենք տրամաբանութեան կերպ մը, որ ամէն ինչ կը փորձենք կապել հրաշալիին: Աստուծոյ գործելակերպը հրաշքը չէ, հրաշքը բացառութիւն է, սովորական գործելակերպ չէ, առիթով մը հրաշքը կ'ոչեցի նշան, եւ նշան մը աւելի անհաւատներուն համար է քան թէ հաւատացեալներուն համար:

1.- Ստեղծագործութիւնը Աստուած ի՞նչ կերպով իրագործեց, հարկաւ ոչինչէն նախ յառաջ բերաւ երկինք եւ երկիր, բայց յետոյ գայն ձեւաւորելու, գայն լեցնելու համար վեց օրերու ընթացքին ըրաւ, եւ օր բացատրութեան ետին յայն ժամանակի սահմաններ կամ տեւողութիւններ կան, հետեւաբար 24 ժամուանօրուան հասկացողութիւն չէր ատիկա: Եւ միաժամանակ այդ երկար ժամանակի տեւողութիւնները պարզապէս անոր համար որ Աստուած տիեզերքի մէջ ստեղծեց բնութեան օրէնքները, եւ ուզեց որ ամէն ինչ բնութեան օրէնքներու համաձայն ըլլայ, ամէն ինչ աստիճանաբար իր զարգացումը ունենայ, կրնա՞ր երկվայրկեանի մը մէջ այդ բոլորը ընել, կրնա՞ր ընել, բայց չըրաւ, ձգեց որ բնութեան օրէնքը ատիկա ընէ:

Դարձեալ, երկրորդ օրինակով մըն ալ կրնանք Աստուծոյ որդեգրած այդ գործելակերպը պատկերացնել մեզի համար. անով որ Աստուած ուզեց նախ պատրաստել մարդիկը, յետոյ միայն իր փրկութիւնը ուղարկելու համար, նախապատրաստութեան ընթացքէ մը ուզեց անցնել մարդիկը: Կրնա՞ր զրկել աւելի կանուխ. անշո՛ւշտ կրնար: Բայց տուեալ ժամանակին մարդը թէ՛ ինք

պատրաստ պիտի չըլլար, թէ՛ այդ գալուստին տարբեր-տարբեր երեսները պիտի չկարենար գիտնալ, եւ անկէ ետք ալ իրեն տրուած այդ պարգեւին, շնորհքին մեծութեան գիտակցութիւնը պիտի չկարենար ունենալ մարդը: Մենք ալ յաճախակի կերպով նախապատրաստութեան պէտք ունինք: Առէք մեր մարմինը: Պահ մը ենթադրենք որ մեր մարմինը ունի տկարութիւն մը, վէրք մը, հիւանդութիւն մը եւ գործողութեան պէտք է ենթարկուի, ճիշդ այնպէս ինչպէս անկեալ մարդը պէտք էր վերստեղծուէր, տեսակ մը Աստուծոյ մէկ բացառիկ գործողութեամբ վերագտնելու համար իր նախկին վիճակը, գործողութեան ենթարկուող մարդը պատրաստութեան ընթացքէ մը կ'անցնի՞, այդ պատրաստութիւնը թէ՛ Ֆիզիքական գետնի վրայ, թէ՛ հոգեբանական գետնի վրայ: Երբեմն շատ կարճ կրնայ տեւել, այսինքն օր մը առաջ կրնայ մտնել հիւանդանոց եւ գործողութիւն ըլլալ. երբեմն սակայն շատ երկար ժամանակի կը կարօտի, մասնաւորաբար այն պարագաներուն, երբ որ գործողութիւնը անմիջապէս կարելի չէ ընել: Գիտէք շատ մը հիւանդութեանց պարագային բժիշկը կ'ըսէ որ տակաւին անիկա հասունալու պէտք ունի, որպէսզի յետոյ կարելի ըլլայ գործողութիւնը ընել: Աստուծոյ գործելակերպն ալ, փրկութեան ծրագրին մէջ, ճիշդ նոյնն էր: Մարդկութիւնը տուեալ վիճակին մէջ, կամ անցեալի այս կամ այն հանգրուանին կրնար այդ փրկութիւնը ընդունիլ, բայց այդ փրկագործութիւնը կրնար այնքան ազդու չըլլալ, որքան յատուկ նախապատրաստութենէ մը ետք: Աստուած ինք ուզեց այդ պատրաստութիւնը տալ: Այդ պատրաստութիւնը տրուաւ իր օրէնքով, մարգարէական կանխասացութիւններով, եւ բոլոր այն խոստումներով, որոնք կը վերաբերէին Քրիստոսի, որու համար նաեւ, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ, Օրէնքը մեր խնամակալ դաստիարակը եղաւ, մեզ

Յիսուս Քրիստոսի առաջնորդելով, մինչև հաւատքին ժամանակը: Բայց հիմա որ, կ'ըսէ, հաւատքը եկած է, մենք դաստիարակի կարիքը չունինք, (հմտ Գղ 3:24-25) բայց պէտք էր անգամ մը այդ պատրաստութեան ընթացքէն անցնէին:

Թէ իրօք այն ժամանակը որ Աստուածաշունչը պիտի կոչէր լրումը, կարելո՞ր էր, այսինքն ժամանակի լրանալը կամ լեցուիլը ժամանակին, անհրաժեշտ էր: Այսօր ալ նոյն բանը մարդիկ կը փորձեն տարբեր ձեւերով տեսնել, երբ որ ամբողջ քրիստոնէութեան պատմութիւնը անցնող երկու հարիւր տարիներուն փորձեցին վերլուծումի ենթարկել, ըսելով թէ արդեօք Քրիստոս իսկապէ՞ս աշխարհի պատմութեան յարմար ժամանակին եկաւ: Թէ Աստուծոյ կամքին եւ ծրագրին մէջ յարմար ժամանակն էր: Հիմա մարդոց աչքով դիտենք, յարմար ժամանակն էր: Կ'ըսեն, որ շատ մը բաներ կարեւոր էին որպէսզի այդ փրկագործութիւնը իր ամբողջական արդիւնքը ունենար: Եթէ փրկագործութիւնը կախում ունէր այդ փրկութեան աւետիսին տարածումէն ամբողջ աշխարհ, ուրեմն հետեւեալ ձեւով մտածենք: պահ մը երթանք մինչեւ Աբրահամ Նահապետի ժամանակները, երբ առաջին անգամ Աստուած իր խոստումը տուաւ անոր, եւ ըսաւ, «Քու գաւակիդ ընդմէջէն պիտի օրհնուին աշխարհի բոլոր ազգերը», Աբրահամի ժամանակ կրնա՞ր իրագործուիլ ատիկա: Փրկութեան պատգամը աշխարհ երթալու համար նախ պէտք էր աշխարհը ինք որոշակի պայմաններ ներկայացնէր, Աբրահամի ժամանակներուն եւ մինչեւ կարելի է ըսել Քրիստոսի ժամանակները, աշխարհի ամէն մէկ երկիրը, ամէն մէկ ժողովուրդը, ամէն մէկ ազգ բաժան-բաժան վիճակ մը կը ներկայացնէր, իրարու հակադիր, իրարու թշնամի, եւ հետեւաբար մէկ երկրէն միւսը, մէկ ժողովուրդէն միւսը պատգամի մը անցումը այնքան դիւրին չէր կրնար ըլլալ:

Երկրորդ, պատգամաբար մը եթէ պիտի երթար ուրիշ երկիր մը, հարկաւ պիտի խօսէր նաեւ լեզուով մը, եւ պէտք է հասկնալի ըլլար: Պատգամին տարածման համար եւս պէտք էր նախապատրաստական տուեալներ ըլլային, որոնք հետագային եղան: Եւ հետագային եղած տուեալները հետեւեալներն են: մենք կը տեսնենք որ Քրիստոսէ կարճ ժամանակ մը առաջ, մօտաւորապէս 336 թուականէն սկսեալ, Աղեքսանդր Մեծ, աշխարհի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով կը հաստատէր կայսրութիւն մը, որ պարզապէս երկիր մը գրաւել գայն իրեն քաղաքականապէս ենթարկելը չէր, այլ՝ գայն գրաւելէ, տիրապետութիւն հաստատելէն ետք, այդ երկիրներուն փոխանցել լեզու եւ մշակոյթ: Առաջին անգամ ըլլալով յունարէն լեզուն յունական աշխարհէն դուրս կու գար, սեփականութիւնը կը դառնար բոլոր այն երկիրներուն, ուր Աղեքսանդր Մակեդոնացիի բանակները կը հասնէին, եւ հոն ուր յունական գիտութիւնը կը տարածուէր, պատմութեան մէջ կոչուած է հելլենական կամ հելլենիստական մշակոյթ:

Ասիկա յառաջ կը բերէր կայսրութիւն մը, որուն մէջ հետեւաբար մօտաւոր կերպով նոյն լեզուն կը խօսուէր ամէնուրեք: Քրիստոսէ անմիջապէս առաջ, երբ հռոմէական կայսրութիւնը ինք ժառանգորդը եղաւ այս աշխարհին՝ յունական կայսրութեան, բնականօրէն այդ հռոմէական կայսրութեան սահմանները ընդարձակուեցան, նոր երկիրներ մտան իր կազմին մէջ, եւ սակայն բոլորին ալ լեզուն հռոմայերէնը չէր, այլ յունարէնն էր, յունարէն կը խօսուէր պաղեստինի մէջ, Սուրիոյ մէջ, Կիլիկիոյ մէջ, Յունաստանի մէջ, Հռոմի մէջ, մինչեւ Բրիտանիա, կամ ըսենք Անգլիական կղզիները, Ափրիկեան ցամաքամասին վրայ, Եգիպտոս, ամէնուրեք, Միջերկրականեան աւազանին մէջ,

այլ խօսքով Հռոմէական կայսրութիւնը եզերող երկիրներուն մէջ: Անոնք լեզուով միացան: Քաղաքական մէկ տիրապետութիւն կար, հետեւաբար մէկ երկրէն միւս երկիրը անցումը դիւրացած էր այլեւս, եւ տակաւին առաւելութիւն մը որ մինչ այդ չէր կրնար երեւակայուիլ՝ բայց ստեղծուած էր՝ կայսրութիւնն էր, որովհետեւ ունէր իր զօրեղ բանակ, տէր էր բոլոր սահմաններուն, խաղաղութիւն հաստատած էր ամէնուրեք, եւ ունէր նաեւ ճամբաներ որոնք ամբողջ կայսրութիւնը կը միացնէին իրարու, երթեւեկը, ճամբորդութիւնը այնքան դիւրացած էր. ուստի յարմարագոյն պահն էր երբ որ ամբողջ կայսրութիւն մը մէկ անգամէն կրնար որդեգրել նոյն հաւատքը: Եւ պատահականութիւն է

արդեօք որ քրիստոնէութիւնը իր ծագումէն, այսինքն եթէ 30 թուականէն (Քրիստոսի խաչելութեան, յարութեան թուականը), մինչեւ առաջին դարուն վերջը, ամբողջ Հռոմէական կայսրութեան մէջ տարածուած էր: Հարկաւ Աստուած Ինքն էր անոր մղիչ ոյժը, բայց միաժամանակ կային այն մարդկային գործօնները, որոնք կը դիւրացնէին այդ աշխատանքը եւ որոնք պատրաստ դաշտի կը վերածէին ամբողջ կայսրութիւնը, որպէսզի իրականանար այդ փրկութեան ծրագրին, կամ խոստումին տարածումը ամբողջ աշխարհի մէջ:

ԶԱՐԵՀ ԱՐԲ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆ

(Շար. 5)



**ՊԱՏՄԱՆՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ**

**ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ\***

Դ. ՄԱՍ

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԼՆ ՄԻՆՉԵԻ  
ՊԱՇՏՕՆԱՏՈՒՉՈՒԹԵԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻԻՆԸ

Գլուխ 3

**Արեւելք եւ Արեւմուտք  
Պատկերամարտութեան Վէճին Մէջ Բռնուած**

Չարլզի եւ Բեբին Գ.-ի իշխանութիւնը գրեթէ ժամանակակից էր Լեւոն Գ.-ի (717-740) եւ անոր որդւոյն՝ Կոստանդին Ե.-ի (741-775) Արեւելքի մէջ: 7-րդ դարուն, երբ բիւզանդա-հռոմէական կայսրութիւնը իսլամութեան պատճառաւ անկման սեմին էր, իսաւրեան տոհմի այս հիմնադիրները զայն կործանումէ կը փրկէին: Օմար Բ. խալիֆայի (717-720) բանակները Կոստանդնուպոլսոյ դռներէն հեռացնելով, Լեւոն եւ իր որդին հռոմէական իշխանութիւնը կը վերահաստատէին Փոքր Ասիոյ վրայ: Միաժամանակ, անոնք կ'արգիլէին Քրիստոսի, Ս. Կոյսի, հրեշտակներու եւ սուրբերու պատկերներուն մեծարումը: Այս արգելքին առնչուած աստուածաբանական եւ քաղաքական հարցերը իրենց մնայուն դրոշմը պիտի ձգէին

Արեւելքի եւ Արեւմուտքի Եկեղեցիներուն վրայ: Արեւելքի մէջ, սրբապատկերները ոչ միայն պիտի տարածուէին, այլ նաեւ աստուածաբանականօրէն որպէս Քրիստոսի մարդկային բնութեան քաղկեղոնական վարդապետութեան ցոլացումը պիտի նկատուէին: Իսկ Արեւմուտքի մէջ, պատկերամարտ կայսրերու եւ պապերու միջեւ պայքարը պապականութեան եւ կայսրութեան քաղաքական վերջնական բաժանման պատճառ պիտի դառնար, Չարլզի յաջորդներուն հետ կնքուած դաշինքը պիտի իմաստաւորէր եւ աստիճանաբար լատին եւ յոյն Եկեղեցիները իրարմէ պիտի բաժնէր:

Լեւոն Գ. 726-ին պաշտօնապէս կը հակադրուէր սրբապատկերներու մեծարման եւ զայն խորհրդանշականօրէն կ'արտայայտէր Կոստանդնուպոլսոյ կայսերական պալատի մուտքին գտնը-

\* Շար. նախորդ թիւէն:

ւող Քրիստոսի սրբապատկերը փշրելով: Այս հակադրութիւնը ըմբոստութիւն կը յառաջացնէր մայրաքաղաքին մէջ, Կոստանդնուպոլսոյ Գերմանոս պատրիարքին դատապարտութիւնը կը հրաւիրէր եւ վանականներուն թշնամութիւնը կը հրահրէր: Լեւոն փոխանակ վերատեսու-թեան ենթարկելու իր կեցուածքը, իր գօրքին ապաւինելով, 730-ին ժողով մը կը գումարէր որ սրբապատկերներու մեծարումը կը խափանէր, պաշտօնանկ կ'ընէր եւ կ'աքսորէր Գերմանոսը եւ աթոռ կը բարձրացնէր աւելի մեղմաբարոյ Անաստասիոս պատրիարքը:

Իտալիոյ մէջ եւս Լեւոնի դէմ ընդդիմութիւնը սաստիկ էր: Իտալական բազմաթիւ տարածքներ տակաւին բիզանդական կայսրութեան մականին տակ կը գտնուէին: Հարաւի մէջ Սիկիլիան եւ Գալապրիան էին, իսկ հիւսիսը՝ Ռավենայէն մինչեւ Հռոմի մերձակայքը, որ հռոմայեցի դուքսի մը հրամանին տակ կը գտնուէր: Սակայն, հիւսիսն ու հարաւը մեծամասնութեամբ լոմպարդներով բնակուած էին: Այս պայմաններուն մէջ, արեւելեան կայսրերը պարտաւոր էին իրենց ուղարկութիւնը Փոքր Ասիոյ վրայ կեդրոնացնելով հանդերձ ուղարկել ըլլալու իրենց իտալական տարածքներուն: Առաւել, Իտալիոյ ժողովուրդը Հռոմի եպիսկոպոսին եւ ոչ թէ Կոստանդնուպոլսէն Ռավենա ուղարկուած կառավարիչներուն մէջ մարմնաւորուած կը նկատէր հռոմէական ական-դութիւնը: Արդ, երբ Ս. Պոնիֆատի հովանաւոր Գրիգոր Բ. պապը (715-731) կ'ընդդիմանար կայսեր պատկերամարտական քաղաքականութեան՝ թէ՛ որպէս աշխարհիկ իշխողի իր հեղինակութենէն անդին անցնելուն եւ թէ՛ պատկերամարտութեան մէջ Յիսուսի մարդեղացման ժխտումը տեսնելով, Լեւոն չէր կրնար պապը պաշտօնանկ ընել, ինչպէս համարձակած էր Գերմանոս

պատրիարքի պարագային: Գրիգոր ոչ միայն Հռոմի պարզ ժողովուրդին համակրանքը կը վայելէր, այլ նաեւ բիզանդական բանակին եւ Սփոյեթոյի ու Պենեպենթոմի դուքսերուն նեցուկը ունէր:

Այլ քննադատական ձայն մըն ալ որ Լեւոն չէր կրնար լռեցնել, կը լսուէր իւրամական կայսրութեան սրտէն: Յովհաննէս Դամասկացին էր ան (չ. 675-չ. 749), որ իր երիտասարդական տարիքէն հօրմէն խալիֆաներու ծառայութեան բարձր պաշտօն մը ժառանգած էր: Այս պաշտօնէն ձերբազատուելու համար, ան Երուսաղէմի մօտ գտնուող Ս. Սաբայի վանքը կը քաշուէր: Հոն կը հեղինակէր Գիտութեան Աղբիւրը երկը, որուն վերջին մասը կը կոչուէր «Ուղղափառ Հաւատքի Մասին» եւ Աստուծոյ, Ս. Երրորդութեան, ստեղծագործութեան եւ մարդեղութեան քրիստոնէական վարդապետութիւնը կը բանաձեւէր: Այս երկին մէջ, ան յունական աւանդութեան եւ մասնաւորաբար Կապադովկեան Հայրերուն ու Կեղծ Դիոնիսիոս Արիպապագիի կը դիմէր, իսկ իր քրիստոսաբանութեան համար՝ Ղեւոնդիոս Երուսաղիմացիի: 1890 թուականին, Լեւոն ԺԳ. պապ զինք «Եկեղեցոյ Վարդապետ» կը հռչակէր: Ան յաճախ կը մէջբերուի ուղղափառ աստուածաբաններէ եւ լատին թարգմանութեան ճամբով մեծ ազդեցութիւն ունեցած է արեւմտեան սքոլասթիք աստուածաբանութեան վրայ: Յովհաննէս պատկերամարտութեան վէճին կը մասնակցէր 726-730 թուականներուն, երբ շարք մը ճառերով զայն հեթանոսութեան համազօր կը դասէր: Նախ, ան կը պնդէր թէ պէտք է գատորոշել պատկերներուն եղած մեծաբանքը եւ մի միայն Աստուծոյ մատուցուած պաշտամունքը: Միաժամանակ պէտք է ընդունիլ թէ պատկերը համազօր չէ իր պատկերացուցածին, եւ հետե-

լարար չի կրնար փոխարինել գայն: այլ նմանութիւն մըն է միայն որ միտքը բնօրինակին կը յղէ: Ինք եւ աւելի ուշ վանական բարեկարգիչ Թէոդորոս Սթիւտացի (759-826) պատկերամարտութեան վէճի հիմնահարցը քրիստոսաբանական կը նկատէին: Եթէ Քրիստոսի մարդեղութիւնը, որ սկզբունքով կարելի է պատկերել, իսկական, շօշափելի եւ պատմական է, եւ եթէ միաժամանակ ան մէկ է աստուածային Լոկոսի գոյառումին հետ, ուրեմն Քրիստոսի պատկերին մեծարումը փոխարեականօրէն կը նմանի Աւետարաններու մեծարման, որոնք գՔրիստոս խօսքերով կը պատկերացնեն: Թէ՛ պատկերը եւ թէ՛ Աւետարանը աստուածայինին մարդկային իմացականութեան ըմբռնողութիւնը ցոյց կու տան բնութեան մէջ եւ պատմութեան ընթացքին ու երկուքն ալ Աստուծոյ հասնելու միջոցներ են:

Լեւոնի յաջորդ Կոստանդիանոս Ե-ի օրերուն պատկերամարտութեան նոր այլք մը կը բարձրանար եւ բազմաթիւ պատկերներու խորտակման ու յատկապէս պատկերներ մեծարող վանականներու սպանութեան պատճառ կը դառնար: 754 թուականին, Կոստանդիանոս ժողով մը կը գումարէր, որ ոչ միայն կը վերահաստատէր պատկերներ նկարողներու հանդէպ Լեւոնի դրած դատապարտութիւնը, այլ նաեւ կը վճռէր թէ անոնք որոնք կը խախտէին այդ արգելքը նոր պատիժներ պիտի կրէին: Այսպիսով եկեղեցիներու մէջ գտնուող պատկերները կը ներկուէին եւ կամ ոչ սրբազան պատկերներով կը փոխարինուէին: Բանտարկութեան, տանջանքի եւ աքսորի կ'ենթարկուէին պատկերապաշտները: Ամենէն շատ կը հալածուէին վանականները, որոնք յաճախ ամուսնութեան կը պարտադրուէին, իսկ վանքերը պարտադրաբար աշխարհիկ նպատակներու գործածութեան առարկայ կը դառնա-

յին: Այս պատճառաւ շատ մը վանական աքսորեալներ կայսերական հսկողութեան տակ գտնուող արեւելեան շրջաններէն խոյս տալով հարաւային Իտալիա կ'ապաստանէին:

Այս հալածանքը կը շարունակուէր մինչեւ Իրենա կայսրուհին իշխանութեան գալը, նախ որպէս իր գաւկին՝ Կոստանդիանոս Զ-ի (780-797) խնամակալ եւ ապա գայն գահընկէց ընելէ, կուրցնելէ եւ սպաննելէ ետք որպէս միահեծան իշխող (797-802): Լեւոնի քաղաքականութեան համակիր բանակին ընդդիմութիւնը անտեսելով, ան 787 թուականին Նիկիոյ մէջ ժողով մը կը գումարէր, որուն կը հրաւիրէր նաեւ Հատրիան Ա. պապի ներկայացուցիչները: Այս ժողովը, որ առհասարակ եօթներորդ եւ վերջին «տիեզերական» ժողովը կը նկատուի, պատկերներու մեծարանքը կը վերահաստատէր եւ կը մերժէր անոնց կուռք ըլլալն ու հաւատացեալներուն կողմէ որպէս Աստուած պաշտուելը: Նաեւ, ան վանքերն ու վանական կալուածները վանականներուն կը վերադարձնէր: Սակայն, 9-րդ դարուն, Լեւոն Ե. կայսեր օրով (813-820), պատկերամարտութիւնը կը վերայայտնուէր: 815 թուականին, Կոստանդնուպոլսոյ Ս. Սոֆիա տաճարին մէջ գումարուած ժողով մը, Կոստանդիանոս Ե-ի 754 թուականի քաղաքականութիւնը կը վերահաստատէր, որ տիրական կը մնար մինչեւ Միքայէլ Բ.-ի (820-829) եւ Թէոփիլոսի (829-842) ժամանակները: 843 թուականին, Թէոտորա կայսրուհին, որ իր գաւկին՝ Միքայէլ Գ.-ի (842-867) մանկութեան շրջանին կ'իշխէր, ուրիշ ժողով մը կը գումարէր, Նիկիոյ ժողովին կանոնները կեանքի կը կոչէր եւ պատկերներու մեծարանքը կը վերահաստատէր:

Պատկերամարտութեան վէճը հակասական մեկնաբանութիւններու արժանացած է պատմաբաններու կողմէ,

որովհետեւ պատմութեան ընթացքին սկզբնաղբիւրները խեղաթիւրուած են. սակայն, անոր կարեւորութիւնը բնաւ չէ անտեսուած: Կասկածէ վեր է թէ 4-րդ դարուն եւ ապա պատկերներու մեծարումը քրիստոնէական բարեպաշտութեան մէջ կարեւոր եւ հասարակաց տեղ կը գրաւէր: Առաւել, կարգ մը քրիստոնեայ մտածողներ եւ առաջնորդներ դէմ էին այս մեծարման, անոր մէջ հեթանոսութեան վերադարձ տեսնելով: Արդ, պատկերամարտութիւնը կարելի է ժողովրդական տիրական բարեպաշտութեան հանդէպ կրօնական հակադարձութիւն նկատել: Պատմաբաններ կը մատնանշեն նաեւ թէ մանաւանդ Փոքր Ասիոյ մէջ պատկերամարտութիւնը առաւել թունդ էր նկատի ունենալով հրեաներու եւ իսլամներու ներկայութիւնը, որոնք պատկերներու մեծարումը կռապաշտութիւն կը համարէին: Տակաւին, կրնայ ըլլալ որ այս շարժումը ազդուած էր զնոստիկեան եւ մանիքէական երկարմատեան մտածողութիւններէն, որպէս հակազդեցութիւն գժրիստոս եւ սուրբերը նիւթեղէն հանդերձանքով ներկայացնելու ճիգին: Միաբնականները եւս կը հակէին այս շարժման, որովհետեւ Քրիստոսի՝ որպէս

Երրորդութեան Երկրորդ Անձի նկարումը՝ իրենց համար անըմբռնելի էր:

Այս բոլորը կարգ մը գիտնականներու կողմէ մերժուած են եւ պատկերամարտութիւնը մեկնաբանուած է որպէս խաւրեան կայսրերու ընկերային եւ քաղաքական քաղաքականութիւն, երբ յատկապէս անոր գլխաւոր թիրախը հանդիսացած են վանական հաստատութիւնները, որոնց քանակն ու անկախութիւնը պետութեան բեռ դարձած էին եւ արգելակած կայսերական հեղինակութիւնը: Միաժամանակ, պատկերապաշտները ընդհանրապէս չէին հանդուրժեր կայսեր միջամտութիւնը կրօնական հարցերուն եւ մանաւանդ պատկերներու մեծարման կալուածին: Գրիգոր Բ. պապին համար կայսեր դերակատարութիւնը ժխտական կը նկատուէր որպէս հաստատուած աւանդութեան մը աստուածաբանական մերժում եւ կրօնական ասպարէզէն ներս միջամուխ ըլլալու յանդգնութիւն:

"A History of The Christian Church"

N. Y. (1985) - Williston Walker

Թրգմ.՝ ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՆՄԷՋԵԱՆ

(Շար. 48)





**ԱՐԽԻՒԱՅԻՆ ՆԻՒԹԵՐ**

**ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ԻԲՐԵՒ ԿՐՕՆՔ\***

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Հայ եկեղեցիի վարչականությունը վիճակակից է եղեր մեր քաղաքական իշխանությունը ճակատագրին: Իսկ Հայ եկեղեցույ հոգեւոր նկարագիրը հարազատ արտադրությունն է ցեղին մաքրակրօն, խորհրդապաշտ ու հոգեսյաց ինքնատիպ յատկությունը, որ թէպէտ կրած է ազդեցություններ քաղաքական պարագաներէ բայց չէ այլասերուած ու պահէր է իր իսկականությունը:

Այսպէս մեր եկեղեցույ վարչական եւ վերացական որակները իրարու հակադիր իրականություններ են եւ հոգեւորն ալ դատապարտուած է զոհուիլ վարչական ապիկարությունց եւ դաւաճանություններու իբր արդիւնք աթոռակալական ձգտումներու ոճրային ճանապարհներով ու աթոռակալական այն օրինակ եղեւները հատու չեն եղած միայն Հայ եկեղեցին:

Հայ եկեղեցիի բազմազան գերագանցությունը մասնաւորելու համար կը շարադասենք հետեւեալ հաւաքաբանություններ թէ Հռովմէական եկեղեցին քրիստոնէական աշխարհակալություն կոչուած հոգեւորական կայսրություն մըն է որուն զբօշակէն դուրս եղողները դուրս կը համարուին քրիստոնէություն

թագաւորությունը երկրաւոր իշխանությունն:

Յոյն եկեղեցին տիեզերական ուղղափառություն մըն է, միակ ճշմարտությունն ինչպէս նաեւ լեզուին եւ հաւատարիմ աւանդապահ սրբազան մատենագրությունց նորոյ ուխտի:

Ըստ յոյն եկեղեցույ, ուրեմն, այդ փարախէն դուրս եղող ոեւէ քրիստոնեայ մոլորեալք, հրեատիկոս եւ ապերախտ հիմանը:

Ասորական եկեղեցին հետեւելով հանդերձ Նեստորի մոլորությունը, դեռ կը պահէ հակոտնեայ մրցակցություն մը Հռովմի դէմ, իր բոլոր Հայրապետները յաջորդաբար վերակոչելով յանուն սրբբոյն Պետրոսի նախկին անուանը (Շմաւոն) զոր Առաքեալը խնամքով կը յարէ իւր նորստաց անուանը հետ, Պետրոսի:

Ասորական եկեղեցին չունի տիրապետական կամ այլանգով յաւակնություններ բայց՝ հպարտություն կը նայի իր առաքելական ծագումին եւ առաքելական փայլուն դերին զոր կատարած է քրիստոնէական կրօնին տարածմանը յարելու եւ ի Հայս Ասորական եկեղեցին համար մենք ունինք մեր յարգանքը որպէս երախտաւորներ ատոր կողմն մեր վայելուչ բարիքներուն:

Բողոքական եկեղեցիները այլազան

\* Շար. նախորդ թիւէն:

հաւատքներու եւ քրիստոնէական ըմբռնումներու արտայայտիչ ապակեղրոն կազմակերպութիւններ են, որոնք այսօր կազմակերպութիւններու հասած իրենց վարդապետութիւններովը, ծէսերովն ու ձեւերովը անոյժ եւ ոչ-յաւերժական կոտորակներ են ի վնաս Աւետարանի:

Իսկ Հայ եկեղեցին գրեթէ միակ բացառիկ եկեղեցին է որպէս սեփականութիւն Հայաստանեայց աշխարհին եւ Ազգային Գերագոյն Հաստատութիւնը որ կը բովանդակէ լրիւ

1) Նախաքրիստոնէական եւ քրիստոնէական շրջաններուն, ցեղին գերնիւթական խորհրդապաշտութիւն եւ լուսապաշտ հոգեւորութիւն ազնուագին ոգին:

2) Յեղին գեղարուեստական բարձր հանճարեղութիւն իսկատիպ արտադրութիւնները:

3) Ամենադառն պայմաններու մէջ ու քաղաքական կացութիւնը ի սպառ ապակործանուած պարագային իսկ ազգին ամբողջականութիւնը պահող ու ապահովող խորհրդաւոր բաւարարութեան մը անկապուտ ուժեղութիւն:

Այսպիսեալ Հայ եկեղեցին հաւատացեալներու խմբաւորում մը, հաւատքներու դաւանաբանութեանց կուսակցութիւններուն մէկն լինել է աւելի, շատ ու շատ բարձրորէն տոհմիկ ինքնատպութիւններու մէկ անկորնչելի առանձնայատկութեան դրոշմն է անոր հոգեկան էանութեանը վրայ անխուսափելիորէն ժառանգելի:

Հայ եկեղեցին հայուն համար սոսկ քրիստոնէական հիմնարկութիւն մը չէ, պարզօրէն հոգեւոր իմաստով ինչպէս են առ հասարակ այն եկեղեցիներ որոնք կը պարփակեն այլեւայլ դաւանակից ազգեր:

Հայ եկեղեցին միայն եւ միայն հայու սրբութիւնն է: Այնպէս որ՝ ով ոք որ

ընդունի հայ եկեղեցին, այն նաեւ պիտի հայանայ՝ ազգային բոլոր դրոշմներով կնքուած: Այսպէս է եղեր երբ հրեայ մը, իսլամ մը... հայանալ ուզած են, Հայ եկեղեցին դիմած, մկրտուած են ուրիշ կերպ հայանալ չիկայ, իսկ երբ քրիստոնեայ այս ազգի մը հայանալ ուզէ նոյնպէս պիտի միանայ Հայ եկեղեցի: Ուրիշ կերպ չիկայ: Իսկ եթէ Հայ եկեղեցւոյ դաւանանքն ընտրէ եւ ընդունի եւ անդամակցի Հայ եկեղեցին պիտի նաեւ հայանայ, քանզի այլապէս Հայ եկեղեցին իրեն կը մնայ օտար ինչ...:

Ի հարկէ այս այսպէս է նկատի առնելով միայն մայր եկեղեցին, ու ցորչափ դեռ պաշտօնապէս գոյութիւն չունին Հայ Կաթողիկ ու Հայ Բողոքական եկեղեցիները, Մայր Եկեղեցին կը մնար միայն բովը ուր ոեւէ օտարագրի մը կրնար ձուլուիլ հայութեան մէջ, բայց՝ այժմ ոեւէ օտար կրնայ հայանալ, կրնայ գանգուիլ Հայ համայնքին հետ, իւրացնել հայ լեզուն ու գրականութիւնը պատկանելով կաթողիկ կամ բողոքական եկեղեցիներէն միայն: Ըստ որում եւ Հայ եկեղեցի ըսելով այլեւս չենք հասկընար միայն մեծ եկեղեցի մը, այլ երեք՝ իրենց գատ անուններովը:

Մայր եկեղեցին իւր ինքնապահութեան արդար պայքարովը դիմացաւ բոլոր անջատողական վտանգներուն, բայց՝ ձախլիկ ու մոլեռանդական հալածանքներով աւելի դիւրացուց ու փութացուց եւ խորացուց այդ անջատումները եւ այսօր անոնք կատարուած իրողութիւններ են ի վնաս եկեղեցւոյ միութեան ու ազգային ամբողջականութեան: Յորչափ մայր եկեղեցւոյ վերին իշխանութեան կողմէն թէպէտ հալածանքն անկարելի է, բայց՝ կը տիրէ վանողական ցրտութիւն մը եւ չիկայ ուրիշ ուժեղ ձգողութիւն մը որ այս երեք հատուածներն առինքնէ եւ հարազատ եղբայրութեան մը անբաժանելի գործակ-

ցուծիւն ստեղծէ: Ճիշդ է որ ուրիշ ազգերու մէջ քաղաքական իշխանութիւնը, պետական աթոռը կը բաւէ ձուլելու իր ալլադաւան անդամները:

Տխուր իրականութիւն մըն է դարձեալ որ՝ նոյնիսկ ռազմադաշտին վրայ ալլադաւան կղերներ կը վազեն մատակարարելու իրենց պատկանեալ վիրաւորներու եւ մեռելներու հոգեւոր պէտքերը:

Կը նշանակէ թէ երբ կրօնական հատուածականութիւնը պեղած է վիհը թափուած արիւններն անգամ չեն լեցնեն այդ խրամը:

Ազգերու վարիչներն այսօր զգացքն են թէ՛ ազգային բոլոր պարծանքներուն եւ արժէքներուն հմայքը անբաւական են չէզոքացնելու յարանուանական տրոհումներուն հոգեբանական-իրերամերժ տրամադրութիւնները: Եւ ազգային միապաղաղ ամբողջականութիւն մը գոյացնելու համար ջանքեր, ու լուրջ փորձեր կը կատարեն բառնալու համար դաւանական խտրութիւնները որ Ֆիզիքական համարիւնութեանը հետ գուգախառնուի նաեւ հոգեկան համախոհութիւն եւ այսպէս կատարելանայ ազգակցական յօդաւորութիւն հոյակապ կառուցուածքը անասան ամէն հարուածի եւ փոթորիկի դէմ:

Անտարակոյս՝ ուրեմն մեզի հայերու համար այս տեսակէտը գերազանցապէս կենսական է, եթէ տակաւին հաւատք ունինք մեր ազգային գոյութեան պահպանումին:

Բայց ինչպէ՞ս կարելի է այս երեք հատուածները վերածուելի ի մի մարմին, ի մի եկեղեցի, ի մի անհերձ ազգութիւն:

Ողբալի իրականութիւնը սա է որ. -

1) Բողոքական համայնքը Ամերիկայի պէս գաղութներու մէջ դատապարտուած է տարաժամօրէն ձուլուելու համապատասխան յարանուանութեանց Ամերիկեան զանգուածներու մէջ ու հայերէն

ընէն չհասկցող նոր սերունդը փոխանակ մեքենարար ու անգիտակցօրէն լսելու երգչախումբի բեկբեկ հայերէնով «Ալ մօտ ըլլամ ով Տէր ալ մօտ քեզի... պիտի երթայ հոն ուր ինքն ալ լիաբերան պիտի երգէ...: Այս անխուսափելի մերձապատկերը սահմակեցուցիչ է եւ միջակոտոր կը մնան մայր եկեղեցի եւ հայ կաթողիկէ համայնքը:

Մայր եկեղեցին ինքնայայտ է թէ՛ անգօր է իր գերագոյն օրինական հեղինակութիւնը եւ բարոյական ազդեցութիւնը տարածել ի սփիւռու աշխարհի ցրուած իւր բազմակարօտ հօտին:

Գալով Հայ կաթողիկէ համայնքին, ան թէեւ օժտուած է կարող եկեղեցականներով եւ կռթնած լինելով Վատիկանի գօրեղ հովանաւորութեանը կղզիացած է Ատրիականի կապուտակ ջուրերուն մէջ եւ իբրեւ խորթ ու մեկուսացած գաւակ ինքզինք պարտական կամ իրաւատէր չզգար ստանձնելու խոկն ու հոգն այն վտանգեալ հայերուն՝ որոնք անհաղորդ են Հայ կաթողիկէ եկեղեցիին ու եկեղեցականութեան գանոնք համարելով ալլադաւան եւ հետ ընդդէմ մայր եկեղեցոյ:

Ծառը ջարդ ու փշուր եղած է: Անոր իսկ ճիւղերովը կրակ կը բոցավառի արմատաբերան ու բունն ածխացնելու վերնձիւղումի յոյսը ի սպառ մոխրացնելու համար: (Սղ 2. 12):

Անտառին խոզերը եւ դաշտի գազանները կը պեղեն անոր շուրջը գտնելու համար վերջին կոտոր-պտուղը, որ մի գուցէ նոր բոյս մը ծլի եւ նոր ծառ մը գոյանայ: Ու մենք նոյնիսկ այս պտղակապուտ աւազակներէն մշակութիւն սպասելու չափ միամիտ ենք տակաւին:

Սակայն՝ անմտութիւն չէ լիայոյս սպասել նոր վերածնունդ մը այն սեւ կոճղէն, որուն հսկայ ու երկարաձիգ արմատները թէլացած ու ցանցած են դարերու խորունկութիւնը ուր ոչ հուր

կը թափանցէ եւ ոչ սուր կը ժամանէ: Հոն անապակ ջուրերու ստորերկրեայ աւազաններէն անոնք կեանք կը ծծեն եւ վերը ածխացած բուռն շուրջը կը վերածնին բազմած ընձիւղներ, նոր ծառերու մատղաշ երախաներ:

Այս արմատը եկեղեցին է, մայրը՝ որ ջարդի ու թալանի չենթարկուիր, որ դարերու բռնան ներքեւը չի պառաւիր՝ որ թարմ է միշտ թէպէտ ճղակոտոր, բնագուրկ եւ սգաւոր: Բայց որպէս հաւատարիմ հարս Քրիստոս-փեսային ամենակարող վերածնիլ ազգ մը ողջոյն, նոր հայութիւն մը: Հայութեան մայրը իր եկեղեցին է:

Անդամատեալ մայր մը անկարող է որդեծնութիւն մինչեւ տեղի չունենայ բարևոք յօդաւորում եւ կատարեալ կազմուցում:

Պահ մը նոյնիսկ ընդունինք թէ քրիստոնէութիւնը, հայ անկախ եկեղեցին պահած է մեր ազգային գոյութիւնը, այսօր համոզումներու տարբերութիւնը առանց փաստելու, շատ լուրջ ու դրական հարց է թէ՛

1) Ներկայ հայ եկեղեցականութիւնը, ամբողջականութեամբ առնելով, Աթոռն ալ, անկախութիւնն ալ, նուիրապետութիւնն ալ, թուով ու որակով մա-

նաւանդ քաղաքական ներկայ պայմաններու տակը կարո՞ղ է պահել Հայ եկեղեցին:

2) Հայ եկեղեցին ալ իր ներկայ վիճակովը կարո՞ղ է պահել ու պահպանել, հովուել ու հովանաւորել հայ ազգն ի ծագս աշխարհի եւ ազատել ձուլումէ:

3) Ժողովուրդը - գաղութները ամէն մէկ իր տեղը չհալած, չի ձուլուած մեր արդի եկեղեցականները ի՞նչ կը խորհին:

Իմ դատումովս սա հարցումները պիտի փոխեն բանավէճին բնոյթը եւ սոսնց պատասխանը պիտի բանայ դրական եւ ուղիղ ուղի մը:

Հետեւաբար, մեր միջամտութիւնը պիտի փրկէ Քրիստոսը եւ հաւատացեալներու միտքը գրչական չարչարանքէ:

Ժամանակի եւ մեր պէտքի կենսական պահանջին դարմանը մենք կը նախատեսենք մեր հարցմանց ուղիղ պատասխաններուն մէջ: Կարօտով կը սպասենք անոնց:

ԽԱԶԻԿ ՔՇՆՅ. ԳՈՒՈՒԶԵԱՆ

(Շար. 8)



**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ**

**ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ  
ԴԱՐՁԵԱՂ ՀԱԼԱԾԱԿԱՆ**

Քրիստոնէական Ընդհանուր Եկեղեցոյ պատմութիւնը ներկայացնող գիրքերը լեցուն են հալածանքներու եւ չարչարանքներու նկարագրութիւններով, որոնք ուղղուած էին Քրիստոսի Եկեղեցոյ եւ անոր հաւատացեալներուն դէմ: Յաճախ սահմուկեցուցիչ պատկերներ կան այնտեղ, որոնք կիսավայրենի մարդու բնութեան մաս կը կազմէին, անտառի գազաններուն ամէնէն անգութը ներկայացնելու համար մարդ արարածը, իր նմանին հանդէպ:

Քրիստոնեաներ նման անգութ վերաբերումին դիմաց, սակայն, չնահանջեցին: Անոնք հաւատարիմ իրենց կոչումին, եւ ամբողջութեամբ համոզուած այն նոր հաւատքին, որ Յիսուս Քրիստոսով յայտնուեցաւ մարդկութեան, պահեցին զայն արծարծ, նոյնիսկ գետնափոր նկուղներու մէջ: Այդ ապառողջ գնտաններուն մէջ հաւաքուելով, իրենց աղօթքը եւ հացի բեկանումը կատարեցին նորադարձ քրիստոնեաներ: Բնականաբար իրենց այդ թաքստոցները անյայտ պիտի չմնային այդ օրերու «ամենակարող» կայսրերու եւ թագաւորներու գիտութեանէն, եւ ի վերջոյ դուրս բերուելով այդ գետնադամբաններէն, նահատակութեամբ պիտի կնքէին իրենց մահկանացուն:

Հալածանք ու նեղութիւն, դարերու վրայ տարածուեցան, եւ Քրիստոսի հիմ-

նած եկեղեցին տառապեցաւ անգութ բռնակալներու որդեգրած բիրտ քաղաքականութեան հետեւանքով: Քանի՛-քանի՛ անգամներ թագաւորներ քանդեցին քրիստոնէից կառուցած եկեղեցիները, քանի՛-քանի՛ անգամներ բարբարոսներ աւերեցին ու աւարեցին, այրեցին ու թալանեցին հոգեւոր գանձատուները մեր մշակութային արժէքներուն, որոնք քրիստոնէական մեր հաւատքին հետ ծաղկած էին դարերու ընթացքին: Վայրենի ցեղեր քանի՛-քանի՛ անգամներ իրենց ձիերու սմբակներուն տակ կոխկրուտեցին, մեր հայրերու հաւատքի արցունքով լեցուն կանթեղները աղօթքի: Քանի՛-քանի՛ անգամներ մեր մատենագիրներու ծաղկած ձեռագրային ժառանգութիւնները, որոնք աչքերու լոյս խած էին՝ մոխրացան ու չքացան: Վերջապէս, Քրիստոսի հիմնած եկեղեցին, ամէն տեղ՝ հոն ուր քարոզուեցաւ Աւետարանը, հալածանքի ենթարկուեցաւ, տառապանք ու նեղութիւն կրեց:

20-րդ դարը, իբրեւ զարգացումի ու գիտութեան դար, յոյս կը ներշնչէր, ու կը խոստանար վերջ տալ մարդկային բռնութեանց, եւ կրօնքի ու խիղճի ազատութիւնը դարձնել մարդ էակին ամբողջական իրաւունքը: Սակայն շատ մը ժողովուրդներու յոյսերը ի դերեւ ելան, դժբախտաբար: Հայ ժողովուրդը եղաւ առաջինը, որ գիտութեան դարուն,

ցմրուրը ըմպեց տառապանքի ու դառնութեան բաժակը՝ թուրքին ձեռամբ Հայկական Յեղասպանութեան կիրարկումով: 1915-ին հայեր, աւելի ուշ այլ ժողովուրդներ, եւ մինչեւ իսկ 20-րդ դարու վերջալույսին Ռուանտացիներ հալածուեցան, յոշոտուեցան, կողոպտուեցան ու սպաննուեցան, դարձեալ մարդուն ձեռքով: Անշուշտ կը գատորոշուի բոլորին մէջէն մեր ժողովուրդին պատահած դժբախտութիւնը, որ պարզապէս Աստուած կանչելուն եւ քրիստոնեայ կոչուելուն տուգանքը անգամ մը եւս վճարեց, կարծէք բաւարար չըլլային նախորդող դարերուն իր կրած հալածանքներն ու նեղութիւնները:

Այս բոլորը պատմութեան պատկանելով հանդերձ, պատմութիւնն չդարձան բնաւ: Պատմութիւնը միշտ ինքզինք կրկնեց տարբեր ձեւերով: Եւ բոլորին մէջ, Քրիստոսի Եկեղեցին եղաւ տառապողը, իր հաւատացեալներուն կրած նեղութիւններուն ճամբով:

Իսկ հիմա՞: Եկեղեցին դարձեալ հալածական է: Զայն հալածող կայսրերուն աճիւններն անգամ փտած են, սակայն Եկեղեցին հալածելու, տկարացնելու եւ քանդելու նոյն ոգիով, աղանդաւորական շարժումներ կը ծաւալին, նորանոր ծրագիրներով, բարբարոսներու կիսատ թողածը, իրենց մութ գործունէութեամբ ամբողջացնելու համար: Այդ շարժումներէն ոմանք Եկեղեցոյ ծառի բունին վրայ հաստատուած ճիւղեր են, որոնք վայելած են Եկեղեցոյ բարիքները, եւ ձեռքէ ճաշ ուտող եւ ապա դառնալով խնամատարը բզբտող խոզերու պէս, Եկեղեցոյ վրայ յարձակողներն են:

Աղանդաւորական շարժումներուն գրեթէ բոլոր հարուածները, առաջին հերթին վատաւողջ քննադատութեան թունաւոր նետերով կը սկսին: Քննադատութեան տեսակ մը, որուն նպատակը

չինիչ է, այլ քանդիչ: Այդ քննադատութիւնը Եկեղեցոյ հոգեւոր իշխանութեան նկատմամբ յարգանքի պակասի մը ծնունդն է, որուն նպատակը հնազանդութեան եւ Քրիստոսատիպ խոնարհ հպատակութեան վերացումն է Եկեղեցոյ կեանքէն, զայն վերածելու համար անիշխանական եւ այսպէս կոչուած «Հոգիով առաջնորդուող» խմբակցութեան մը: Նման աղանդաւորական շարժումներ, իրենց նախատիպ օրինակները կ'առնեն Արեւմտեան հասկացողութեամբ «եկեղեցիներէ», ուր լեզուի, գոյնի, տեսակի, ազգութեան կամ աւանդութեան խտրութիւն բացարձակապէս գոյութիւն չունի: Անհասկնալի բառերու արտասանութեան, անհաւասարակշիռ շարժումներու, երբեմն անտառային ոռնոցներու եւ պոռչտութիւն խառնարան մըն է «արարողութիւնը», որոնց մէջ պահուան բարձրակէտը կը գրաւէ անշուշտ սպասուած հրաշք մը՝ ազդեցութեան բուն բանալին:

Աղանդաւորական շարժումներու կորիզը կազմող այս երեւոյթը Եկեղեցոյ հաւատացեալները օձտելու միտումով, նպատակակէտ կ'ընտրէ Եկեղեցական Իշխանութիւնները, նման գաղափարներով սնած մարդոց ցանք կատարելով նոյնիսկ Եկեղեցոյ ներքին պարիսպէն՝ միջնաբերդէն ներս: Անշուշտ աղանդաւորական շարժումներու բոլոր քայլափոխները կը կատարուին «բարեփոխութիւններու» անուան տակ, ինչ որ հաճելի կը թուի գարգացող ընկերութեան մեծ խաւին՝ պարզ մեծամասնութեան: Ահա թէ ինչպէս աղանդաւորական շարժումներ մեծաթիւ հետեւորդներով երբեմն կը գարմացնեն, իրենց Եկեղեցոյ աւանդութեան ու կեանքին հաւատարիմ հաւատացեալները: Այդ «բարեփոխութիւններուն» չափանիշը, սակայն, աղանդաւորին ա'նձն է, եւ անոր խելապատիկէն բուսած գաղափար-

ները, եւ ո՛չ թէ Քրիստոս Ի՛նք, կամ Քրիստոսահիմն Եկեղեցւոյ աւանդութիւնը եւ Աստուածաշունչի ճշմարիտ գիտութեան վրայ հիմնուած հայրերու ուսուցումները:

Աղանդաւորական շարժումներուն կողմէ Աստուածաշունչին չափազանց օգտագործումը եւս ինքնին վկայութիւն մըն է, Եկեղեցին իր ճշմարտութեան աղբիւրին ճամբով հարուածելու եւ դատապարտելու բռնագրօս ճիգին: Կարգ մը աղանդներ արդէն իսկ չարափոխուած աստուածաշունչեր հրատարակած են, մոլորեցնելու համար Քրիստոսի բանաւոր հօտը: Իսկ Աստուածաշունչի մեկնաբանութեան բազմալեզու այնպիսի հատորներ կը հրատարակուին, որոնք իբրեւ թէ «ճշմարտութեան» բացայայտման սիրոյն, նպատակադրեալ կերպով եւ առարկայական մօտեցումներով քրիստոնէական կեանքը կը մեկնեն, սակայն Քրիստոսի բերնին մէջ ալ սուտեր տեղադրելու աղանդաւորական յանդիմանութեամբ: Երբեմն իրարու անկապ հաստատումներու մերձեցումով հակասութիւններ գտնելու, եւ երբեմն ալ նոյն մեթոտի կիրարկումով, Եկեղեցւոյ ու-

սուցումները ջրելու անպարկեշտ մօտեցումները, պարզապէս տգէտներու դպրոցին անուս աշակերտութեան հիացում կը պատճառեն, դասարանին մէջ խրախճանական մթնոլորտի ստեղծման առիթ ալ հանդիսանալով:

Եկեղեցին այսօր կայսրերու պէտք չունի հալածանքի ենթարկուելու համար: Պարզապէս իր իսկ սնուցած գաւազներէն ոմանք, անառակ որդիին ապերախտութեան ցնցոտին հագած, քանդիչ քննադատութեան խորագանով կը հալածեն Քրիստոսի Եկեղեցին՝ իրենց «Մայր»ը: Մօր դէմ շղթայազերծուած հալածանքի երեւոյթը ամէնէն անմարդկային հալածանքը պէտք է նկատել ամէն ժամանակներուն համար: Իսկ Եկեղեցին իբրեւ Մայր, մեզ ծնող, մեզ դիպցնող ու հասուն տարիքի հասցնող, ինչքան աւելի պիտի ծանրացնէ մեղքը գայն հալածողներուն, ըլլան անոնք աղանդաւորական շարժումներու գիտակից դեկավարներ, թէ՛ տգէտ ու ողորմելի՛ հետեւորդներ:

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ԶԻՖԹՃԵԱՆ



### ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՅԸ

ԿԵՆԴԱՆԻ ՔՐԻՍՏՈՍ ԴԱՌՆԱԼ

Ամէն անգամ, որ կը նստինք սեղանի շուրջ, եւ կ'առնենք հացը, կ'օրհնենք, կը կտրենք ու կը բաշխենք զայն ըսելով. «Քրիստոսի մարմինն է», զիտենք, որ Յիսուս մեր մէջ կը գտնուի: Ան մեր մէջ կը գտնուի ոչ իբրեւ սոսկ յիշատակը ժամանակին ապրող մարդու մը, այլ իբրեւ ճշմարիտ, կենսատու ներկայութիւն, որ կը կերպարանափոխէ մեզ: Ճաշակելով Քրիստոսի մարմինը, մենք կը վերածուինք ապրող Քրիստոսի եւ ընդունակ կ'ըլլանք յայտնաբերելու մեր ընտրուած եւ օրհնուած ըլլալը, կը ճանչնանք մեր խոշտանգումը եւ վստահ կ'ըլլանք, թէ այն, ինչ կ'ապրինք, կ'ապրինք ուրիշներուն համար, ուստի, Յիսուսի նման մենք ալ աշխարհին համար ուտելիք դառնանք:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Երբ կը հաւաքուինք հացի սեղանին շուրջ, կը փոխակերպուինք ոչ միայն անհատապէս, այլ նաեւ իբրեւ ընկերութիւն: Մենք՝ ամէն իմաստով տարբեր տարբեր իրարմէ, մէկ ու միակ մարմինի կը վերածուինք: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Մենք բոլորս ալ մէկ հաց, մէկ մարմին ենք, որովհետեւ նոյն եւ միակ հացն է որ կը ճաշակենք» (Ա.Կր 10:17): Ուստի եւ մենք կը վերածուինք ապրող ու կենդանի Քրիստոսի՝ առնուած, օրհնուած, կտրուած ու բաշխուած արար աշխարհին: Կը դառնանք կենդանի վիան ու մարմնացումը Աստուծոյ գերագոյն ցանկութեան, այսինքն մէկ ընտանիք:

ՏԱՌԱՊՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՅ ՄԷՋ  
ԶՔՐԻՍՏՈՍ ՃԱՆՁՆԱԼ

Անհատներուն պէս ընկերութիւններն ալ կը տառապին: Ամէնուրեք կը գտնուին բազում մարդիկ, որոնք կը հայածուին, կը շահագործուին ու աննկարագրելի ոճիրներու գոհ կը դառնան: Կան նաեւ բազմաթիւ տառապող ընտանիքներ, տառապող ընկերային շրջանակներ, միութիւններ, ցեղախումբեր ու նոյնիսկ ամբողջ ազգեր: Այս ժողովրդային հսկայ մարմինն մէջ մենք պէտք է ի գօրու ըլլանք տեսնելու տառապող Քրիստոսը, քանզի այդ զանգրւածներն ալ ընտրուած են, օրհնուած, կտրուած եւ բաշխուած աշխարհին:

Երբ միասնաբար կը փորձենք արձագանգել մարդոց ցաւերուն ու տառապանքներուն եւ երբ մէկտեղ կ'աշխատինք արդարութեան եւ խաղաղութեան ի խնդիր, անպայման խնամած ու հոգացած կ'ըլլանք Քրիստոսը, որ տառապեցաւ եւ մեռաւ այս աշխարհի փրկութեան համար:

Ո՞վ է ԸՆԿԵՐՈՒ

Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Սիրէ ընկերդ քու անձիդ պէս» (Մտ 22:38): Բայց ո՞վ է ընկերս: Յաճախ այս հարցումին կը պատասխանենք այսպէս, «Իմ ընկերներս անոնք են, որոնց հետ կ'ապրիմ այս աշխարհին մէջ, յատկապէս հիւանդները, մահամերձներն ու բոլոր կարիքաւորները»: Բայց Քրիստոս այսպէս չ'ըսեր: Երբ Յիսուս բարի Սամարացիին առակը կը պատմէ (Ղկ 10:29-37) պատասխանելու



համար «ո՞վ է ընկերս» հարցումին, Ան կ'աւարտէ գայն հետեւեալ ձեւով: «Արդ, ըստ քեզի, երեք անցորդներէն ո՞ր մէկը եղաւ աւագակներուն ձեռքը ինկողին ընկերս»: Յիսուս կը յատակեցնէ իր պատասխանը միայն ու միայն բարի Սամարացիին օրինակով: Բարի Սամարացիին, որ մօտեցաւ մարդուն, վէրքերը փաթթեց, անոնց վրայ ձէթ եւ գինի դնելով, բարձելով գայն իր գրաստին վրայ եւ տանելով պանդոկ ու խնամելով: Ուստի իմ ընկերս այն է, որ բնաւ չ'անտեսեր զիսկը մօտենայ ինձի, երբ նեղն եմ ինկած:

ԿԱՐԵՆԱԼ ԿՏՐԵԼ ՃԱՄԲԱՆ  
ՈՒ ԱՆՑՆԻԼ ԻՐԱՐՈՒ ՍԻՐՈՅՆ

Մենք ընկերներ կը դառնանք, երբ կարենանք իրարու սիրոյն կտրել ճամբան ու անցնիլ: Հսկայ անջրպետ մը կայ ընդմէջ սպիտակամորթին ու սեւամորթին, երիտասարդին ու ծերին, առողջին ու հիւանդին, բանտարկեալին ու ազատին, հրեային ու հեթանոսին, իսլամին ու քրիստոնեային, բողոքականին, լատինին ու ուղղափառին միջեւ:

Բազմաթիւ ճամբաներ անցնելու կարիքը կայ: Մեզմէ իւրաքանչիւրը շատ զբաղուած է իր իսկ շրջանակին մէջ: Ունի իր հարագատ ժողովուրդին հոգերն ու անձնական գործերը: Եթէ ժամանակ առ ժամանակ «կտրելով ճամբան» անցնինք եւ ուշադրութիւն դարձնենք ճամբուն միւս կողմը կատարուող անցողաբարձին եւ պատահարին, պէտք է իսկապէս ընկեր-բարեկամներ դառնանք:

ՄԱՐԿՈՑ ՄԻՋԵՒ ԳՈՅԱՑԱԾ  
ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՄՕՏԵՑՆԵԼ

Ընկեր ըլլալ կը նշանակէ մարդոց միջեւ ինկած հեռաւորութիւնը կարճել:

Այնքան ատեն, որ հեռաւորութիւն կայ մեր միջեւ ու չենք յաջողիր զիրար տեսնել, այլազան միտքեր ու գաղափարներ կ'ունենանք, ուստի եւ յաճախ կը խուսափինք յարաբերելէ անոնց հետ: Կրնայ ըլլալ, որ անոնք ալ նոյն վերաբերումն ունենան մեզի հանդէպ, որով երկուստեք կը մոռնանք, որ եղբայրներ ու քոյրեր ենք:

Երբ քաջութիւնն ունենանք կտրելու մեզ բաժնող ճամբան եւ իրարու աչքի մէջ նայիլ, այն ատեն միայն կրնանք տեսնել, թէ մենք բոլորս ալ Աստուծոյ զաւակներն ենք մարդկային նոյն ընտանիքին անդամները:

ՄԵՆՔ ԱՅՆ ՁԵՆՔ, ԻՆՉ ՈՐ ԵՆՔ

Մեր զգացական կեանքը անընդհատ վերիվայրումներ կ'արձանագրէ: Մերթ կ'ունենանք բազմատեսակ հոգեվիճակներ, որոնք կը տարուբերին ուրախութեան ու տխրութեան, տազնապներու եւ ներքին բուռն փոթորկումներու միջեւ: Շատ յաճախ մենք անգոր ենք հսկելու անոնց վրայ եւ գսպելու գանոնք, քանի որ մեր զգացած կեանքը նման չէ հոգեկանին, քանի որ, մեր հոգեւոր կեանքը Աստուծոյ Ս. Հոգիին կեանքն է, որ մեր ներսիդին կը բնակի: Հարկ է շարունակ անդրադառնալ մեր զգացումներուն փոփոխութեանց, ձուլել մեր հոգիներն Աստուծոյ Ս. Հոգիին եւ միշտ ու միշտ յիշել, որ մենք այն չենք, ինչ որ կը զգանք:

"Bread for the Journey"

Henri J.M. Nouwen

Թրգմ.՝ ՄԱԿԱՐ ԱԲՂ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Շար. 24)

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

### «ՅՕԴՈՒԱԾՆԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ»

Սոյն գեղատիպ լաթակազմ հատորը գրական արգասիքն է Արմաշեան Փառէն Եպս. Սելքոնեանի (1873-1957), գոր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբաններէն՝ Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեան, մամուլի մէջ զրուած ու «Հասկ» ամսագրի մէջ տպուած գրութիւնները մէկտեղելով, բարեխղճօրէն խմբագրած ու հրատարակած է Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան մեկենասութեամբ:

Հոգեւոյս սրբազան հեղինակը եղած է դասնկերը եւ օծակիցը երանաշնորհ թորգոմ պարտիարք Գուշակեանի, որոնք իրենց բարձր ուսումը ստացած են Արմաշի դպրեմանքին մէջ, աշակերտելով Օրմանեան եւ Դուրեան սրբազաններու:

Մեծարժէք աշխատասիրութիւններու ժողովածոյ մըն է «Յօդուածներ եւ Ուսումնասիրութիւններ» հատորը: Անոր բովանդակութիւնը աչքէ անցնելով, իրազեկ կը դառնանք որ անոնք սերտ ազերս ունին «հայ եկեղեցւոյ աստուածաբանութեան, ծէսին, արարողակարգին, պատարագին, ըմբռնումներուն, աւանդութիւններուն եւ օրէնքներուն մասին»: Այսպէս Քարոզախօսականի նիւթերն են:



- Քրիստոնեան ազատ է «օրէնք»ին դործերէն եւ Քրիստոս լոյս աշխարհի (էջ 21-39):

Կանոնագիտական որակումի տակ պրպտած է:-

- Կաթողիկոսական ընտրութիւնը անցեալին մէջ եւ այսօր (էջ 40-86):

Աստուածաբանական գրուածքով յուզած է:-

- Քրիստոնեան գերեզմանէն անդին հարցը (էջ 87-136):

Ծիսական-եկեղեցագիտական բաժինով վերլուծած է:-

- «Հասկ»ի պատասխանները եւ

- Բաղդատական համառօտ ուսումնասիրութիւն:

Հայկական Պատարագամտոյցի մասին (էջ 137-282):

Պատմա-ուսումնասիրական վերտառութեամբ բացատրած է:-

- Հայց Առաքելական եկեղեցին:

- Արմաշու Դպրեմանքը (1889-1915):

- Նահատակութիւն Ս. Վարդանանց եւ Ս. Ղեւոնդեանց:-

- Բացատրութիւն եւ վերլուծում քանի մը շարականներու...:

- Պատասխան քաւարանի ջատագովին...:

- Բարեխօսութիւն Սրբոց:

- «Աւետիք»-եան խնդիրներ (էջ 283-479):

Հատորը կը բովանդակէ նաեւ 5 գրախօսական, 6 մահագրութիւն եւ 2 քրոնիկային նիւթեր:

Խմբագիր Հայր Սուրբը 7-20 էջերու մէջ բժախնդիր աշխատանքով տուած է փառէն Սրբազանին կենսագրականը, ու անոր կեանքին հետ առընչուող նկարներ:

Փառէն եպիսկոպոս ուսումնական ու վարչական պաշտօններու բերումով աստանդական կեանք մը վարած է Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իշխանութեան թեմերէն ներս: Կիլիկիոյ հայրութեան պարպումէն յետոյ, 930-ին, Բարգէն կաթողիկոսի հրաւերով անդամ կը դառնայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբանութեան:

Մեքոնեան Սրբազանին լեզուն մաքուր եւ սահուն է, ոճը՝ կուռ: Հետագօտած նիւթերը հմտութեամբ նկարագրած ու շարադրած է: Ան եղած է Հայց-Առաքելական Եկեղեցւոյ ջատագով ու անձնուէր հոգեւորականներէն, որնք նախանձախնդիր կերպով, ուղիղ դաւանանքով պաշտպանած են հայ ազգային

եկեղեցւոյ դաւանութիւնը, վարդապետութիւնը, իրաւունքները եւ վարկն ու պատիւը:

Գերապատիւ խմբագիրը իրաւացիօրէն դիտել կու տայ. «Վստահ ենք որ Ս. Գրային, եկեղեցագիտական, կրօնական ու պատմական բնոյթի յօդուածները օգտակար պիտի հանդիսանան հայ հաւատացեալին, հոգեւորական թէ աշխարհական, հարստացնելով անոնց իմացական պաշարը: Նաեւ, Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան խնդրով գումարուելիք որեւէ ժողովէ առաջ, նպատակայարմար է ընթերցել սոյն հատորի եկեղեցագիտական-կանոնագիտական բոլոր յօդուածները, առաջնորդուելու համար այստեղ արտայայտուած աւանդական, շինիչ ու ուղենշային մըտածումներէն» (էջ 20):

Ջերմապէս յանձնարարելի է որ հայ եկեղեցիով հետաքրքրուած անհատներ եւ ուսումնասէրներ, Կաթողիկոսարանին գրատունէն օրինակ մը ապահովեն օգտուելու համար անոր մատուցած հոյակապ երկասիրութիւններէն:

ԲԱԲԳԷՆ ԹՕՓՃՅԱՆ

### «ԱՆՏՈՒՔԻ ՄԵՐՉԱԿԱՅ ՌՈՒՃԻ ՀՈՎԻՏԻ ՀԱՅԵՐԸ»

Հայէպարնակ բանահաւաք, պատմագիր եւ կրթական վաստակաւոր մշակ Յակոբ Չոլաքեանի պատմա-ագգազրական ուսումնասիրութիւնները պատկառելի ու հեղինակաւոր անուն մը դարձուցած են զինք բանասիրական բնագաւառին մէջ:

Չոլաքեանի հրատարակեալ գործերուն մեջ ծանր կը կշռէ մասնաւորաբար Քէսապը: Ինք որ Քէսապի ծնունդ է (1947), 60-ական թուականներու վերջերէն սկսեալ շարունակ իր աշխատասիրութիւններուն կիզակէտը դարձուցած է Միջերկրականի արեւմտեան ափին ծուարած սուրիապատկան այդ լեռնային կանաչագարդ հողաշերտը, առանձնաբար ուսումնասիրելով երբեմնի գոլտ հայաբնակ այս գիւղախումբին իւրայատուկ գաւառաբարբառը, աշխարհագրութիւնը, բանահիւստութիւնն ու ազգագրութիւնը, տոհմիկ մշակոյթը, անտեսութիւնն ու ամբողջական պատմութիւնը՝ իրենց բաղադրիչ երեսակներով: Մեր գրագորանին մեջ կողք-կողքի են արդէն հեղինակին «Քէսապի ժողովրդական երգարուեստը» (Հայէպ, 1980), «Քէսապի Բարբառը» (Հայէպ, 1986), «Քէսապ» խորագրեալ ընդարձակածաւալ ուսումնասիրութեան հաստափոր երեք հատորները (Հայէպ, 1995, 1998, 2004): Այս հինգ հատորները միասնաբար մեր առջեւ կը դնեն ճիշդ 2300 էջանի գիտական վիթխարի աշխատասիրութիւն մը, որ

լիովին կը փրկէ նշեալ տարածքին պատմութիւնը ու յաջորդ սերունդներուն կը կտակէ շատ թանկագին աւանդ մը:



Հիմա, երբ այլեւս յաջողապէս իր աւարտին բերուած է Քէսապի պատմագրութեան երկարաշունչ աշխատանքը, Յակոբ Չոլաքեան ձեռնամուխ եղած է նոր հետազոտութիւններու պրպտումներու: Ան իր հետաքրքրութիւններուն կարկինը աւելի լայն բանալով՝ այս անգամ սեւեռումի ենթարկեր է Քէսապի գաւառակէն դէպի արեւելք տարածուող դաշտային շրջագօտին, որ աշխարհագրականօրէն ծանօթ է Ռուճի հովիտ անունով:

260 էջանի հմտալից ուսումնասիրութիւն մը ահաւասիկ, որ զեղատիպ ու ամրակազմ հատորի մը վերածուելով դրուած է մեր գրասեղանին:

Հատորը լոյսին բերուած է Անթիլիաի մէջ, Կիլիկիոյ Կաթողիկոսարանի երդիքին տակ վերջերս հաստատուած «Ռիչըրտ եւ Թինա Գարօլան» հրատարակչական հիմնադրամին մեկենասութեամբ:

Սկիզբէն իսկ յայտնենք, թէ Յ. Չոլաքեանի պատմա-ագգազրական այս ուսումնասիրութիւնը 2002-ին իբրեւ ատենախօսութիւն ներկայացուած էր Հայաստանի Գիտութիւններու Ազգ. Ակադեմիոյ «Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտ»ի դատակազմին առջեւ, ու հեղինակին ապահոված էր «Պատմական գիտութիւններու թեկնածու»ի կոչում:

Նորատիպ հատորը կը կոչուի «Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը»:

Գիրքը, ուրեմն, պատմութեան խառնուրդ մըն է Անտիոք քաղաքին (թրքական այժմու Անթաքիան, Հաթայ նահանգ) ու անկէ դէպի արեւելք կամ հարաւ-արեւելք տարածուող ամբողջ շրջագօտին, ուր գտնուող տասնեակներով գիւղեր միջին դարերէն սկսեալ ունեցած են հայկական խիտ բնակչութիւն, երբեմն գերակշիռ ներկայութեամբ: Խնդրոյ առարկայ շրջագօտին մեծագոյն մասը կը շարունակէ մնալ սուրիապատկան հող՝ Որոնդէս (տեղացիներու լեզուով՝ Ասի) գետին դրացնութեամբ, փոքր մէկ մասն ալ 1939-ին ինկած է Թուրքիոյ սահմաններէն ներս: «Ռուճի հովիտ» անուանումով՝ հեղինակը նկատի ունի Հայկաի արեւմուտքը գտնուող Հարեմ գիւղաքաղաքէն դէպի հարաւ, մինչեւ Ճըսըր Շուղուր քաղաքը երկարող տարածքը, կամ այլ բացատրութեամբ՝ այն բլրադաշտերը, որոնք կը գտնուին Իսկէնտէրուլի Սանճագին հարաւ-արեւելեան կողմին, թուրք-սուրիական սահմանագծին մերձակայքը:

Հատորին մուտքին գետեղուած նշում մը նկատել կու տայ, թէ «աշխատութիւնը պատմական Անտիոքի վարչաքաղաքական տարածքին մէջ մտնող Ռուճի հովիտի հայ գաղթականութեան պատմութիւնն ու ազգագրութիւնը հանգամանորէն ներկայացնելու առաջին փորձն է»:

Յ. Չոլաքեան իր այդ «փորձ»ը գլուխ հանած է կատարեալ վարպետութեամբ, շարունակ քայլելով անկոխ ուղիներէ, վերբերելով պատմական հետաքրքրական վկայութիւններ, արձանագրելով պատմութեան համար անծանօթ մնացած ինչ-ինչ հաւաստի դէպքեր կամ դրուագներ՝ ուղեցոյց ունենալով ո՛չ միայն հայկական դասական աղբիւրները, այլեւ արաբերէն հին ու նոր մեծաթիւ պատմագրքեր: Ընթերցողը

պիտի շքմի արաբական սկզբնաղբիւրներու մէջ հայերու մասին այսքան առատ ու շահեկան անդրադարձումներ գտնելով...:

Համապարփակ «ներածութիւն»է մը ետք (էջ 11-23), ուր բացատրութիւններ կը տրուին աշխատասիրութեան մայր կառոյցին եւ այնտեղ օգտագործուած արխիւային տարաբնոյթ նիւթերուն մասին, հեղինակը վարագոյրը կը բանայ գրքին Ա. գլուխին վրայ, որ ընդհանուր ակնարկ մըն է Անտիոքի եւ շրջակայքի հայ գաղթականութեան պատմութեան վրայ (էջ 25-88): Ան անհրաժեշտ կը գտնէ այս «ակնարկ»ը՝ իրաւացիորէն համոզուած ըլլալով որ «Ռուճի հովիտի հայ բնակչութեան ծագման ու կազմաւորման հետ կապուած հարցերը կարելի չէ պարզաբանել առանց Անտիոքի շրջանի հայ հին գաղթականութեան պատմութիւնը ուրուագծելու»:

Գիտենք, որ միջին դարերուն Անտիոքի ու անոր մերձակայ շրջաններուն մէջ հայ գաղթականներու նկատառելի ներկայութիւն մը կար: Փաստն այն է, որ հայոց Խաչիկ Ա. Արշարունի Կաթողիկոսը (973-992) Մեծ Հայքի երբեմնի սահմաններէն դուրս՝ Հայ Եկեղեցոյ առաջին թեմերէն մին հաստատեց Անտիոքի մէջ, Ժ. դարու վերջին քառորդին: Իսկ երկու դար յետոյ, 1179-ին, երբ կը գումարուէր Հռոմկլայի եկեղեցական նշանաւոր ժողովը, Անտիոքէն, Լաւողիկէէն (Լաթաքիա) եւ Աֆամիայէն (այժմու Համայի շրջան, Ռուճի հովիտէն դէպի հարաւ) թեմակալ հայ եպիսկոպոսներ կը մասնակցին անոր: Շատ կարեւոր հաւաստումներ են ասոնք, որոնք կը վկայեն այդ շրջանին մէջ հայոց թեմական ու վարչական ներկայութեան մասին:

Չոլաքեան կը յիշեցնէ, որ Ժ. դարէն սկսեալ՝ երբ Անտիոք ինկաւ բիւզանդացիներու տիրապետութեան տակ, քաղաքը իրարայաջորդ կերպով ունեցաւ

քանի մը հայ կամ հայագրի կառավարիչներ: Արդէն քաղաքը գրաւոր կայսերական բանակներուն հրամանատարն էր հայագրի Միքայէլ Վարդը: Հայ կառավարիչներէն նշանաւոր եղած են մանաւանդ շիրակացի Պեխտ Խաչատուրն ու Վասակ Պահլաւունին (ԺԱ. դար), որոնք երկուքն ալ գոհ գացած են տեղացի յոյներու հակահայ դաւերուն: Անոնց յաջորդած է Փիլարտոս Վարաժնունի անկախապաշտ հայ իշխանը, որ 1078-ին կը գրաւէ Անտիոքը յունաց ձեռքէն ու կը կցէ գայն Բալուէն մինչեւ Կիլիկիա տարածուող իր իշխանութեան հողերուն:

Քանի մը տարի յետոյ՝ Անտիոք յաջորդաբար կ'իյնայ նախ սելճուքներու, ապա խաչակիր բանակներու ձեռքը: Քաղաքին մերձակայ բերդերուն եւ ամրոցներուն տիրութիւն ընող հայերը կը գինակցին խաչակիրներուն: Այս վերջինները կը հիմնեն Անտիոքի լատին դքսութիւնը (1098-1268): Անոնցմէ ետք քաղաքին ու շրջանին տէր կը դառնան մեմլուքները (ԺԳ.-ԺՁ. դարեր), յետոյ օսմանցիները: Ամբողջ այս դարերուն՝ հայ բնակչութիւնը կ'ենթարկուի մեծ ու փոքր գանազան տեղաշարժերու, թիւրքմէն եկուոր աղաներ անոր ձեռքէն կը խլեն իր հողերը, աղբիւրները, ջրաղացները, արօտավայրերը: Հետեւաբար, երբ կու գանք կը կանգնինք 19-րդ դարու կեդրոնը՝ Անտիոքի շրջանի հայութիւնը մեզի կը ներկայանայ հետեւեալ վեց շրջանակներով:-

ա) Պէյլանի գաւառակը, Աղեքսանդրէթի նաւահանգիստով, Գրըրգիանով ու վեցեակ մը հայաբնակ գիւղերով:

բ) Սուէտիա կամ Մուսա լեռան գիւղերը:

գ) Անտիոք, որուն փոքրաթիւ հայ նոր գաղութը կազմուած էր շրջակայ գօտիներէն հոն եկած առեւտրականներէ:

դ) Քէսապ գաւառակը՝ իր երկու տասնեակ գիւղերով:

ե) Լաւոզիկէ (Լաթաքիա) նաւահանգիստը ու անոր մերձակայ Արամօ եւ Ղնէմիէ հայաբնակ գիւղերը:

զ) Ռուճի հովիտի հայ մնացորդացը՝ ձըարը Շուղուրի շրջակայ քանի մը գիւղերով:

Յակօր Չոլաքեանի ներկայ ուսումնասիրութեան բո՛ւն թիրախը գլխաւորաբար այս վերջին շրջանակն է՝ Ռուճի հովիտը, եւ որուն յատկացուած են հատորին յաջորդող միւս երկու գլուխները (էջ 89-246), ամբողջութեամբ:

\* \* \*

Չոլաքեանի պրպտումները կը հաստատեն, թէ ԺԹ. դարէն մինչեւ Մեծ Եղեռն՝ Ռուճի հովիտի երկայնքին գոյութիւն ունեցեր են հայաբնակ տասնեակ գիւղեր կամ բնակավայրեր, որոնք «տակաւին ամբողջական կերպով յայտնագործուած չէին հայ թեմական իշխանութիւններուն կողմէ»: Լաթաքիոյ եւ շրջակայքի հոգեւոր երբեմնի տեսուչ Մովսէս Վրդ. Ոսկերիչեան 1911-ին ցուցակագրեալ մարդահամար մը կատարեր է Ռուճի հովիտի 4 գիւղերուն մէջ (Եագուպիէ, Արֆայի, Եամատի եւ Կոչի), այնտեղ հաշուելով շուրջ 200 տուն հայ բնակիչ: Այս հետաքրքրական ցուցակը լրիւ հրատարակուած է ներկայ հատորին յաւելուածական բաժնին մէջ: Բայց ասոնցմէ դուրս՝ գոյութիւն ունեցեր են «աչքէ ու սրտէ հեռու» բազմաթիւ հայաբնակ (արաբախօս) գիւղեր կամ գիւղակներ ալ,- Վերին Թընզրրի, Գոնտունա, Պուրճ, Արմանձօ եւայլն: Ասոնց բնակիչները, բոլորն ալ, 1915-ին տեղահանուեր ու աքսորուեր են դէպի Դամասկոսի ու Յորդանանի ուղղութեամբ...: Ընկրգիկ անունով հայ գիւղը (այժմ Ղասսանիէ) լրիւ յունաղական դարձեր է: Ուրիշ գիւղեր՝ հայաթափուեր կամ խամրեր են ինքնաբերաբար:

Կան սակայն երկու կարեւոր գիւղեր, որոնց պատմութիւնն ու ճակատը,

տագիրը ընթացք է բուրոսովին տարբեր պարագաներու տակ:

Ասոնք կը կոչուին Եագուպիէ եւ Գնիէ:

Երկու գիւղերը իրարու կից են ու կը գտնուին Ճըսըր Շուղուրէն 18 քլ. դէպի հիւսիս: Պոլսոյ «Բիւրակն» թերթի 1899-ի թիւերէն մէկուն մէջ նշուած է որ այս գիւղերէն իւրաքանչիւրը «ուսի մօտ 150 տուն բնակիչ, գուտ հայ են, կը խօսին արաբերէն, առանց բառ մը իսկ հայերէն հասկնալու»:

Գնիէ գիւղին համար պատուհաս մը կը դառնայ 1870-ական թուականներուն հոն ներթափանցած լատին կաթոլիկ քարոզչութիւնը: Ըստ հեղինակին, Հալէպի մօտ Ֆրանսայի եւ Իտալիոյ հիւպատոսներուն ի գործ դրած ճնշումներուն հետեւանքով արագօրէն կը կազմուի Գնիէի լատին համայնքը՝ իր վանական կեդրոնով, եկեղեցիներով, դպրոցով, արհեստից վարժարանով ու բուժարանով: Ասոր դիմաց, մայր համայնքը չի կրնար հոգեւոր, կրթական ու ազգային գարթօնքով մը վերականգնի:

Լատիններ տարուէ տարի կը գօրանան: 1905-ին կը տեղեկացուի, թէ անոնք, գիշերով, գաղտնարար կը քանդեն գիւղի Ս. Կիպրիանոս հայոց եկեղեցիին տանիքը: Յաջորդ տարի՝ անոնք գանակոծումի կ'ենթարկեն գիւղի ծխատէր հովիւ՝ Կարապետ Քհնյ, Փափագեանը: Չորաքեան տակաւին կը գրէ, թէ «լատինները կը յաջողին գիւղին բոլոր բնակիչները, Տ. Կարապետ Փափագեանն ալ, Ճըսըր Շուղուրի պետական տոմարին մէջ լատին արձանագրել: Անով Գնիէի հարցը վերջացուցած ու իրաւականօրէն ալ գիւղի աթոռապատկան կարուածներուն ու Ս. Կիպրիանոս եկեղեցւոյ սեփականատէրը կրնային հանդիսանալ: Գնիէ գիւղը գրեթէ ամբողջապէս լատինացած էր. 131 տունէն 126-ը լատին էին: Հինգ ընտանիքներ յամառօրէն կապուած կը մնային մայր եկեղեցւոյ» (էջ 136):

Այս տխուր իրադարձութեան դիմաց ի՞նչ կ'ընէ դրացի Եագուպիէն:

Չորաքեան կը նշէ, որ «եագուպիէցիք կ'ընդդիմանան լատին հայերու թափանցումներուն եւ նոյնիսկ կը փորձեն փրկել Գնիէն: Լատինները կը յաջողին երկու գիւղերու յարաբերութեանց մէջ ատելութիւն եւ թշնամական որոմներ ցանել, ու, վերջապէս, խոցել Եագուպիէի միասնականութիւնը՝ քանի մը ընտանիքներու լատինացումով: Լատին հայերը ամէն ճիգ եւ նիւթական կարելիութիւններ կը շուայեն, սակայն չեն կրնար Գնիէի նոյն յաջողութիւններուն հասնիլ Եագուպիէի մէջ: 1905-ին հոս միայն հինգ լատին ընտանիքներ կան, բայց ունին նորաչէն եկեղեցի մը ու վարդապետ մը» (էջ 104):

Վերլուծելու առթիւ լատին Ֆրանչիսկեան միաբաններու ներթափանցումներուն ազդու եւ յաջող ընթացքը հայ գիւղերէ ներս՝ Յ. Չորաքեան անոր հիմնական պատճառ կը նկատէ Հայ Եկեղեցւոյ թեմական մնայուն ու գօրաւոր կառոյցի մը չգոյութիւնը Անտիոքի շրջանին մէջ: «Գնիէի մէջ լատինացումի ընթացքը եւ հայ թեմական իշխանութիւններու անտարբերութիւնը» խորագրեալ հատուածին մէջ (էջ 125), ան արխիւային բազմաթիւ նիւթերու հրապարակումով կը պատմէ, թէ ինչպէս 1878-ին Գնիէի լատին կղերականները կը յաջողին դաւանափոխ դարձնել գիւղի հայ քահանան՝ Տ. Մեսրոպ Նազլեանը, որ իր կազին՝ իր հետ կը լատինացնէ 30-40 ընտանիքներ...: Այս ցնցիչ դէպքէն ետք Գնիէ կը վերածուի լատինաց ամբողջի մը: Դժբախտարար, ո՛չ Սիսի Աթոռը, ո՛չ Երուսաղէմի Պատրիարքութիւնը, ո՛չ ալ Հալէպի Առաջնորդարանը կը յաջողին ընթացքը փոխել դէպքերուն: Անոնք կը մնան անգօր ու անհոգ հանդիսատեսի դերին մէջ...:

1915-ի Եղեռնի օրերուն, մինչ Լաթաքիոյ մերձակայ Արամօ ու Ղնէմիէ գիւղերու հայերն անգամ կը տարագրու-

ւէին, Եագուպիէ եւ Գնիէ գերծ կը մնան համատարած աքսորէն ու չեն ենթարկուի մարդկային կամ նիւթական որեւէ կորուստի: Լատին Եկեղեցին կը հաւաստիացնէ թէ ատիկա կարելի դարձած է իր շնորհիւ: Չորաքեան չափազանց հպանցիկ տողերով կ'ակնարկէ այս կարեւոր հարցին, մանրամասնութիւններ բնաւ չի տար, այլ միայն կը նշէ թէ «գիւղացիք լատին ներկայանալու անհրաժեշտութիւնը լուեկայն կ'ընդունին՝ տարագրութեան սարսափէն մղուած»: Հետեւաբար, Գնիէի նման Եագուպիէն ալ 1916-1922 թուականներուն լուծուած կը թուի ու կը ներկայանայ արդէն իբրեւ ամբողջապէս լատինացած գիւղ, առանց հայ քահանայի, հայ ուսուցիչի ու հայ դպրոցի: Հեղինակը դեռ կ'աւելցնէ. «Ժողովուրդին հոգեւոր բոլոր պէտքերը, առանց բացառութեան, կը հոգան լատին հայրերը, ժողովուրդը լատինաց եկեղեցի կ'երթայ, լատին տօները կը յիշուին, դպրոցականները լատինաց վարժարան կը յաճախեն: Հայերէնի ուսուցում չկայ, ազգային կեանք չկայ, ո՛չ մէկ արտաքին ազգային յարաբերութիւն» (էջ 170):

1923-ին, գիւղին ճակատագիրը փոխող շրջադարձային դէպք մը կը պատահի: Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան վտարանդի հայրապետը Եագուպիէ կ'այցելէ Քէսապի շրջանին տրուած հովուապետական շրջագայութեան մը ընթացքին: Ծերունի կաթողիկոսին այս պատմական այցը կ'իրականանայ «դրժ-

ուարակոխ ճանապարհներով եւ գիւղական գրաստներով»...: Եագուպիէցիք իրենց պապենական հայադաւան արմատներուն վերադառնալու յուզումը կ'աւարին: Հայրապետը, տեղւոյն վրայ, գիւղին համար քահանայ կը ձեռնադրէ քէսապցի ուսուցիչ Սերոբ Այանեանը (Տ. Յուսիկ): Կը վերաբացուի նաեւ հայոց վարժարանը:

Լատիններ կը խանգարեն սակայն մայր համայնքի վերակազմումի այս ճիգերը՝ զօրակցութիւն գտնելով Ֆրանսական գաղութարար իշխանութեանց կողմէ ալ: Նորոժ քահանան կը խոչտանգուի ու կը վռնտուի գիւղէն, դա՛րձեալ մարդորսութեան տեղ միջոցներ կը կիրարկուին անօգնական գիւղացիներուն նկատմամբ: Բարբախտաբար, Հայէպի Ազգ. Առաջնորդարանը այս անգամ ձեռնունայն չի մնար: Բերիոյ Թեմի Առաջնորդ Արտաւազգ Եպս. Սիւրմէեան Եագուպիէ կ'այցելէ 1929-ին եւ գիւղացիներուն կողմէ կ'ընդունուի իբրեւ ազատարար մը: Նոր կարգադրութեամբ մը՝ գիւղին վրայ հովիւ կը նշանակուի արաբերէնի քաջատեղեակ բնիկ սասունցի խիզախ եկեղեցական մը՝ Բարգէն Քէնյ. Յակոբեան: «Ան միայն չորս տարի կը ծառայէ այս գիւղին մէջ, բայց կը ձգէ անջնջելի յիշատակներ մարդոց մտքին մէջ ու գիւղի վերածնունդին կերտիչը կ'ըլլայ: Գիւղը կը փրկուի վերջնական կորուստէ ու կը սկսի հայօրէն գոյատեւելու իր երկրորդ շրջանը» (էջ 177):

1932-ին Եագուպիէ կ'այցելէ Բարգէն Ա. Աթուակից Կաթողիկոսը: 1935-ին Հ.Բ.Ը.Միութիւնը մասնաճիւղ կը հաստատէ հոս: 50-ական թուականներուն կը կառուցուին նոր դպրոց (Ազգ. Վերածնունդ Նախակրթարան) ու եկեղեցին (Ս. Հռիփսիմէ): Գիւղը տակաւ կը դառնայ փնտռուած ամարանոց: Հայոց Ս. Աննա նախնադարեան մատրան հրաշագործ համբաւը տեւաբար ուխտաւորներ կը բերէ գիւղ: Հայէպէն

\* Այլ աղբիւր մը կը նշէ սակայն, թէ Ա. Աշխարհամարտի արհաւիրքի օրերուն «հրոսակները իրենց հակաշոշոխ տակ առին ամբողջ շրջանը. կողոպուտ եւ մարդասպանութիւն առօրեայ պատահարներ էին. գոյժ, արջառ, մոյնիակ օրպապիկի համար մէկ կողմ դրուած մի քանի ֆիոկրամ ալիւրն ու ձաւարը կը յափշտակէին» (տե՛ս «Գեղարդ» Սուրիահայ Տարեգիրք, Բ. հատոր, 1976-78, էջ 367, Արքաիւս Երէցեանի յօդուածը):



մարզական ու երիտասարդական միութիւններ իրենց սեփական ճամբարները կ'ունենան այնտեղ: Հայաստանում ղանդաղորէն կ'ընդհանրանայ տուներուն մէջ: Իբրեւ համայնք՝ Եագուպիէն ենթակայ է Բերիոյ թեմին:

Իսկ դրացի Գնիէն 50-ական թուականներէն ետք տակաւ կը կորսնցնէ իր միատարր լատին գիւղ ըլլալու հանգամանքը ու գրեթէ կիսովին կ'ունենայ իսլամ եւ ալեւի արար բնակիչներ: Հիմա, տեղոյն (նաեւ Եագուպիէի) լատինները կը տառապին ազգային ինքնութեան պակասէ: «Լատին» տարագումը, որ դաւանանքային պատկանելիութիւն մը ցոյց կու տայ, այլեւս չի բաւարարեր գիրենք: Տանջող հարցումը հետեւեայն է.՝ Ի՞նչ ազգութեան կը պատկանին իրենք. արաբ, թէ հայ...

\* \* \*

Յակոբ Չոլաքեանի նորատիպ հատորը, որ ունի նաեւ լուսանկարներու յաւելումներով բաժին մը, կը կարգացուի լարուած հետաքրքրութեամբ ու կը յագեցնէ բժախնդիր ընթերցողը յիսպէս: Գործը շարուած ու խմբագրուած է անթերիօրէն: Նշմարելի են քանի մը փոքր վրէպներ միայն.

- Ժ. դարու հայոց կաթողիկոս Խաչիկ Ա. Արշարունիի մականունը թիւրիմացաբար արձանագրուած է Արշակունի ձեւով (էջ 34): Միաժամանակ, անոր կողմէ հաստատուած Անտիոքի հայ եպիսկոպոսութեան իբրեւ սկիզբ՝ տրուած է 973 թուականը: Այս թուականը Խաչիկ Արշարունի կաթողիկոսին ընտրութեան ու գահ բարձրացման թուականն է եւ աւելի տրամաբանական պիտի ըլլար ենթադրել՝ թէ Անտիոքի եպիսկոպոսութիւնը ո՛չ թէ անմիջապէս նոյն տարին, այլ քանի մը տարի յետոյ է որ կազմուեցաւ:

- Փիլարտոս հայ իշխանին մասին

կ'ըսուի, թէ անոր որդին՝ Վարսամը, «ղաւելով հօրը՝ գնաց Նիկիա», ու Սուլթան Սուլէյման Իպն Գուլթումիշը համոզեց գրաւելու Անտիոքը (էջ 42): Նշեալ Սուլթանը Կիլիկիոյ դրացի Իկոնիոյ (Գոնիա) վեհապետն էր, մինչ Նիկիան Պոլսոյ մերձակայ յունական քաղաք մըն է...:

- էջ 68-ի վրայ, Գրիգոր Գ. Պահլավունի կաթողիկոսին գահակալութեան թուականը պէտք է ուղղել՝ 1113-1166 (փոխան 1168-ի):

- Մուսա Լեւոն Վազրֆ գիւղին մասին կ'ըսուի, թէ գիւղը առ այսօր «ունի եկեղեցի, քահանայ, բնակիչները կը պահեն իրենց բարբառը» (էջ 83): Մեր կողմէ աւելցնենք, թէ գիւղին վերջին հովիւը՝ Սերովրէ Ա. Քհնյ. Կիւլեան, բնիկ Վազրֆցի, վախճանած է 2002 Յունիս 10-ին: Այդ օրէն ի վեր՝ գիւղը կը շարունակէ մնալ առանց քահանայի:

- 30-ական թուականներուն Եագուպիէի մէջ պաշտօնավարած սասունցի քահանան՝ Տ. Բաբգէն Յակոբեանը, թիւրիմացաբար ներկայացուած է Աճէմեան մականունով (էջ 176-177):

\* \* \*

Ուրախալի է հաստատել, որ այս գրքին երեւումին գրեթէ զուգընթաց՝ Հայէպի մէջ լոյս ընծայուեցաւ նաեւ Եագուպիէի նուիրուած առանձին պատմագիրք մըն ալ («Եագուպիէն երէկ եւ այսօր»), գիւղին նահապատներէն տոքթ. Աբրահամ Երէցեանի հեղինակութեամբ:

Եագուպիէի անցեալի պատմութեան գրառումին մասին այս անօրինակ հետաքրքրութիւնը այնքան գնահատելի է, որքան գնահատելի են անոր այսօրուան գոյերթին համար թափուած ճիգերը:

ԼԵՆԻՆ ՇԱՌՈՅԵԱՆ

**ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

**ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

**Ա.**

**ԴՊՐԱՅ ԵՒ ԿԻՍԱՍԱՐԿԱԲԱԳԱՅ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ**

*Շարաթ եւ Կիրակի 2-3 Յունիս 2007-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի փոքր դասարաններու աշակերտները, ինչպէս նաեւ քահանայից պատրաստութեան մասնաւոր դասարանի ուսանողներ, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ Հայ Առաքելական եկեղեցւոյ սպասաւորութեան խոնարհ աստիճանները ստացան:*

*Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հայրական բարձր տնօրինումով, Դպրեվանքի Տեսչութիւնը ձեռնադրութեան ներկայացուցած էր դպրութեան եւ կիսասարկաւազութեան յարմարագոյն երկու դասարանները:*

*Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հայրական բարձր տնօրինումով, Դպրեվանքի Տեսչութիւնը ձեռնադրութեան ներկայացուցած էր դպրութեան եւ կիսասարկաւազութեան յարմարագոյն երկու դասարանները:*



ԴՊՐԱՅ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԵՆՆ ՏԵՍԱՐԱՆ ՄԸ

Շարաթ 2 Յունիսին, Կիրակամուտի փամբերգութեան աւարտին, Մայր Խորանի բեմին առջեւ տեղի ունեցաւ Դպրաց ձեռնադրութիւնը, ձեռամբ Գերշ. Տ. Տիրայր Եպս. Փանոսեանի: Ձեռնադրիչ Սրբազանը Հայ Առաքելական եկեղեցւոյ խոնարհ կարգերուն առաջին չորս աստիճանները՝ Դունապանութիւնը, Ջահընկալութիւնը, Երդմնեցուցչութիւնը եւ Ընթերցողութիւնը շնորհելով, անոնց գլուխներէն խաչանիչ կտրեց մագի փունջեր, ի նշան եկեղեցւոյ ծառայութեան ընծայումի:

Ս. Պատարագը մատոյց Գերպ. Տ. Նորայր Ծ. Վրդ. Աշրղեան: «Հայր Մեր»էն առաջ տեղի ունեցաւ Դպրեվանքին աւագ դասարաններու սաներուն կիսասարկաւագական ձեռնադրութիւնը, զոր կատարեց ու այդ առիթով քարոզեց՝ Գերշ. Տ. Տիրայր Եպս. Փանոսեան:

Քրիստոսի լուծը խորհրդանշող մաքուր ու սուրբ ուրարները անոնց բազուկներուն վրայ գետեղելով, ընթերցուած աղօթքներուն ճամբով, ձեռնադ-

րիչ Սրբազանը յորդորեց զանոնք ըլլալ հաւատարիմ իրենց պաշտօնին, ու անարատութեամբ կատարել զայն: Այս առիթով Սրբազանը քարոզեց, եկեղեցւոյ ծառայութեան կոչուած անձին նկարագրային գիծերը մատնանշելով: Սրբազանը կարեւորութեամբ անդրադարձաւ մեր ժողովուրդէն ընտրուած նորահաս սերունդին, որ կոչուած է ծառայելու մեր եկեղեցւոյ ու ազգին: Ան շնորհաւորեց Վեհափառ Հայրապետը, Դպրեվանքի տեսչութիւնն ու յատկապէս ձեռնադրեալներուն ծնողները, վստահեցնելով որ նորոգ ձեռնադրեալները ապագայ յոյսը պիտի դառնան մեր եկեղեցւոյ ու ազգի սպասաւորութեան լծուած փառանգին:

Պատարագէն անմիջապէս ետք, նորընծայ դպիրներն ու կիսասարկաւագները Վեհարանին մէջ ծունկի եկան Վեհափառ Հայրապետին առջեւ, ստանալու Նորին Սրբութեան հայրական օրհնութիւնը: Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ»ով օրհնելէ ետք զանոնք,



ՁԵՌՆԱԳՐԻՉ ՍՐԲԱԶԱՆԸ ԿԻՍԱՍԱՐԿԱՎԱԳՈՒԹԵԱՆ ԲԱԶԿՈՒՐԱՐՆԵՐ ԿԸ ՅԱՆՁՆԵ ԸՆԾԱՅԵԱԼՆԵՐՈՒՆ



ՆՈՐԱԾԱՅ ԿԻՍԱՍԱՐԿԱԲԱԳԱՅ ԴԱՍԸ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՀԵՏ, ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՇՈՒՐՁ

*Թելադրեց գիտակից ինքնազարգացումով պատրաստուելի աւելի մեծ ծառայութեան:*

*Նորին Սուրբ Օծուիթիւնը իր բարձր գնահատանքը յայտնեց Դպրեվանքի*

*Տեսչութեան, ուսուցչական կազմին, ուսանողութեան ու անոնց ծնողներուն, որոնք քաջալեր կը հանդիսանան Դպրեվանքի սաներուն, անոնց կազմաւորման ընթացքին մէջ:*

## Բ.

### ՍԱՐԿԱԲԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ

*Կիրակի 17 Յունիս 2007-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Սարկաւազական ձեռնադրութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի Ընծայարանական սաներու ուսանողներ՝ Մանուէլ Կիս.Արկ. Օհանեանի, Գեորգ Կիս.Արկ Արապեանի, Փիլոն Կիս.Արկ. Ա.Ֆարեանի, Դաւիթ Կիս.Արկ. Գաւայեանի, Միքայէլ Կիս.Արկ. Թաշեանի*

*եւ քահանայից պատրաստութեան յատուկ դասընթացքի ուսանող՝ Յարութիւն Կիս.Արկ. Միսիրեանի:*

*Ս. Պատարագի ներկայ գտնուեցաւ եւ հանդիսապետեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս: Պատարագը մատուցեց, ձեռնադրութիւնը կատարեց եւ նորընծաներուն իր խրատական քարոզը տուաւ, Գերշ. Տ. Նարեկ Ս. Եպս. Ալեմէզգեան, իսկ խորտաւիլակն էր*



ՍԱՐԿԱԲԱԳԱՍ ԶԵՆՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՈՒՆ, ԱՇԽԱՐԴԷ ԳՐԱԺԱՐՄԱՆ ՍՐՏԱՈՒՄՉ ՊԱՅՑ

Հոգւ. Տ. Թորգոմ Աբղ. Տօնոյեան: Յընթացս պատարագի, ընծայեալները ծընկաչոք բարձրացան սուրբ խորան եւ անոնց անբիծ կեանքին մասին վկայութիւն տալով Խարտաւիլակ Հայր Սուրբը, ձեռնադրիչ Սրբազանին կողմէ հրահանգ տրուեցաւ, հրապարակաւ հրաժարիլ աշխարհէ, նուիրուելու համար Եկեղեցւոյ ու ազգի ծառայութեան: Ապա անոնք հերթաբար կոչուեցան Սարկաւազութեան կարգին, Սրբազան հօր ձեռքէն ստանալով սուրբ ուրարները:

Իր քարոզին մէջ ձեռնադրիչ Սրբազանը շնորհաւորական խօսքին աւերթեր, խրատական ուղղեց նորընծայ սարկաւազներուն, տէր ըլլալու իրենց ստացած կարգին, սուրբ պահելու Քրիստոսի լուծը խորհրդանշող ուրարները եւ յորդորեց հաւատարմութեան ու հնազանդութեան ոգիով պատրաստուիլ աւելի բարձր կոչման՝ քահանայութեան աստիճանին: Այս առիթով, ձեռնադրիչ Սրբազանը կոչ ուղղեց հայ ծնողներուն, որպէսզի վստահին իրենց զաւակները հոգեմտաւոր կազմաւորման օճախին՝ Դպրեվանքին, «ուրկէ դուրս պիտի գան,

մեր ազգի ու եկեղեցւոյ սպասաւորութեան նուիրուած մշակները»: Սրբազանը յիշեցուց հաւատացեալներուն, աղօթել այն երիտասարդ կեանքերուն համար, որոնք ընծայեալները սիրով կը մատուցեն Աստուծոյ, եւ ըսաւ, որ այս ընծայումները թող խթան հանդիսանան հայ ծնողներուն, Աստուծոյ ճամբուն մէջ հաստատելու իրենց զաւակները:

Աւարտին, հոգեւորականաց թափօրը ուղղուեցաւ Վեհարան, ուր Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց նորընծայ Սարկաւազները, եւ իր հայրական անդրանիկ օրհնութիւնը տուաւ անոնց: Այս առիթով ներկաներուն յղած իր պատգամին մէջ, Վեհափառ Հայրապետը յատկապէս խօսեցաւ Դպրեվանքի կազմաւորման ճամբով մեր հոգեմտաւոր արժէքներուն սերունդէ սերունդ փոխանցման մասին: Նորին Սրբութիւնը կարեւորութեամբ ընդգծեց հայ հոգեւորականին հաւատարմութեան զգացումը հանդէպ մեր հայրերու աւանդութեանց, եւ յորդորեց նորընծաները, իրենց կազմաւորման մէջ կարեւոր տեղ տալ հայրերու ուսուցումներուն, եւ Եկեղեցին





ՆՈՐԱԾԱՅ ՍԱՐԿԱԲԱԳՆԵՐ ՎԵՂԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ ՍՏԱՆԱԼԷ ԵՏՔ

*դարձնել ճառագայթող ներկայութիւն մեր ժողովուրդի կեանքին մէջ:*

*Վեհափառ Հայրապետը իր գնահատանքի ու օրհնութեան խօսքը ուղղեց նաեւ Դպրեվանքի տեսչութեան եւ ուսուցչական կազմին, ինչպէս նաեւ նորրժայ սարկաւազներու ծնողներուն, մաղթելով որ Աստուծոյ ծառայութեան ճամբուն համար ընտրուած նորահաս*

*սերունդը, արդարացնէ իր վրայ դրուած մեծ յոյսերը:*

*Դպրեվանքի սաներ ապա երգեցին, Հայրապետական Մաղթերգ «Ի վեհ բարձանց»ը, որմէ ետք Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ»ով օրհնեց նորընծաները: Ներկայ հաւատացեալները մօտեցան Վեհափառ Հայրապետին եւ Աջահամբոյրով ստացան Նորին Սրբութեան օրհնութիւնը:*

**Գ.**

**ԱԲԵՂԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ**

*Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Ս. Աթոռին Միաբանութեան ծառը անգամ մը եւս ծաղկեցաւ, երբ Դպրեվանքի շրջանաւարտից դասարանէն ընտրուած Բարեշնորհ Վարուժան Սարկաւազ Բէնդէգեան կուսակրօն քահա-*

*նայութեան իր ուխտը կատարեց առաջի Աստուծոյ եւ բարեպաշտ ժողովրդեան: Կուսակրօնութեան իր ուխտը կատարող նորընծային հետ, Դպրեվանքի ուսման ընթացքը եւ քահանայից պատրաստութեան շրջանը կ'աւարտեն նաեւ խումբ*



«ԿՈՉԷ ԶՎԱՐՈՒԺԱՆ, Ի ՍԱՐԿԱԲԱԳՈՒԹԵՆ Ի ՔԱՅԱՆԱՅՈՒԹԻՆ...»

մը սարկաւագներ, որոնք յառաջիկայ ամիսներուն, զանազան թեմերու մէջ պիտի ստանան իրենց քահանայական ձեռնադրութիւնն ու օծումը, տուեալ թեմի առաջնորդին ձեռամբ:

Կիրակի 10 Յունիս 2007-ին Անթիլ-իասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց, քահանայական ձեռնադրութիւնը կատարեց եւ քարոզեց Բերիոյ թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահան Եպս. Սարգիսեան: Խարտաւիճակութիւնը կատարեց Կոստանդուպոլսէն յատկապէս ժամանած Պատրիարքական Ս. Աթոռի Միաբանութեան անդամ՝ Հոգշ. Տ. Թաթուլ Աբդ. Անուշեան, որ անցնող երեք տարիներուն ընթացքին հետեւած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի ուսման:

Շարաթ, 9 Յունիսի երեկոյեան ժամը 4.30-ին, Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ կոչման արարողութիւնը, որու ընթացքին հաւատքի խոստովանութիւն կատարուեցաւ: Հայ Եկեղեցւոյ դաւա-



«ՕՐՂՆԵՍՅԻ, ՕԾՅԻ ԵՒ ՍՐԲԵՍՅԻ ԱՅ ԶԵՆՆ Տ. ՂԵՒՆԴ ՔԱՅԱՆԱՅԻ...»



ՆՈՐԱՆՏԱՅ ՀԱՅՐ ՂԵՒՆԴ ԱԲԵՂԱՆ ՎԵՂՎՈՒՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ ԱՍԱՆԱԼԷ ԵՏՔ

նանքին, ծէսին, աւանդութեանց ու մեր եկեղեցւոյ սրբազան հայրապետներու հաստատած կանոններուն հաւատարմութեան խոստում տալով, ընծայեալը հրապարակաւ նզովեց բոլոր՝ հին ու նոր ժամանակներու հերետիկոսները, եւ տարբեր ուսուցումներով Աստուծոյ եկեղեցւոյ հաւատացեալները մոլորեցնող չար ուսուցիչները: Ապա, հրապարակաւ ծնկաչոք ընթերցեց Կիլիկեան Ս. Աթոռին զինուորագրուելու իր ուխտը:

Կիրակի օր, Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. պատարագին հանդիսապետեց Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս: Յրնթացս պատարագի, ընծայեալը ծնրադրութեամբ բարձրացաւ Ս. Խորան, ուր աշխարհէ հրաժարման սրտառուչ պահէն ետք հրաւիրուեցաւ Քրիստոսի ծանր, սակայն քաղցր լուծը

առնելու իր ուսերուն:

Սրբալոյս միւռոնով օծման պահուն, ձեռնադրիչ Սրբազանը դրոշմեց ընծայեալին ճակատը, աջ ու ձախ ձեռքերը նոր անուն տալով անոր իբրեւ նորոգուած՝ Աստուծոյ ծառայութեան ընծայուած նոր մարդ: Անուանակոչութեան հոգեթով պահուն, Բարչ. Վարուժան Սարկաւազ վերանուանուեցաւ Տ. Ղեւոնդ Քահանայ: Ապա ան տուաւ իր անդրանիկ խաղաղութիւնը Մայր Տաճարին մէջ հաւաքուած հաւատացեալներուն: Սրբազանը իր քարոզին մէջ վեր առաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութիւնը, շեշտելով հաւատարմութիւնը մեր եկեղեցւոյ ու անոր դաւանած սկզբունքներուն նկատմամբ:

Ձեռնադրիչ Սրբազանը իր քարոզին մէջ, խրատական բաժնով իր խօսքը ուղղելով նորընծային, անդրադարձաւ



յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ճամբով Հայ Եկեղեցւոյ ծառայութեան լծուող ընտրեալ խումբին՝ Ս. Աթոռոյա Միաբանութեան առանձնայատկութիւններուն: Կիլիկեան Ս. Աթոռի Միաբանութեան բնորոշիչ գիծերը նշելով, Սրբազանը թելադրեց ըլլալ հաւատարիմ Աստուծոյ առջեւ իր կատարած ուխտին, ու Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի սկզբունքներուն:

Ողջոյնի պահուն Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ, ներկայ ամբողջ Միաբանութիւնը խորան բարձրացաւ համբոյրով ողջունելու նորընծային մուտքը Տիրոջ անդաստանէն ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանական Ուխտէն ներս:

Օծման ու անուանակոչութեան սրտառուչ պահէն ետք, նորընծան աւանդատան մէջ ստացաւ առաջին լուացումը, իր կնքահօր՝ Տիրար Պարգեւ Քերպապետանի ձեռամբ: «Հայր Մեր»էն ան-

միջապէս առաջ տեղի ունեցաւ Վեղարի Օրհնութիւն, որով կուսակրօնութեան իբրեւ նշան, միաբանական կնգուղը դրուեցաւ նորընծային գլխուն:

Վեհարանին մէջ նորընծան ծունկի եկաւ Վեհափառ Հայրապետին առջեւ եւ «Պահպանիչ»ով ստացաւ անոր հայրական օրհնութիւնը: Նորին Սրբութիւնը այս առիթով հայրական իր խօսքը ուղղեց ներկաներուն եւ յատկապէս նորընծայ Հայր Ղեւոնդին, բարձր պահելու Կիլիկեան Ս. Աթոռի Միաբանի իր կոչումը, եւ ծառայութեան ճամբով արժեւորելու իր դիմաց բացուող նոր կեանքը:

Յառաջիկայ 40 օրերու ընթացքին նորընծայ Հայր Ղեւոնդ պահեցողութեան, աղօթքի ու խոկումի պիտի նուիրուի Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Տիրոջ օրինակով պատրաստուելու իր աստուածահաճոյ առաքելութեան:



**ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ**

**ԴՊՐԵՎԱՆՔԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ  
ԵՒ ՎԿԱՅԱԿԱՆԱՅ ԲԱՇԽՈՒՄ**

Հինգշաբթի, 21 Յունիս 2007-ի երեկոյան ժամը 7:00ին, Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի 77-րդ ուսումնական տարեշրջանի փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Դպրեվանքի «Բրաբիոն Տումանեան» սրահին մէջ, Պիքֆայա, բարձր հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի: Հանդիսութեան ներկայ գտնուեցան Միաբան հայրեր, Դպրեվանքի ուսուցչական կազմը, Պուրճ Համուտի քաղաքապետ՝ Անդրանիկ Մսրլեան, հայկա-

կան վարժարաններու տնօրէններ, բարերարներ եւ ծնողներ:

Դպրեվանքի տեսչութեան կողմէ պատրաստուած յատուկ յայտագիրի հիման վրայ, կատարուեցաւ Աւետարանէն եւ «Նարեկ» աղօթամատեանէն ընթերցում, Բարչ. Դաւիթ Սրկ. Գամայեանի եւ Մուրատ Կիս.Սրկ. Չորպաճեանի կողմէ: Ապա, երգախառն կատարումով, Դպրեվանքի երգչախումբը ներկայացուց «Հայ Լեզուի տարուան» առիթով պատրաստուած խմբային արտասանութիւն մը:

Յանուն շրջանաւարտներուն, շնորհակալութեան խօսք ուղերձ ընթերցեց նորընծայ Հոգչ. Տ. Ղեւոնդ Աբղ. Բէնդէգեան՝ երախտագիտութիւն յայտնելով Վեհափառ Հայրապետին, տեսչութեան եւ ուսուցչական կազմին, որոնք դերակատար եղան իրենց հոգեմտաւոր կազմաւորման մէջ:

Տեսչական տեղեկագիրով Գերպ. Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան անդրադարձաւ անցնող տարեշրջանին կատարուած ուսումնական-կրթական աշխատանքին՝ յատկապէս յիշելով տեսչական եւ ուսուցչական կազմերուն գործունէութիւնը, ուսանողութեան եկեղեցական, կրթական եւ ընկերային աւօրեան եւ ի վերջոյ այս տարուան հունձքը: Ապա ան հրաւիրեց Վեհափառ Հայրապետը բաշխելու վկայականները եւ տալու իր հայրապետական պատգամը:



ՅՈՒՐԸ. Տ. ՂԵՒՈՆՂ ԱԲՂ. ԲԵՆԴԷԳԵԱՆ



ԴՊՐԵՎԱՆՔԻ ՏԵՍՈՒՉԸ ԽՕՍՔԻ ՊԱՅՐՈՒՆ

Արամ Ա. Կաթողիկոս կատարուած աշխատանքին իր գնահատանքը յայտնելով կարեւորութեամբ ընդգծեց Դպրեվանքին նկատմամբ խստապահանջ ըլլալու անհրաժեշտութիւնը: Ընթերցուած Աւետարանէն առնելով պատկերը, Նորին Սրբութիւնը Յիսուսի օգտագործած որթատունկի օրինակը առաւ,

Աւետարանի բառերով ըսելով, որ այն ճիւղերը որոնք պտուղ չեն տար պէտք է կտրուին, իսկ անոնք որոնք պտուղ կու տան, պէտք է յօտուին: «Մենք բոլոր մակարդակներու վրայ, ազգային-եկեղեցական, կառուցային ու հաստատութենական, կտրուելու եւ յօտուելու առողջ ընթացքին պէտք է հետեւինք»: Այն ճիւղերը որոնք պտուղ չեն տար պէտք է կտրել ու հեռացնել ծառէն, իսկ անոնք որոնք բարեբեր են, պէտք է յօտել եւ խնամել»: Ապա Նորին Սրբութիւնը որոմներու առակին պատկերը վերցնելով, ըսաւ, որ ցորենին աճումը ապահովելու համար, պէտք է որոմները հեռացնել անոր մօտէն. «Դպրեվանքը այդպէս եղաւ, ու պիտի շարունակէ՝ ցորենին խնամք տանիլ, եւ բոլոր տեսակի որոմները հեռացնել: Յորենը կեանք կու տայ, իսկ որոմը կը փճացնէ: Մենք ցորենը պիտի հաւաքենք, մեր եկեղեցոյ ու ազգի շտեմարանը հարստացնելով մէկի տեղ երեսուն, ութսուն ու հարիւր արդիւնք տուող ցորենի հատիկներով» շեշտեց Վեհափառ Հայրապետը: Իր խօսքին մէջ, Նորին Սրբութիւնը կարեւոր



ՎԵՅՎՓԱՐ ԳԱՅՐԱՊԵՏԸ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՕՍՔԸ ԿՈՒՂՈՒ ՆԵՐԿԱՆԵՐՈՒՆ



ԴՊՐԵՎԱՆՔԻ ԵՐԳՉԱՆՈՒՄԸ ԵԼՈՅԹԻ ՊԱՅՈՒՆ

րութեամբ վեր առաւ Գալուստ Կիւպէնկեան Հիմնարկութեան կատարած յարատեւ նպաստը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին: Արամ Ա. Կաթողիկոս յատուկ գնահատանքով յիշեց Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի ժրաջան տնօրէն Դոկտ. Զաւէն Եկաւեանի անունը, իբրեւ Կիլիկեան Կաթողիկոսութեան հարագատ գաւակի, որուն աչքերը յառած կը մնան Պիքֆայայի բարձունքին՝ Դպրեվանքին, իբրեւ յոյսի փարոս Սփիւռքա-

հայութեան: Ի վերջոյ, Վեհափառ Հայրապետը խօսքը ուղղելով շրջանաւարտներուն, յորդորեց որակին կարեւորութիւն տալ, բարձր պահելով այն ոգին, զոր Անթիլիասի Դպրեվանքը տուաւ իրենց, եւ թելադրեց տանիլ զայն իրենց հետ ծառայութեան տարբեր դաշտերուն մէջ:

Ապա Դպրեվանքի տեսչութիւնը ընդունելութեամբ մը պատուեց ներկայ հանդիսականները:



## ԴՊՐԵՎԱՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ Բ. ՈՒՍՈՒՅՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Շարաթ 16 Յունիս 2007-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի Տեսչութեան հրաւերով, Դպրեվանքի ընթերցասրահին մէջ տեղի ունեցաւ Դպրեվանքի ուսուցչական կազմին տարեկան Բ. ժողովը, քննարկելու համար անցնող տարեշրջանի ուսումնական կեանքը եւ առհասարակ վերատեսութեան ենթարկելու համար Դպրեվանքի կրթական ծրագիրը:

Դպրեվանքի Տեսչութիւնը նաեւ այս առիթով խնդրած էր Վեհափառ Հայրապետէն, ժողովի բացման առիթով իր

հայրական խօսքը ուղղել ուսուցչական կազմին, որպէս ուղեցոյց ժողովական նիստերուն: Բացման աղօթքէն ետք, Նորին Սրբութիւնը Դպրեվանքեան ծրագրին ու գործունէութեան հիմնական տարածքները մատնանշելով, անոնց մէջէն առանձնացուց լեզուագիտական, կրօնագիտական ու հայագիտական բնագաւառները: Բարձր գնահատելով ուսուցչին դերակատարութիւնը, Վեհափառ Հայրապետը խօսեցաւ հոգեմտաւոր կազմաւորման ընթացքին անոր ունեցած անշահախնդիր ու անսակարկ



ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԺՈՂՈՎԸ ԱՈՒՋՆՈՐԴՈՂ ՊԱՏԳԱՍ ԿՈՒՂԴԵ ՈՒՍՈՒՅՉԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ  
Չախէն աջ. ԴՊՐԵՎԱՆՔԻ ՏԵՍՈՒՉ ՇԱՅԷ Ծ. ՎՐԴ. ՓԱՆՈՍԵԱՆ,  
ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՒ ՓՈԽ-ՏԵՍՈՒՉ ՍԻՓԱՆ ՎՐԴ. ԹԷՉԷՃԵԱՆ





ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՆՂԱՄՆԵՐԵՆ ՍԱՍ ՍԸ, ԺՈՂՈՎԻ ԸՆԹԱՑՔԻՆ

նուիրաբերման մասին, շեշտելով որ իր դասալանդած նիւթէն անկախաբար, ուսուցիչը կոչուած է հոգեմտաւոր կազմաւորում տալ իրեն վստահուած աշակերտներուն: «Հոգեմտաւոր կազմաւորումը առաջին ու վերջին գանգ չունի բնաւ, եւ աշակերտին մէջ ապագայ մարդը, հայր, հոգեւորականը, ժողովուրդի սպասարկուն կերտողը ուսուցիչն է, իբրեւ մղիչ ոյժը աշակերտական բոլոր տեսակի դրական ձգտումներուն» ըսաւ Նորին Սրբութիւնը, աւելցնելով որ գրքունակ դասաւանդումէն աւելի, ոգիի ներշնչման վրայ պէտք է դնել շեշտը:

Այնուհետեւ ուսուցչական կազմը իրերայաջորդ նիստերով մօտէն քննարկեց ամբողջ տարեշրջանի ընթացքին կատարուած աշխատանքը, եւ առաւ համապատասխան որոշումներ: Դպրեւանքի Տեսուչ՝ Գերպ. Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեանի լուսարանական բացատրութիւնները առաջնորդեցին ներկաները, պատկերացում մը ունենալու ուսումնական կրթական այն ծրագրին

մասին, զոր տեսչութեան անդամներուն՝ Հոգչ. Տ. Սիփան Վրդ. Քէչէճեանի եւ Հոգչ. Տ. Մակար Արդ. Աշգարեանի հետ կը ծրագրուի գործադրութեան դնել յառաջիկայ տարի: Այս առիթով, ներկայ բոլոր ուսուցիչներուն յանձնուեցաւ Դպրեւանքի Տարեգիրք «Գլխածոր»ի նոր թիւը, ուր կ'արտացոլան աշակերտներու իմացական զարգացման աշխատութիւնները՝ կրօնական, պատմական, գրական, երաժշտական եւ այլ բնագաւառներու պատկանող գրութիւններով:

Ժողովական նիստերէն ետք, Դպրեւանքի աշակերտութիւնը, Պիքֆայայի այգիի ծառերուն տակ կէսօրուան ճաշով պատուեց ուսուցիչներն ու Միաբան Հայրերը, ընկերային մտերմիկ մթնոլորտի մէջ: Տարեշրջանի փակման ամէնէն քաղցր պահերէն մէկը եղաւ այս, երբ հոգեւորական թէ՛ աշխարհական ուսուցիչներ, Դպրեւանքի իրենց սիրելի աշակերտներուն հետ եղան, մոռնալով ամբողջ տարեշրջանի դասերու հեքքոտ աշխատանքն ու այլ դժուարութիւնները:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Կիրակի 24 Յունիս 2007-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յրեթացս Ս. եւ անմահ պատարագի տեղի ունեցաւ «Հայրապետական Մաղթանք»ի յատուկ արարողութիւն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի քաջառողջութեան ու բեղուն գահակալութեան համար, ընտրութեան եւ օծման 12-րդ տարեդարձին առիթով: Պատարագին ներկայ գտնուեցան Տէր-Ջօրէն, Հալէպէն, ու Սուրիոյ այլ շրջաններէ ազգայիններ, Սուրիոյ մէջ Հայաստանի նախկին դեսպան Լեւոն Սարգիսեան, ինչպէս նաեւ հոծ թիւով հաւա-

տացեալներ:

«Հայր Մեր»էն առաջ, Մայր Տաճարի ատենին մէջ, նախագահութեամբ Կաթողիկոսական Ընդհ. Փոխանորդ Գերշ. Տ. Արտաւազդ Արք. Թրթռեանի եւ մասնակցութեամբ միաբան հայրերու, տեղի ունեցաւ Հայրապետական Մաղթանքը: Աստուածաշունչէն քաղուած հատուածները՝ հովիւ եւ հօտ փոխ-յարբերութեան, ինչպէս նաեւ ճշմարիտ ու քաջ հովուի մասին, ընծայուած էին Վեհափառ Հայրապետին, իբրեւ արի հովուապետը իր հօտին:

«Հայրապետական Մաղթանք»ի կա-



«ՆՈՐՈՂԵԱԼ ՊԱՅԾԱՌԱՅՈՒ ԶԳՈՒԲԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՍԵՐՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ...»  
ՄԱՂԹԱՆՔ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆԻ ՀԱՆԴԻՍԱԲՈՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ՏԱԵԱՐԻՆ ՄԷՋ

նոնին մէջ, մեր հայրերուն կողմէ այս առթիւ խմբագրուած յատուկ աղօթքները, պատմական խորքով կը ներկայացնէին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անցեալի պատմութիւնը, իր ժողովուրդին հետ կրած արհաւիրացի կեանքը Յեղասպանութեան տարիներուն, եւ ապա անոր վերստին բարգաւաճումը Լիբանանի հիւրընկալ փերուն: Աղօթքին մէջ յատուկ կերպով յիշուած էր մեր ժողովուրդը, խնդրելով Աստուծոյ՝ զայն պահպանել օտարամուտ մոլորութիւններէն: Ի վերջոյ, այնտեղ արձանագրուած էր սրտաբուխ աղօթք մը՝ Ս. Աթողոս Գահակալին կենաց արեւջատութեան համար:

Ս. Պատարագը մատուցեց եւ այս առիթով քարոզեց Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Ջիֆթեան: Ան իր քարոզին մէջ անդրադարձաւ Յիսուսի ներկայացուցած Քաջ Հովուի կերպարին, անոր մէջ տեսնելով Վեհափառ Հայրապետին արի ու քաջ առաջնորդութիւնը Հայ Եկեղեց-

ւոյ ու մեր ժողովուրդի կեանքին մէջ:

Եկեղեցական արարողութենէն ետք, Կաթողիկոսարանի Դահլիճին մէջ Բարչ. Գէորգ Սրկ. Արապեան, յանուն Դպրեվանքի տեսչութեան, ուսանողութեան եւ ներկաներուն ուղերձ արտասանեց Վեհափառ Հայրապետին, մաղթելով Նորին Սրբութեան բեղուն գահակալութիւն ու քաջառողջութիւն:

Վեհափառ Հայրապետը սրտի խօսքով իր գնահատանքը յայտնեց Տաճարին թէ Դահլիճին մէջ արտայայտուած բարեմաղթութիւններուն եւ իր գոյութեան պատճառը նկատեց ծառայութիւնը՝ մեր Եկեղեցւոյ, ազգին ու հայրենիքին: Այս առիթով Դպրեվանքի երգչախումբը երգեց «Այսօր Քահանայապետ», եւ «Աղբիւր կենաց» շարականները, հովուապետական մականին ծաղկունք մաղթելով, ինչպէս նաեւ կատարեց աւանդական «Կիլիկիա»ն եւ «Ի վեհ բարձանց» մաղթերգները:





**ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ**

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ ԴԱՐԳԵԻԱՏՐԵՅ ՎԱՐԴԱՆԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ**

Կիրակի 24 Յունիս 2007-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. Պատարագէն ետք, Կաթողիկոսարանի դահլիճին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս պարգեւատրեց Յարութիւն եւ Սուրէն Վարդանեան եղբայրները, Տէր Զօրէն: Ներկայ էին Միարան Հայրեր, Ազգ. քաղաքական կազմակերպութեանց եւ մշակութային միութեանց ներկայացուցիչներ, Սուրբոյ մէջ Հայաստանի նախկին դեսպան Լեւոն Սարգիսեան, եւ

Սուրիայէն ու Լիբանանէն ժամանած հայորդիներ:

Կաթողիկոսարանի շրջափակին մէջ, քահանայից պատրաստութեան յատուկ յարկաբաժիններու կառուցման եւ կահաւորման բարերարութիւնը ստանձնած Վարդանեան ընտանիքը, անցնող տասնամեակներուն եւս, զանազան առիթներով սատար հանդիսացած էին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ազգօգուտ եւ ժողովրդանուէր առաքելութեան:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՄՊԵՏ»Ի ՇՔԱՆՇԱՆԸ ԿՐ ԶԵՏԵՂԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐՂԱՆԵԱՆԻ ԼԱՍՔԱԿԻՆ



«ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ»Ի ՇՔԱՆՇԱՆ ՆԱԵՒ ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԻՆ

*Վեհափառ Հայրապետը իր գնահատանքի խօսքը ուղղելով Տէր Զօրէն ժամանած Վարդանեան ընտանիքի անդամներուն, վեր առաւ անցնող տարիներուն*



ՇԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԸՆԹԵՐՅԷ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԿՈՆԴԱԿԸ ՁԱԽԷՆ աջ.- ԳԱԲՐԻԷԼ ՉԵՄՊԵՐՃԵԱՆ ԵՒ ԴԵՍՊԱՆ ԼԵՒՈՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ



ԲԱՐԵՐԱՐ ԱՍՈՒՆԵՐԸ ՎԵՅՎՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԿՈՂՔԻՆ ՊԱՐԳԵԿԱՏՐՈՒԲԵՆ ԵՏՔ

անոնց կատարած կարեւոր ներդրումները մեր ազգի կեանքին, յատկապէս Սուրիահայութեան կեանքէն ներս: Նորին Սրբութիւնը կարեւորութեամբ անդրադարձաւ, որ համայն Հայ Ժողովուրդի Ուխտավայր՝ Տէր Զօրի Նահատակաց Մատուռն ու Ապրիլեան Յուշարձանը, դարձեալ կը վայելեն Վարդանեան Եղբայրներուն հոգածութիւնը: Ի վերջոյ, Նորին Սրբութիւնը բարձրօրէն գնահատեց քահանայից պատրաս-

տութեան յարկաբաժիններու կառուցման եւ կահաւորման բարերարութեան ստանձնումը Վարդանեան եղբայրներուն կողմէ: Ապա, Բերիոյ Թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահան Եպս. Սարգիսեան ընթերցեց Հայրապետական Կոնդակը, որմէ ետք Վեհափառ Հայրապետը «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ»-ի շքանշանով պարգեւատրեց Յարութիւն եւ Սուրէն Վարդանեան եղբայրները:

**ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ**

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ  
ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ ԳՈՐԾԱԳԻՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ**

1-9 Յունիս 2007, Աղեքսանդրիոյ (Եգիպտոս) Աւետարանական Եկեղեցւոյ Կեդրոնատեղիին մէջ, տեղի ունեցաւ Քրիստոնեայ Ուսանողներու Համաշխարհային Համախմբումի (World Student Christian Federation) Գործադիր Վարչութեան ժողովը, որուն մասնակցեցաւ Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողական Միութենէն Օրդ. Գարլա Խիժոյեան, որպէս Գործադիր Վարչութեան անդամ եւ Միջին Արեւելքի ներկայացուցիչ:

Գործադիր Վարչութիւնը կը բաղկանայ 6 ցամաքամասեր ներկայացնող 18 անդամներէ եւ տարին մէկ անգամ կը

հանդիպի զնահատելու համար այս կարեւոր միջ-եկեղեցական կազմակերպութեան աշխատանքը:

Ժողովը քննարկեց զանազան շրջաններուն մէջ ծաւալող ծրագիրները եւ մասնաւոր ուշադրութիւն դարձուց 2008-ի Օգոստոսին Գանատայի մէջ կայանալիք ընդհանուր համաժողովի նախապատրաստութիւններուն:

Երբ ժողովականներ Միջին Արեւելքի ներկայ իրավիճակին անդրադարձան, Օրդ. Գարլա խօսեցաւ Հայ Եկեղեցւոյ երիտասարդութեան դիմագրաւած մարտահրաւէրներուն մասին:

**Ս. ԱԹՈՌԻՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԵՐԻՑԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ  
ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՍԵՄԻՆԱՐԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՉ**

25 Մայիսէն 8 Յունիս 2007, Նորթ Գարոլայնայի (Ամերիկայի Միացեալ Նահանգներ) Երիցական Եկեղեցւոյ Ընկերային Ծառայութեան Կեդրոնատեղիին մէջ, տեղի ունեցաւ «Լիբանանի Խնամատարութիւն» ծրագիրին նուիրուած սեմինար մը, որուն մասնակցեցաւ Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողական Միութենէն Օրդ. Աստղիկ Ճամպուլեան:

Սեմինարին կը մասնակցէին Լիբա-

նանի Արեւելեան Ուղղափառ, Ուղղափառ, Կաթոլիկ եւ Աւետարանական Եկեղեցիներէ ութը ներկայացուցիչներ, որոնք երկու շաբթուան ընթացքին աշխատանքային հանդիպումներով լուսարձակի տակ բերին Լիբանանի քաղաքա-ընկերային կացութիւնը եւ հետըհետէ առաւել աճող ընկերային կարիքներուն հասնելու գործնական կարելիութիւնները:

Սեմինարին մասնակցողները Լիբա-

նանի մէջ պիտի շարունակեն իրենց հանդիպումները եւ զիմեն տեղական նախաձեռնութիւններու:

«Լիբանանի Խնամատարութիւն» ծրրագիրին պատասխանատուն 8 Մարտ 2007-ին Անթրիպասի Մայրավանքը այցե-

լած էր եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի տնօրինութեամբ հանդիպում մը ունեցած Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեքմէզեանի հետ (Վարիչ Միջ-եկեղեցական Յարաբերութիւններու):

### ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԳԻ ՅՈՐԳԱՆԱՆԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

18-21 Յունիս 2007, Ամմանի մէջ, գումարուեցաւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի կազմակերպած «Եկեղեցիներ Ի Խնդիր Միջին Արեւելքի Մէջ Խաղաղութեան եւ Արդարութեան Հաստատման» միջազգային համագումարը:

Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համագումարին մասնակցեցան Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեքմէզեան (Վարիչ Միջ-եկեղեցական Յարաբերութիւններու) եւ Դոկտ. Նորա Պայրազտարեան-Գապագեան (Դասախօսուհի Լիբանանեան Համալսարանի Քաղաքական Գիտութիւններու): Նարեկ Սրբազան նաեւ մաս կազմեց համագումարի ղեկավար մարմինին:

Վեհափառ Հայրապետին հետ, անցնող ամիսներու ընթացքին մօտէն խորհրդակցած էին սոյն համագումարի կազմակերպիչները, եւ Նորին Սրբութիւնը շեշտած էր արդարութեան ու խաղաղութեան սերտ առնչութիւնը ընդգծելու անհրաժեշտութիւնը, իրաւական, աստուածաբանական, քաղաքական ու ընկերային իմաստով:

Համագումարին ներկայ գտնուեցան աշխարհի գանազան մասերէն ժամանած աւելի քան 130 անձեր: Գերշ. Տ. Աւագ Արք. Ասատուրեան ներկայացուց Իրաքի Եկեղեցիները եւ Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեան ներկայ գտնուեցաւ

որպէս անդամ Երուսաղէմի Եկեղեցիներու պատուիրակութեան:

Համագումարը յատկապէս լուսարձակի տակ բերաւ Պաղեստինեան Դատը եւ զուգահեռներ գծեց գանազան երկիրներու մարդկային իրաւունքներու ոտնահարման երեւոյթներուն հետ թէ՛ անցեալին եւ թէ՛ ներկայիս:

Այս շրջագիծէն ներս, 19 Յունիսին, Դոկտ. Նորա Պայրազտարեան ներկայացուց «Հայկական Յեղասպանութիւնը՝ Ուրացում եւ Անպատժելիութիւն» նիւթը եւ խօսեցաւ հայկական դառն փորձառութեան ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն մէջ ունեցած բանալի դերակատարութեան մասին:

Համագումարին վերջին օրը հիմը դրուեցաւ «Պաղեստինեան-Իսրայէլեան Միջ-եկեղեցական Ֆորում»ին, որուն մէջ գործօն մասնակցութիւն պիտի բերէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը:

Համագումարը աւարտեցաւ Յորդանան Գետի Յիսուսի մկրտութեան սրբավայրի այցելութեամբ: Գետեզրին, որպէս խաղաղութեան խորհրդանշան, կատարուեցաւ ձիթենիի ծառատնկում՝ ձեռամբ ԵՀԽ-ի Ընդհ. Քարտուղար Դոկտ. Սէմ Քոպիլայի, Մունիպ Եունան Լուտերական Եպիսկոպոսի, Արիս Սըրբազանի եւ Նարեկ Սրբազանի:

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ**

**ԱՄՍԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԱՌԻԹՈՎ  
ՀԱՍԿԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

Հարցում 1.- 18-20 Յունիս 2007, Ամմանի մէջ, գումարուեցաւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի կազմակերպած «Եկեղեցիներ Ի Խնդիր Միջին Արեւելի Մէջ Խաղաղութեան եւ Արդարութեան Հաստատման» միջազգային համագումարը: Հակիրճ կերպով կրնա՞ք ըսել թէ ինչն՞ու գումարուեցաւ ան, որո՞նք ներկայ գտնուեցան եւ ինչպիսի՞ որոշումներ առնուեցան:

Նարեկ Սրբազան.- *Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի անդամ Եկեղեցիներէ եւ բազմաթիւ քրիստոնէական կազմակերպութիւններէ աւելի քան 130 անձեր 3 օրեր համախմբուեցան Ամմանի մէջ: Խաղաղութեան նուիրուած միջազգային համագումարի մը շրջագիծէն ներս, նախ անոնք լուսարձակի տակ բերին 40 տարիներ առաջ, 1968-ին, Իսրայէլեան բռնազրաւման հետեւանքով Երուսաղէմի եւ Պաղեստինի մէջ տիրող կացութիւնը: Ապա, քննարկեցին ընդհանրապէս Միջին Արեւելքէն ներս եւ յատկապէս Պաղեստինի ու Իսրայէլի մէջ խաղաղութեան եւ արդարութեան վերահաստատման կարելիութիւններն ու Եկեղեցիներու կենսական դերակատարութիւնը: Կը փափաքիմ յայտնել թէ այս համագումարը քաղաքական հաւաք մը չէր. այլ, Եկեղեցիներու համախմբում մը որ կը միտէր հաւաքական աղօթքով, Աստուածաշունչի սերտողութեամբ, դասա-*

*խօսութիւններով եւ խմբական հանդիպումներով նախապատրաստել հիմնական շրջագիծը այն երկարատեւ եւ բարդ աշխատանքին, որուն պիտի լծուի ԵՀԽ-ը՝ «Պաղեստինեան-Իսրայէլեան Միջեկեղեցական Ֆորում» անունին տակ:*

*Ինչպէս գիտէք, այս օրերուն Միջին Արեւելքը կը դիմագրաւէ յարածուն քաղաքական տագնապներ. բաւարար է միայն նայիլ Իրաքի, Պաղեստինի եւ Լիբանանի իրավիճակներուն: Այս բոլորին դիմաց Եկեղեցիները անտարբեր չէին կրնար մնալ եւ ահաւասիկ այս համագումարով իրենց միացեալ ձայնը լսելի կը դարձնէին եւ իրենց խաղաղարար աւետարանական կոչումին յանձնառութիւնը կը վերանորոգէին:*

Հարցում 2.- Ձեր մասնագիտական գնահատումով ի՞նչ իրագործումներ արձանագրուեցան այս համագումարի ընթացքին: Որո՞նք են այս Ֆորումին յաջողութեան նախադրեալները:

Նորա Պայրագտարեան-Գապագեան.- *Հարկ է ըսել թէ այս առաջին անգամն է որ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը նոյնքան ուժականութեամբ ու հաստատ քայլերով կը մտնէ Պաղեստինեան Հարցի բեմը ու կ'առաջադրէ հարթել անոր լուծման ուղին:*

*Սոյն աշխատանքը արդիւնքն էր վերջին տասնամեակին՝ Եկեղեցիներու*

Համաշխարհային Խորհուրդի ծրագրերնե-  
րու թէ օրակարգերուն մէջ, Միջին Ա-  
րեւելքի տրուած յատուկ տեղին:

Միւս կողմէ, հարկ է նշել նաեւ թէ սոյն գիտաժողովը կը համախմբէր աշ-  
խարհի այլազան կողմերէ եկած պատ-  
ուիրակուածներ, որոնք գիտաժողովի  
ճամբով, յանձնառութեան առջեւ կը  
դրուէին գործելու եւ պայքարելու ի  
խնդիր Միջին Արեւելքի մէջ խաղաղու-  
թեան հաստատման: Գիտական եւ հաս-  
տատ քայլերով դուրս գալու առաջադ-  
րանքով, գիտաժողովը կը վերլուծէր  
պատմական այլազան փորձառութիւն-  
ներ, քաղելու՝ անցեալի թերադրականու-  
թիւնը՝ ներկայի նկատմամբ, յարելով նա-  
եւ եւ մասնաւորաբար դէպի ապագան:

Ճշդուած վերլուծելի թեմաներուն  
կարգին տեղ կը գտնէր նաեւ Հայկական  
Յեղասպանութիւնը: Սոյն վերլուծում-  
ները հիմք կը կազմէին Ֆորումի վերջ-  
նական բանաձեւի պատրաստութեան  
ծառայող քննարկումներուն ու բանա-  
վէճերուն: Այստեղ տեղին է յիշել, թէ  
Հայկական Յեղասպանութիւնը առիժի  
բաժինը ունեցաւ սոյն բանավէճերուն  
ընթացքին:

Բնականաբար, Ֆորումի յաջողու-  
թեան հիմնական նախադրեալը եկեղեցի-  
ներու ամբողջական զօրակցութիւնն ու  
աջակցութիւնն է սոյն աշխատանքին,  
ինչպէս նաեւ արդարութեան հիմնակէ-  
տի սկզբունքային որդեգրումը բոլոր  
յառաջիկայի բանաձեւումներուն ու  
քայլերուն ընթացքին:

Առանց արդարութեան հաստատ-  
ման՝ խաղաղութիւն կարելի չէ հաստա-  
տել եւ հա՛րկ է որ արդարութիւնը հան-  
դիսանայ Ֆորումի յառաջիկայի գործու-  
նէութեան հիմքը:

Հարցում 3.- Մեծի Տանն Կիլիկիոյ  
Կաթողիկոսութիւնը ի՞նչ դերակատարու-  
թիւն ունեցաւ այս համագումարի նախա-  
պատրաստութեան մէջ եւ համագումարի  
ընթացքին:

Նարեկ Արքագան.- Նկատի ունենա-  
լով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի  
միջազգային եւ միջ-եկեղեցական երկար  
տարիներու փորձառութիւնը, Եկեղեցի-  
ներու Համաշխարհային Խորհուրդի  
Ընդհ. Քարտուղար Դոկտ. Սէմ Քոպիա  
քանիցս խորհրդակցեցաւ Վեհափառ  
Հայրապետին հետ այս համագումարին  
գծով:

Երբ համագումարը արդէն իսկ ըն-  
թացքի մէջ դրուած էր, ԵՀԽ-ի Միջին Ա-  
րեւելքի պատասխանատուն յաճախա-  
կիօրէն Անթիլիասի մէջ Վեհափառ Հայ-  
րապետին խորհուրդներուն դիմեց եւ  
ըստ այնմ ձեւաւորեց վերջնական յայ-  
տագիրը: Աւելին, Վեհափառ Հայրապե-  
տը լիազօրեց զիս համագումարի նախա-  
պատրաստական աշխատանքներով մօ-  
տէն զբաղուելու եւ մեր Ս. Աթոռին  
մարդկային իրաւունքներու ձեռքբեր-  
ման երկար տարիներու փորձառու-  
թեամբ՝ անգամ մը եւս մեր գործօն զօ-  
րակցութիւնը դրսեւորելու Պաղեստի-  
նեան արդար դատին հանդէպ:

Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթո-  
ղիկոսութեան Դոկտ. Նորա Պայրազտա-  
րեան-Գապագեանին հետ մասնակցե-  
ցանք այս համագումարին: Դոկտ. Նորա  
դասախօսեց «Հայկական Յեղասպանու-  
թիւնը՝ Ուրացում եւ Անպատժելիութիւն»  
նիւթին շուրջ եւ ներկայացուց Հայկա-  
կան պահանջատիրութեան անժամանցե-  
լիութիւնն ու Հայ Դատի հետապնդման  
աշխատանքներուն մէջ Մեծի Տանն Կիլի-  
կիոյ Կաթողիկոսութեան ունեցած բա-  
նալի դերակատարութիւնը: Ես մաս  
կազմեցի համագումարի ղեկավար մար-  
մինին:

Համագումարին նաեւ ներկայ էին  
Գերշ. Տ. Աւագ Արք. Ասատուրեան, որ  
Իրաքի Եկեղեցիները ներկայացուց եւ  
Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեան՝ որպէս  
անդամ Երուսաղէմի Եկեղեցիներու պա-  
տուիրակութեան:

Հարցում 4.- Ինչպէս Արքագանը

նշեց, այս համագումարին դուք դասախօսեցիք Հայկական Յեղասպանութեան մասին: Կրնա՞ք ամփոփ կերպով ըսել թէ ի՞նչ կէտեր ընդգծեցիք եւ հայկական փորձառութիւնը ինչպէ՞ս ընդունուեցաւ ներկայ- ներում կողմէ:

Նորա Պայրագտարեան-Գապագեան.- *Դասախօսութիւնը կը կրէր The Armenian Genocide: Denial and Impunity խորագիրը ու կ'ընդգրկէր հիմնական չորս ենթաբաժանումներ: Առաջին բաժինը կ'անդրադառնար Յեղասպանութեան պատմական իրողութեան, անոր քաղաքական, ընկերային, démographique թէ մարդկային շրջագիծերուն մէջ:*

*Երկրորդ բաժինը կը կրէր «Ոյժ եւ Յիշողութիւն» “Power and Remembrance” խորագիրը, որ կուզար փաստարկելու թէ միջազգային բեմի վրայ երկար տարիներու ոյժերու դասաւորումը կը ծառայէր լուծութեան մատնելու 20րդ դարու առաջին Յեղասպանութիւնը:*

*«Հերքումը՝ իբրեւ Յեղասպանութեան վերջին հանգրուանը» “Denial, as the final stage of Genocide” խորագրով երրորդ բաժինը առաջին մասով (ենթաբաժանումով) կը քննարկէր ժխտումի քաղաքականութիւնը տեսական թէ անոր վատ արդիւնքներուն տեսանկիւնէն, ապա երկրորդ մասը (ենթաբաժանումը) կը ներկայացնէր Հայութեան նշած աշխարհացրիւ պայքարը, լուծութեան պատը ձեռքբերու եւ հասնելու այսօրուան իրականութեան:*

*Չորրորդ բաժինը՝ «Արդարութիւն ընդդէմ Անպատժելիութեան» “Justice Versus Impunity” խորագրով կը հաստատէր թէ 20րդ դարու բոլոր ոճիրները մարդկութեան դէմ, հետեւանք են Հայոց Յեղասպանութեան անպատժելիութեան: Այս բաժինը կը բացատրէր թէ՛ Եռկոս-լաւիոյ թէ՛ Ռուանտային զոյգ յատուկ ad hoc դատարաններու հաստատումէն ետք, Միջազգային Ոճրային Ատեանի հաստատումը, յառաջընթաց մը կազմե-*

*լով հանդերձ Միջազգային Օրէնքի աճին մէջ, իր 11 յօդուածի պատճառով չի կրնար արդարութիւն հասուցել 1.5 միլիոն Հայ նահատակներուն: Ապա վերլուծելով Արդարութեան այլազան բնորոշումներն ու մօտեցումները, կու գար հաստատելու թէ Հայ ժողովուրդը պահանջատէր կը մնայ Յեղասպանութեան ճանաչումին տեսակէտէ, պահանջելով Միջազգային Օրէնքով սահմանուած “Constitutive Recognition”, ճանաչում՝ որ վերահաստատէ Հայ ժողովուրդի պատմական իրաւունքները:*

*Դասախօսութիւնը վերջ գտաւ ցեղասպանութիւններու կանխարգիլման քաղաքականութեան առաջարկումով:*

*Դասախօսութեան աւարտին, մօտ մէկ ժամ տեւած հարցումներն ու վերլուծումները (որոնք մեծապէս կ'ապացուցեն նիւթի ստեղծած հետաքրքրութեան մասին), կազմակերպիչներու վկայութեամբ գրաւեց խմբային վերլուծումներու հիմնական առանցքներէն մին:*

*Հարցում 5.- Միջ-եկեղեցական շարժումէն ներս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ի՞նչ նպաստ բերած է Հայ Դատի, Պաղեստինեան Դատի եւ մարդկային իրաւունքներու հետապնդման ու Հայկական Յեղասպանութեան միջազգային ֆանաչման գծով:*

*Նարեկ Սրբազան.- Անշուշտ հարցազրոյցի մը սեղմ սահմաններուն մէջ կարելի չէ սպառիչ պատասխան մը տալ այս հարցումին: Յատուկ ուսումնասիրութեամբ մը միայն կրնայ արդարօրէն գնահատուիլ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երախտարժան երկարամեայ վաստակը այս մարզէն ներս:*

*Նախ ըսեմ, թէ ծանօթ իրողութիւն է որ մեր Ս. Աթոռին համար իր առաքելութեան բոլոր բնագաւառները (կրօնական, հոգեւոր, ազգային, մշակութային, կրթական, դաստիարակչական, ընկերային, քաղաքական) իրարու հետ սերտօ-*



րէն ընդելուզուած են եւ մենք համապարփակօրէն կ'ըմբռնենք այն սրբազան աշխատանքը որ Վեհափառ Հայրապետի լուսամիտ առաջնորդութեամբ կը կատարուի մեր Կաթողիկոսութեան ճամբով՝ ի շահ Հայ Եկեղեցւոյ, մեր ժողովուրդի բոլոր գաւակներուն եւ մեր հայրենիքին:

Իսկ երբ կը փորձեմ ուղղակիօրէն պատասխանել այս հարցումին, երեք ընդգծումներ անհրաժեշտ կը նկատեմ. -

Առաջին, որպէս մարդկային իրաւունքներու բռնարարման եւ Հայկական Յեղասպանութեան անմիջական եւ հաւաքական գոհը, մեր Ս. Աթոռը իր խղճին պարտքը կը նկատէ Հայ Դատի հետապնդումին մէջ ունենալ ղեկավարի դերակատարութիւն: Այս իրողութիւնը ընտրութեան հարց չէ. այլ, մեր արեան ձայնին բնական մղումը: Ինքնին բաւարար է հարց տալ թէ ինչո՞ւ 1930-էն ի վեր Անթիլիաս կը գտնուինք եւ ի՞նչ պէտք է ընենք Միտի մեր դարաւոր կայքը վերադառնալու համար: Մինչեւ այսօր անարդարութիւնը մեր մորթին վրայ զգալով մենք միշտ պաշտպան հանդիսացած ենք մեր զրկեալ պաղեստինցի եղբայրներուն եւ քոյրերուն, ինչպէս նաեւ մեր ձայնը բարձրացուցած աշխարհի որեւէ մէկ անկիւնը տեղի ունեցող անարդարութիւններուն դէմ:

Երկրորդ, մեր բոլոր երանաշնորհ Կաթողիկոսները եւ յատկապէս Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ամէ՛ն տեղ եւ ամէ՛ն առիթով արծարծած են Հայկական Յեղասպանութեան հարցը: Կը բաւականանամ յիշելով միայն 1984-ին, ԵՀԽ-ի Թ-րդ համաժողովէն անմիջապէս ետք, կարեւոր document-ի մը բազմալեզու հրապարակումը ԵՀԽ-ի կողմէ, Հայաստան՝ Շարունակուող Ողբերգութիւնը թելադրական վերտառութեամբ, որուն ենթահողի պատրաստութեան եւ խմբագրումին մէջ կարեւոր ներդրում ունեցած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: Տակաւին, առանց մանրամասնու-

թիւններու մէջ մտնելու, կարելի է հպանցիկ նշել Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի, հովուապետական այցելութիւններու, միջազգային լրատուական միջոցներու, գանազան երկիրներու դիւանագիտական օղակներու եւ Եկեղեցիներու Պետերու մակարդակներուն վրայ Վեհափառ Հայրապետին ունեցած եւ մինչեւ այսօր շարունակուող շփումները, որոնց արդիւնքները ինքնին ազաղակող են եւ մեր կողմէ շեփորման չեն կարօտիր:

Երրորդ, տակաւին նոր լոյս տեսաւ Վեհափառ Հայրապետին անգլերէն վերջին գիրքը, Ինքզինք Անդրանգնող Եկեղեցիի Մը Ի Խնդիր, ուր «Ճշմարտութիւն եւ Հաշտութիւն» գլխակարգումին տակ Հայկական Յեղասպանութիւնն ու մարդկային իրաւունքները Թ յօդուածներու նիւթ հայթայթած են եւ էջատակի նշումներով ցոյց կու տան Ռուստայի Յեղասպանութենէն մինչեւ Տէր Զօր, Միացեալ Ազգերու Կազմակերպութիւն եւ ԵՀԽ-ի Թ-րդ համաժողով պարագիծը, հաստատելու համար թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ներկայ է բնկերա-քաղաքական միջազգային թատերաբեմին վրայ:

Հարցում 6.- Մինչեւ հիմա կատարուածները հաստատել ետք տակաւին ի՞նչ ակնկալութիւններ կան Հայ Եկեղեցիէն ընդհանրապէս եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն մասնաւորաբար՝ Հայ Դատի հետապնդման բնագաւառէն ներս:

Նորա Պայրագտարեան-Գապագեան.- Ամէն ժամանակէ աւելի Եկեղեցին այսօր իր յատուկ տեղն ու դերը ունի մարդկային հասարակութիւնը յուզող բոլոր հարցերու գծով իր տեսակէտը արտայայտելու եւ լուծումը առաջադրելու եւ ինչու չէ բանեցնելու: Հայ Եկեղեցին պատմականօրէն խաղցած է այդ դերը ու կը շարունակէ մինչեւ այսօր:

Անժխտելի իրողութիւն է այսօր թէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վաշեյած միջազգային դիրքն ու Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ունեցած միջազգային կապերը իրենց ազդեցիկ դերը ունեցած են այլազան երկիրներու մօտ պետական մակարդակի տեսակէտ յառաջացնելու Հայկական Յեղասպանութեան ճանաչման իմաստով:

Եւրոպական կարգ մը երկիրներու պարագան բարացուցական է այդ իմաստով:

Այս ծիրէն ներս կարելի է յիշել նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայկական Յեղասպանութեան գծով կազմակերպած մասնագիտական խորհրդատուութիւնները որոնք՝ Միջազգային Օրէնքի լոյսին տակ Հայկական Յեղասպանութեան գիտական վերլուծման ընդմէջէն, կը ծա-

ռայեն քայլ մը անդին երթալու, հարցին իրաւական քննարկումին թէ պահանջատիրութեան տեսակէտէն:

Հարկ է նաեւ շեշտել այստեղ, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչները ամէնուրեք, աշխարհի չորս ծագերուն տեղի ունեցող միջազգային թէ շրջանային ժողովներու ընթացքին, եւ Արամ Ա. Վեհափառ Հայրապետի յատուկ թելադրութեամբ, միշտ ալ ջանակիրը հանդիսացած են Հայկական Յեղասպանութեան քարոզչութեան եւ տարածումին:

(Անշուշտ աւելորդ է այստեղ յիշել ներքին ճակատի վրայ կատարուած յարատեւ պայքարը, յատկապէս մեր ժողովուրդի պաշտպանութեան տեսակէտէն՝ ի դէմ Սպիտակ Ջարդի բազմերես վտանգներուն):



**ՔՐԻԱՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ**

**Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ  
ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆՅ ՏԱՐԵՇՐՉԱՆԸ ԵԶՐԱՓԱԿՈՒԵՑԱԽ**

Հինգշաբթի 14 Յունիս 2007-ի առա-  
ւօտուն, Լիբանանի Հայոց Թեմի Ս.  
Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, Հինգ-  
շաբթի օրերու հոգեւոր խորհրդածու-  
թիւններու տարեշրջանին եզրափա-  
կումը կատարուեցաւ: Մեծի Տանն Կի-  
լիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէա-  
կան Դաստիարակութեան Բաժանմուն-  
քին եւ Լիբանանի Հայոց Թեմի Կրօ-  
նական ժողովին կազմակերպութեամբ,  
անցնող տարեշրջանին հոգեւոր խոր-  
հրդածութիւններ եւ Աստուածաշունչի  
սերտողութիւններ տեղի ունեցաւ վերո-  
յիշեալ եկեղեցւոյ մէջ, ամէն Հինգշաբթի  
օրերուն:


Ամբողջ տարեշրջանին, աւելի քան

100 անձեր մասնակցեցան սոյն սերտո-  
ղութեանց, մօտէն ծանօթանալով Աստ-  
ուածաշունչին, մեր հայրերու ուսու-  
ցումներուն, եւ մեր եկեղեցւոյ աւան-  
դութիւններուն: Դասախօսութիւնները  
տրուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթո-  
ղիկոսութեան Միաբաններուն, եւ Լիբա-  
նանի Թեմի Քահանայից դասուն կողմէ  
տարեփակումը ունեցաւ:

Յառաջիկայ տարուան համար Քր-  
իստոնէական Դաստիարակութեան  
Բաժանմունքը, դարձեալ Լիբանանի  
Թեմին հետ գործակցութեամբ, նոր  
ծրագիրներ սկսած է մշակել, աւելի եւս  
տարածելու համար սոյն աշխատանքը:



**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՒԻՆՆԵՐ**



**For a Church Beyond its Walls**  
(Պատերէն անդին Եկեղեցւոյ մը ի խնդիր)

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Լաթակազմ 344 էջ

Անթրիլասի տպարանէն յոյս տեսաւ Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի սոյն հատորը անգլերէն լեզուով: Միջ-եկեղեցական շարժման երկար տարիներու ղեկավարի հարուստ փորձառութեամբ, նոր ժամանակներուն, ընկերութեան կեանքէն ներս Եկեղեցւոյ տեղին ու դերին մասին սպառիչ գաղափարներով լեցուն հատոր մըն է: Ամբողջ հատորին մէջ, Վեհափառ հեղինակը մնայուն կերպով կը յիշեցնէ բոլոր եկեղեցիներուն, թէ՛ «ինքնափակ ու իր պատերուն մէջ բանտուած եկեղեցի մը չի կրնար գոյատեւել: Ան պէտք է բացուի իր շրջապատին, եւ շինիչ երկխօսութեան մէջ մտնէ անոր հետ: Նման Եկեղեցի մը միայն կրնայ կենդանի աղբիւր դառնալ Աստուծոյ հզօրացնող, կերպարանափոխող եւ փրկարար շնորհքին»:


Սոյն հատորը նոր ուղիներ կը յայտնաբերէ Եկեղեցւոյ եկեղեցաբանական ինքնարտայայտութեան եւ միջ-եկեղեցական շարժման իր բերելիք մասնակցութեան, ինչպէս նաեւ միջ-կրօնական երկխօսութեան առումով:

Յառաջաբանին մէջ, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Ընդհ. Քարտուղար Դոկտ. Սամուէլ Քոպիա վեր կ'առնէ Վեհափառ Հայրապետին աստուածաբանական ու եկեղեցաբանական գաղափարներն ու հասկացողութիւնները, որոնք մարտահրաւէր կը կարդան բոլոր եկեղեցիներուն: Ան կ'ըսէ նաեւ թէ ժամանակակից բոլոր հարցերուն Նորին Սրբութիւնը իր նպաստը կը բերէ գրութեանց, դասախօսութիւններու, համագումարներու ճամբով, նոր ուղիներ բանալով միջ-կրօնական երկխօսութեան դիմաց:

ԳԼԱԶՈՐ ՏԱՐԵԳԻՐՔ ԴՊՐԵՎԱՆՈՒՅ

2005-2006

2005-2006 կրթական տարեշրջանի աւարտին, Դպրեվանքի Տեսչութեան հովանաւորութեամբ, եւ Դպրեվանքի Ուսանողութենէն ընտրուած յատուկ խմբագրական կազմի նախա-



ձեռնուլթեամբ, Անթիլիասի Տպարանէն լոյս տեսաւ «Գլխաճոր» ուսանողական տարեգիրքի նոր՝ ԺԳ. տարուան հատորը: 263 էջերէ բաղկացած տարեգիրքը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգեւոր դարբնոցին՝ Դպրեվանքի ուսանողութեան հոգեւոր ու իմացական կազմաւորման հայելին է:

Դպրեվանքի Տեսուչ Գերպ. Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան, տեսչական քաջալերանքի յառաջարանին մէջ կը գրէ. «Թէեւ անձնական աշխատանքով ճոխացած գրութիւններու գեղեցիկ փունջ մը կը կազմէ այս հատորը, սակայն, խմբային աշխատանքի ձեռնարկ մըն է «Գլխաճոր»ը: Անոր մէջ տեղ գտած գրութիւնները ոչ միայն կ'արտայայտեն մեր ուսանողներուն սեփական ձգտումներն ու մտածումները, այլեւ մեզի կը ներկայացնեն հարազատ պատկերը դպրեվանքեան ստեղծագործ մթնոլորտին ու աղօթանուէր կեանքին»:

Գլխաճորին մէջ կը յայտնաբերուին Եկեղեցւոյ, ազգին ու հայրենիքին նկատմամբ մեր նոր սերունդին ունեցած ազնուագոյն զգացումներն ու ապրումները:

«ԱՍՏՈՒԱԾ ՄԵՉԻ ՀԵՏ Է»

ԿՐՕՆՔԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Կրօնքի դասագիրքերու պատրաստութեան աշխատանքը որ անցնող տարի սկսած էր Անթիլիասի մէջ, ունեցաւ իր շարքին չորրորդ հատորը, որ կ'ընդգրկէ 12 տարեկան փոքրերու յատուկ Աստուածաշնչական եւ կրօնագիտական նիւթեր: Խմբագրութեան աշխատանքը կատարած է Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Զիֆթճեան:



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հրատարակչական մարմնին կողմէ հրատարակ դրող դասագիրքերու այս շարքը, քրիստոնէական կրօնի ընդհանուր գիտութեան կողքին կը ներառէ Հայ Եկեղեցւոյ պատմութեան, տօներու եւ աւանդութիւններու, ինչպէս նաեւ հայ սուրբերու մասին հիմնական տեղեկութիւններ:

Ըլլալով պատանեկան տարիքի դասագիրք, սոյն հրատարակութիւնը նաեւ ունի դասարանային խաղերու, վարժութիւններու եւ քարտէսագրական ու գծանկարային աշխատանքներու մասեր, աշակերտները ներգրաւելու նպատակով: Ամբողջ դասագիրքը լեցուն է իւրաքանչիւր դասին առնչուած գունաւոր պատկերներով, սրբանկարներով, սրբազան անօթներու պատկերներով, որոնք տպագրութեան համար գործածուած փայլուն թուղթին հետ, շքեղ հրատարակութիւն մը կը դնեն հայ աշակերտի ձեռքին մէջ:



«ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ»

Սուրբ պատարագի արարողութեան ժողովրդային մասնակցութիւնը քաջալերելու նպատակով պատրաստուած յատուկ հրատարակութիւն մըն է, ափի մէջ պարփակուող փոքրիկ այս գրքոյկը, շքեղ տպագրութեամբ: Պատարագիչ եկեղեցականին բոլոր շարժումները, եւ ընդհանրապէս պատարագի ընթացքին տեղի ունեցող երեւոյթները բացատրող էջատակի լուսարանութիւններ ունի փոքրածաւալ 112 էջերու մէջ ամփոփուած այս հատորը: Գրքոյկի վերջաւորութեան դրուած են նաեւ պատարագիչի հանդերձանքին ծիսագիտական եւ աստուածաբանական բացատրութիւնները:

Գրքոյկի խմբագրական ծանօթութեան մէջ գրուած է, թէ «Հայ Առաքելական Եկեղեցւոյ սուրբ Հայրապետներու գրչով մեզի հասած գրութիւններէն պոկուած են սոյն գրքոյկին մէջ Սուրբ եւ Անմահ Պատարագի մասին տրուած խորհրդանշական բացատրականները: Պատարագի մեկնութիւն մը չէ՛ այս, այլ՝ մեր հայրերուն կողմէ ժողովուրդին մասնակցութիւնը քաջալերելու ճիգ մը»:



ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՆՈՒՆՈՎ  
ՍԵՊՈՒՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԸ ՀԱՆԴԻՊԻ  
ԻՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԽԱԹԵՄԻԻ**

Շաբաթ 23 Յունիս 2007-ին, Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, հանդիպում մը ունեցաւ Իրանի Իսլամական Հանրապետութեան Ախսկին Ախսագահ Ն.Վ. Մոհամէտ Խաթեմիին հետ, եւ գրաւոր պատգամ մը փոխանցեց անոր:

Վեհափառ Հայրապետին պատուիրակը Ախսագահ Խաթեմիին յայտնեց յատկապէս, Նորին Սրբութեան յառաջիկայ առաջադրանքները կրօններու երկխօսութեան առնչութեամբ: Այս գծով, Սրբազանը խորհրդողակցեցաւ Ախսկին Ախսագահին հետ, միջ-կրօնական ծրագրի մը շուրջ:



**ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ**

**ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԲԱՐԵՐԱՐ ՄԸ 180 ՀԱՋԱՐ ՏՈՒԱՐ  
ԿԸ ՆՈՒԻՐԷ ԱԶՈՒՆԻԷԻ ԱԶԳ. ԲՈՒԺԱՐԱՆԻՆ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Տեղեկատուական Բաժանմունքը ուրախութեամբ կը հաղորդէ, որ Լիբանանահայ անանուն բարերար մը, 180 հազար տոլարի նուիրատուութեամբ սատար կը հանդիսանայ Ազունիէի Ազգային Բուժարանի մարդասիրական առաքելութեան:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս գնահատելով բարերարը, յատկապէս անոր նուիրաբերելու համեստ ոգին, շեշտեց եկեղեցւոյ առաքելութեան մէջ, մարդասիրական ծառայութեան կարեւորութիւնը, իբրեւ քրիստոնէական կեանքի առաքիլութիւններէն մէկը:

Ընդառաջելով անանուն բարերարի փափաքին, Ազգային Բուժարանէն ներս յարկաբաժին մը պիտի կոչուի «Ջոհրապ Թորիկեան» անունով:

Հանգուցեալ Թորիկեան մինչեւ իր մահը ծառայեց Բուժարանին, վերջին տարիներուն իբրեւ Ատենապետ խնամակալութեան: Բուժարանը ներկայիս մեր ժողովուրդի զաւակներուն բժշկական խնամքէն բացի, նաեւ ջրջանի տեղացի ժողովուրդին կը ծառայէ իբրեւ հիւանդանոց:

ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆ «ՀԱՅԱՍՏԱՆ»  
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ  
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԳԻ  
16-ՐԳ ՆԻՍՏԻՆ

Լեցաւ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան, Առաջորդ Թեհրանի Հայոց Թեմի:

Սրբազանը խօսք առնելով, Վեհափառ Հայրապետին ողջոյնները հաղոր-

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի 16-րդ Նիստի բացումը տեղի ունեցաւ Երեքշաբթի 19 Յունիս 2007-ին, Երեւանի մէջ, նախագահութեամբ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Ռոպերթ Զոհարեանի: Յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի, Հիմնադրամի սոյն նիստին ներկայ գտնը-





դեց Հանրապետության նախագահին և ներկայ ժողովականության: Ապա, ան ուրախությամբ յայտնեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը նախաձեռնած է «Նոր Կիլիկիա» գիւղի շինութեան Ղարաբաղի մէջ, որուն շինարարական աշխատանքներուն և միջազգային ներդրումին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Կիլիկեան Ս. Աթոռի հովանաւորութիւնը վայելող բոլոր թեմերը:

Հիմնադրամը այս տարի կ'ամբողջացնէ իր 15-ամեակը, և Հայաստանի նախագահին արժեւորումով, արդիւնաւէտ գործունէութիւն ծաւալած է անցնող տարիներուն: Ժողովի բացման ընթացքին, Նախագահ Քոչարեան պարգևատրեց 10 Սփիւռքահայ բարերարներ:


**ԱՐԱՄ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԳՈՒՆԵՑ  
ՍՖԷՅՐ ՊԱՏՐԻԱՐԷԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ**

Ուրբաթ 15 Յունիս 2007-ի գիշեր Պիքֆայայի Մայրավանքին մէջ Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելութիւնը մարոնիթ եկեղեցւոյ Հոգետր Պետ Սֆէյր Պատրիարքին անձնական ներկայացուցիչ Բոլան Ապու ժառուէ Արքեպիսկոպոսին: Պատրիարքական փոխանորդը Վեհափառ Հայրապետին փոխանցեց Սֆէյր Պատրիարքին կարգ մը մտահոգութիւնները ու մտածումները ընդհանրապէս Միջին Արեւելքին ու մասնաւորաբար Լիբանանի առնչուած: Վեհափառ Հայրապետը իր կարգին պարզեց իր տեսակէտները ու պատկերացումները Լիբանանը դուրս բերելու իր ներկայ անորոշ ու լարուած վիճակէն: Վեհափառ Հայրապետը յատկապէս շեշտեց Ազգային Միասնականութեան Կառավարութիւն մը կազմելու, երկխօսութեան ճամբով հարցերուն լուծումներ որոնելու և ապա՝ բոլորին կողմէ ընդունելի նոր նախագահի մը անձին շուրջ համաձայնելու անհրաժեշտութիւնը:

Նոյն օրը Վեհափառ Հայրապետը ընդունեց նաև Կենտրոնորտային նախարարութեան ընդհ. տնօրէն Տոքթ. Պերճ Հաճեանի և նախկին նախարար Արթուր Նազարեանի այցելութիւնը:

**ԳԵՐՄԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ  
ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՊԱՏՈՒԻՐԱ-  
ԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՅՅԵԼԵՑ  
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Գերման բոլոր եկեղեցիները՝ Կաթոլիկ և Բողոքական, ներկայացնող պատուիրակութիւն մը 25 Յունիս 2007-ին, այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Միջին Արեւելք կատարած իր այցելութեան ծիրէն ներս:



Սոյն այցելութեան նպատակն էր մօտէն ծանօթանալ ընդհանրապէս Միջին Արեւելքի դիմագրաւած մարտահրաւերներուն ու տագնապներուն ու յատկապէս քրիստոնէական ներկայութեան Միջին Արեւելքէն ներս:



Աւելի քան ժամ մը տեւած հանդիպման ընթացքին, խօսակցութեան միջոցով հարձան միջ-կրօնական և քաղաքական մակարդակներու վրայ զարգացումները:

Վեհափառ Հայրապետը այս գծով համապարփակ ծանօթութիւն տուաւ Զրիստոնեայ-իսլամ տիպոկի ցարդ ունեցած զարգացումներուն մասին, եւ շեշտեց Երոսկական եկեղեցիներուն հետ գործակցութիւնը ամրացնելու կարելիութիւնը:

Լիբանանի մէջ անոնք հանդիպումներ ունեցան Սարոնիթ Եկեղեցւոյ պետ Սֆէյր պատրիարքին, եւ Վեհափառ Հայրապետին հետ: Անոնք Լիբանանէն ետք այցելեցին նաեւ Եգիպտոս, Սուրիա եւ Երուսաղէմ:

**ՔՐԻՍՏՈՆԵԱՅ-ԻՍԼԱՄ ՏԻԱԼՈՎԻ  
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ  
ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ  
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄՕՏ**

Երկուշաբթի 25 Յունիս 2007-ին, Անթիլիասի մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Լիբանանի Զրիստոնեայ-իսլամ տիպոկի յանձնախումբի համանախագահներ՝ Դոկտ Մուհամմէտ Սէմմէքը եւ Հարէս Ծեհապը: Հանդիպման ներկայ էր նաեւ սոյն յանձնախումբին մէջ հայ համայնքի ներկայացուցիչ՝ Դոկտ. Ժան Սալմանեան:

Սոյն այցելութեան նպատակն էր խորհրդակցիլ երկիրը ներկայ վիճակէն դուրս բերելու միջոցներուն մասին, եւ թէ՛ Զրիստոնեայ-իսլամ երկխօսութեան յանձնախումբը ի՞նչ միջոցներու կրնայ ձեռնարկել, նպաստելու համար այդ աշխատանքին:

Այս ծիրէն ներս, հանդիպման ընթացքին արծարծուեցաւ հոգեւոր պետերու հանդիպման մը կարելիութեան հարցը, ինչպէս նաեւ հոգեւոր ու քաղաքական պատասխանատուներու դռնփակ հանդիպման մը ծրագիրը: Նորին Արքեպիսկոպոս թելադրեց իրապաշտ մօտեցում որդեգրել, հեռու մնալ նոր զգայնութիւններ յառաջացնելու վտանգներէ եւ թելադրեց յանձնախումբի ան-

դամներուն, հանդիպումներ կազմակերպել քաղաքական ազդեցիկ դէմքերու հետ, հետեւեալ յստակ գործընթացով:-

ա) Նոր կառավարութեան կազմութիւն, մասնակցութեամբ բոլոր կողմերուն: Այս ծիրէն ներս Վեհափառ Հայրապետը ըսաւ որ թերեւս կանխահաս պիտի ըլլայ ազգային միասնական կառավարութեան մը կազմութիւնը, հասկնալի պատճառներով, սակայն կարելոր է կազմել կառավարութիւն մը, որուն մասնակից դառնան բոլոր համայնքները ու քաղաքական կողմերը:

բ) Նոր կառավարութեան հովանաւորութեան տակ ազգային երկխօսութեան վերսկսումը:

գ) Նոր նախագահի մը ընտրութեան շուրջ համաձայնութիւն: Անձի մը շուրջ, որ կողմի մը ներկայացուցիչ չըլլայ, այլ ամբողջ Լիբանանը ներկայացնող անձ մը:

**ԼԻԲԱՆԱՆԻ ԱՐԱԲ ԱԽԵՏԱՐԱՆԱԿԱՆ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԵՏԸ ԱՅՑԵԼԵՑ  
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Երկուշաբթի 25 Յունիս 2007-ի երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Լիբանանի Արաբ Աւետարանական Եկեղեցւոյ պետը՝ Դոկտ. Հապիպ Պատր: Ան միաժամանակ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի գործադիր վարչութեան անդամ է:

Սոյն այցելութեան նպատակն էր Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի վերակազմութիւնը, եւ անոր առաքելութեան վերակազմակերպումը շրջանէն ներս: Հապիպ Պատր եկած էր Վեհափառ Հայրապետին աջակցութիւնը խնդրելու, այս գծով կատարուելիք յառաջիկայ ծրագրին համար: Նորին Արքեպիսկոպոս անհրաժեշտ թելադրութիւնները կատարեց շեշտելով յատկապէս Խորհուրդ-Եկեղեցի փոխ-յարաբերու-

թիւնը անմիջական ու հետեւողական դարձնելու հրամայականը: Վեհափառ Հայրապետը նաեւ ըսաւ, որ Խորհուրդին համար պէտք է այնպիսի ծրագիրներ մշակել, որոնք աղերս ունենան Եկեղեցւոյ առօրեայ կեանքին ու ծառայութեան հետ: Վերջապէս, Արամ Ա. Կաթողիկոս կարեւորութեամբ շեշտեց, քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան դերակատարութիւնը ընդգծելու անհրաժեշտութիւնը:

Այս հարցերուն մօտէն քննարկման համար Վեհափառ Հայրապետին մօտ յատուկ նիստ մը պիտի գումարուի, մասնակցութեամբ այլ եկեղեցիներու ներկայացուցիչներներուն:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Խորհուրդի հիմնադիր անդամներէն է, եւ իր ներկայացուցիչներուն ճամբով իր մասնակցութիւնը կը բերէ Միջին Արեւելքի եկեղեցիներու Խորհուրդի գործունէութեան:



## ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ԿԻՐԱԿԻ, 3 ՅՈՒՆԻՍ 2007: Ա. ԶԿՆԻ ՀՈԳ.:  
ՍԿԻԶԲՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԻՐԱԿԷՒՅ ԵՒ  
ՅԻՇԱՏԱԿ ԵՂԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻՆ:

*Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերպ. Տ. Նորայր Ծ. Վրդ. Աշրգեան: Կիսասարկաւազական ձեռնադրութիւնը կատարեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Գերշ. Տ. Տիրայր Եպս. Փանոսեան:*

ԿԻՐԱԿԻ, 10 ՅՈՒՆԻՍ 2007: Բ. ԶԿՆԻ  
ՀՈԳ.: ՏՕՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս.  
ԷԶՄԻԱԾՆԻ:

*Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց, արեղայական ձեռնադրութիւնն ու օծումը կատարեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Բերիոյ Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահան Եպս. Սարգիսեան:*

ԿԻՐԱԿԻ, 17 ՅՈՒՆԻՍ 2007: Գ. ԶԿՆԻ  
ՀՈԳ.:

*Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց, սարկաւազական ձեռնադրութիւնը կատարեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեքմէզեան:*

ԿԻՐԱԿԻ, 24 ՅՈՒՆԻՍ 2007: Դ. ԶԿՆԻ  
ՀՈԳ.:

*Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Զիֆթճեան: Յրնթացս Ս. եւ Անմահ Պատարագի, տեղի ունեցաւ Մաղթանք Հայրապետական Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արժանընտիր Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի գահակալութեան, ընտրութեան եւ օծման յարգ տարեդարձին առթիւ:*

